



4-2

Հ

ՄԱՏԵՎԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Վ Ե Խ Դ Ե Վ Ց

---

ՅԱՏԵՎ ԲՄԵՍԵՎԵՐ

بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

وَاللَّهُمَّ إِنِّي أَعُوذُ بِكَ مِنْ أَنْ يَأْتِيَنِي

مَا لَمْ يَرَهُ عَيْنُي وَمَا لَمْ يَعْلَمْهُ قَلْبُ

28(2)  
Հ-85

# ՅԱՎԱՀԱՐԵՐԻ

ԽՄԱՍՏՈՒՐԻ

ԱՐՁԱԿԱՑՈՑ

ԱՐՏԵՎԵՐԺԻՆԹԻՒՐ




ԽԱՅԵՐԵՑԻԿ

ԽՏՊԱՐԱՆԻ ՄՐԱՑԱՅԻ ԱՐՁԱԿԱՑՈՑ

ՅԱՄ 1833 ԱՐՁԱ

104

1178



~~4947~~

## ՅԱՌԱՋԱՐԱՐՈՒՅ

Օ ՅԱՀԱՆԱԿԻ ԽՄԱՍՏԱՏԵՐ ՀԱՅՐԱՎԵՄԻ ԱՌԱՋԱ-  
ԳԵՍ ՊՐԱՎԱԴԱՎՈՒՄ և զՃԱՐՏԱՐ շարադրածո հա-  
մայն 'ի մի գիրս յայս բովանդակելով, բաւական հա-  
մարիմք զմատենագրին ներբող վկայութեք համագ-  
դեաց և օտար ազգաց, նախնեաց և արդեաց այլուր  
հռչակեալ: 'Ա, ոքօք զմատենագրին պայծառացու-  
ցեալ զանունն, իսկ աստ զվաստակս նորին մնայ մեզ  
յաւեժացուցանել, տպագրութեն օճանաւ անկու-  
րուստ աւանդելով յետնոց՝ որ ինչ առ 'ի նմանէ  
մեզ հասին, ոչ միայն ձառագրութենքն և կանոնք՝  
այլ և որ ինչ զկարգաց և զպաշտամանց եկեղեցւոյ և  
այլ հատուկտիր բանք նորա պահին, բաց 'ի շարա-  
կանացն :

Օ այս ամենայն 'ի հարազատ գըչագրաց ըստ ան-  
երկրայելի հաւատարմութես մերում, որ վկայեալն  
է 'ի համայնից և անդրժելի 'ի զբարտող բամբասա-  
նաց անծանօթից ումանց հեռաբնակ պարսաւադի-  
տաց, ընծայեմք հնասիրացն 'ի պէտս և 'ի զբօսանս:  
Խըր ոչ եթե զամենայն, որ ինչ 'ի սմա կանոնք աւան-  
դին, կամելով նորոգել. քանզի հաւատք անփոփոխ՝,  
իսկ կանոնք ըստ պատշաճի ժամանակին փոփոխելիք  
առ 'ի հարցն սրբոց առ ամենայն ազգս քրիստոնէից  
աւանդեցան. ընդ այս ոչ ոք տարակուսեսցի 'ի հմուտ  
եղելոցն եկեղեցական պատմութեան: Ա. որպէս  
օրինաւոր իշխանութեն եեթ անկ է առնելյայսոսիկ

փոփոխումն, նոյնալես և որք ինքնահրաման տնօրինեն  
զսոսա՝ յամենայն ժամանակի բամբասելիք եղեն :

Այտենաբանութեան երանելոյ հօրս, և Ճառիցն  
ընդդեմ Պաւղիկեանց և Երեւութականաց, միակ  
գտանի օրինակ՝ այլբնտիր յոյժ՝ ի բանիբուն գըշէ եր-  
կասիրեալ։ Իստ յեղակարծ իմն դիպուածոյ զար-  
մանագործ ժամանակին՝ գըշագիրս այս օրինակ բա-  
ժանեալ յերկուս, մինչեւ ի ճառն ընդդեմ Երեւու-  
թականաց այսր՝ ի ձեռս մեր եհաս, իսկ ճառն այն  
՚ի նորին գըշէ, ՚ի նոյն գիրս, ՚ի նոյն ձև և յորակ  
թղթոյ նմանագիր գրեալ, և նովին ոճով մակա-  
գրեալ շարայարելով զշետ մերոյս հատուածոյ։ Կորին  
չնդրէմ Երեւութականաց յածեալառ օտար ազգս, և ՚ի  
մայրաքաղաքին գաղղիացւոց՝ ի Լուտետիա քաղաքի  
յարքունական մատենադարանին սկահի։ Հորմէ ա-  
մենայն զգուշութիւն, և երրակի բաղդատութիւն յայլ-  
եայլ անձանց առեալ զգաղափարն, ըստ նմին օրինա-  
կի զտպագրութիւն զայս արարաք։ Դարձեալ և զկա-  
նոնան և զայն ամենայն նովին զգուշութիւն՝ ի վաւե-  
րական գրչագրաց մատենադարանիս ածաք՝ ի տիպ  
՚ի վայելումն համոդիպողաց մատենիս :

Օ հետ այսոցիկ յաւելումք և զվարդապետին սորա  
զմակոգորսիր Առթենաւորի զխարազնազգեաց Ճըգ-  
նաւորի զերեսին Ճառման, որ ընդդեմ Վայրագումե-  
ցւոյն, որ ՚ի որ Խոան անձընկալ, և որ ՚ի որ ՎՃա-  
ծինն։ Եւ ապա զՎամաւենեաց Ճառն զմիւսոյ աշա-  
կերտի սորա, զաշակերտակցի Խմաստասիրիս զՎա-  
հակայ երրորդի, որ զշետ Խորայելի կաթողիկոսի  
յառաջքան վնախորդ Խմաստասիրիս եկաց կաթո-  
ղիկոս :

# ՅԵՐԱԿ ԳՐՈՅԱ

- Ա. **Պ**ատմութիւն վասն իւր ըստ առ աջնումն կենցաղին ու սումնասիրութե միանգամայն և անծսիրութեն, և յաղաղս այ առ նա իննամակալուեն, և առատապարզե ուղիսից և շնորհաց հոգւոյն սորա . և ընդ ոյր ուրուք ձեռն պատրաստեաց ած նմա զայնպիսի դգաստութիւն սնունդ՝ ի յարուեստսիրութեն : Եւ թէ զիարդ հաւանեալ ապա այնոքիւք տալ զինքն ի կարդ քահանայութեն և առաջնորդութեն : Եւ թէ որպէս ժամանակաց հոլովումն զանազանս գործեաց, գեղեցիկ պատօահմանցն պատուականութեան բան բան բան առ այս առաքինութիւն . և եթէ անդ ձեռնարկել հնարեք զնմանութիւն ան շարչարանացն, և վարդապետուին արարշադործ տեսչութեն :
- Բ. **Ա**մբաստանուի զնոցանէ, որք այլաձեապէս և ոչ միուլ օրինակաւ կատարեն զկանոնս և զկրօնս և զկարգեալ զպաշտամուննս :
- Գ. **Թ**թէ զսեղանն տէրունական և զաւաղանն լուսաւորութեն քարեղին և ոչ փայտեղին պարտ է հաստատել . և մի հակառակել, և զառաշնոցն արարեալ այսպիսի ինչ յօրինակ առնուլ . որ մանաւանդ ոչ կամօք, այլ նորընծայ ժամանակին պատշաճութիւն զայն բերեք :
- Դ. **Վ**ասն իւղոյն սրբոյ թէ յերիս բաժանի, և զանազանաբար կատարի նոցա առ միմեանս գործառնութիւն :
- Ե. **Թ**թէ զայնոսիկ՝ որ մլրտինն՝ նախ յերախայութիւն կարդ պարտ է ածել, և ապա մլրտել :
- Զ. **Ս**աստ հանդերձ բազում ցասմամբ ի վերայ քահանայից, որ ի պղերգութենէ իւրեանց զփեսայ և զշարօն ոչ տանին յեկեղեցիս, և ոչ ինքեանք պատիեն, այլ յիւրաքանչիւր զրունս և ընդ ձեռն աշխարհականաց զայս առնեն :

1 Յօրինակին եղծ և անընթեռնելի ՀՀՀ մի .... պատուականութիւն ....  
Են նօտրագիր տառքս ու վեհակ .... սպառութիւն .... ու աշխարհականութիւն ....  
ի յարւ եռամիրութեան .... հաւա

- Ե. Յաղագս երկրորդանաց՝ և թէ յայտնապէս և մի գաղտաբար զուդեսցին :
- Ը. Թէ յայտնութեն օր արժան է կատարել զջրոյն օրհնութի, ձէթ արկանելով՝ ի նա սաղմոսել, և աւետարանը ընթեռնուլ. և յութօրեայսն նորին զծննդեան աւետարանն և զաւետեացն և զմլրտութեն հաւասարապէս ընթեռնուլ :
- Թ. Թէ պարտ է ՚ի նը քառասներորդս պահոցն պատարագ մատուցանել շաբաթու և կիւրակէի : Յորում և ըզիորհուրդ միաշաբաթուն յայտնէ գովասանական բանիւ :
- Ժ. Թէ արժան է կիւրակէի աւուր ցայդապաշտօն առնել :
- ԺԱ. Թէ զի՞նչ խորհուրդ ունիցի շաբաթ օր, և որպիսի կարգաւ պարտ է պատուել զնա:
- ԺԲ. Ընդգիմաբանութի առ այնոսիկ, որ արգելուն յօրհնեւլոյ զնաց և յօծանելոյ խոզովն՝ որ կոչի միւռովին :
- ԺԳ. Եթէ զՍուրբ ածդդ յՈրդի միայն ասացեալ է և ոչ ևս ՚ի Հայր և ՚ի Հոգի. յաղագս օրոյ և զԽաչեցարն զհետքերել արժան է զկնի միոյ միոյ ասութեան : Յորում և թէ ընդէր յառաւօտինս և յերեկոյինս պաշտամունս ՚ի Վերջն անցուցանեն զՍուրբ ածդդ . իսկ յորում աւուր պատարագ մատուի, ՚ի սկզբանն նուագեն :
- ԺԴ. Թէ զի՞նչ խորհուրդ ունիցի առաւօտին պաշտամանն սաղմուքն և աղօմքն և կարգադրուի նոցին :
- ԺԵ. Թէ զի՞նչ խորհուրդ և յերեկորին պաշտամանն գտանիցի ՚ի սաղմոսս և ՚ի կցուրդս և յազօթս և ՚ի նոցին կարգադրութիս :
- ԺԶ. Յաղագս բովանդակուե ասացելոց ճառիցս ասացեալ բանս ինչ սակաւուք :
- ԺԷ. Երկրորդութի բանից, զոր առնէ ընդ ժողովեալ համօքէն եպիսկոպոսունս աշխարհիս Հայոց, յաղագս թէ զասացելոց ճառիցդ բանս օգտութեն ընդ կանոնական զլիսովք համառօտել :
- ԺԸ. Նոյն ինքն կանոնքն, զոր միաբանաբար կարգեցին, միանգամայն երեսուն և երկու զլուխս :

ԵՐԵՎԵԼԻՈՅ ՏԵՐՄԵ

# ՅԱՌԵՒՄԻ ՓԻՇԱԽՎՅԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՅԱՌԵՄԻ ԿԵՆՑԱԴԻ ԻՒՐ ԵՒ Ի ԳԱՎԱ ՅԱԹՈՒ  
ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԵՒ ՀԱՍՏԱՏԵԼ՝<sup>1</sup> ԲԱՅՄԱՊԱՏԻԿ ԵՒ ԶԱՆԱՉԱՆ  
ԿԱՐԳՍ ԵՒ ԿՐՈՆՍ ԵԿԵՂԵՑԻՈՑ

Ա. ԱՄԲԵՐՈՂԱՑՆ նախատիպ մեծն Յովլը ա-  
սէր երբեմն յիւրում բանան , նեղեալ՝ ի  
փորձանացն արկածից , “ Վլառնէր զիս ըստ աւուրջն  
առաջնոց , միանդամայն՝ ի բաց եղեալ զքաջողջուի ,  
զմնչաւէտուի և զբազմորդուի : Օ նոյնս և ես հան  
դերձ հառաջմամբ բարբառիմ՝ ի գիպուածոց աստի  
վտանգեալ . ովլ զիս անցելոցն առաջի դնէր ամանա-  
կաց , վերստին զմանկական տիոցն զգեցուցանելով  
զհասակ : Յորում Ճոխացեալն էի հայրենատուր հռ  
դեկան ընչիցն առատութեք , և զարդարեալ հրճուեի  
եւթնամասնեայ Հոգւոյն պատմուճանաւ , և նոր-  
հայն պսակաւ փառաւորեալ գլխոյ իմոյ , և զա-  
ռաջնորդականին իմոյ կախեալ զպարանոցէ զոսկե-  
տեսակ քայլամանեկին զգեղեցկուի : Եւ ամենեին  
զամենայնն ընդ իս բերէի զհարսնական յօրինուա-  
ծոյն զգեստ , պատշաճ լինելով յերկնայնոյն պար-  
փակիլ փեսայի առագաստ : ” Քանզի արդարեւ զար-

1 Յօրինակին եղծեալ էր անընթեռնլի բառու և հասպարեւ :

դարի պատկերս առաքինութենն երամնգովք՝ ըստ նաև խառապին կերպարանեալ, որպէս ճշմարտութեանն և ինձ թուի:

Յայնժամ բոլորովին ես ինքն էի լուսատեսիւ յածայոյ թափանցանց լինելոյ նշողից. զոր իբրև մաքուր հայելեաւ առ իս զփրկւականն ձգելով դիմի զնմանուի, հանգոյն արեգական՝ ի խորս ուրեք ընդ յստակութի ջուրցն առաքելով զիւր ճառագայթն:

Եւ նախ նորին ստեապ ստեապ հոգւոյն ուղիւից վտակոք ոռոգաներ զարգաւանդ երկիր մտաց իմոց. և որպէս ՚ի ծաղկահոտ գինի՝ սպունդ ինչ թացեալ, այնպէս լցեալ ուռանանայր ՚ինմանե բանական իմ ոգի. մինչ զի կարել ասել ինձ զյայն ժամու պատահիցն, իբրև զայլմէ պատմելով, “ Վանուկ էի մտավարժ, և ոգւոյ բարւոյ դիպեցայ ”:

Քանզի և վարժապետ վեհագոյն ունեի յայ պարգևեալ ինձ, հայր միանգամայն և հրահանգօղ հոգեկան վարժութեց՝ զիմն թակողորոս, ըստ մերումս՝ ածանորհ՝ պատշաճեալ լեզուի. որ ոչ զառ յինքենէն և եթ բաւականանայր շտեմարանել յիմումն ոգւոջ զբարին, այլ ՚ի յոլովից զպայծառագոյնս ծաղկաքաղ առնելով զնորհաց, լիացուցանել զարգահութեն իւրոյ ինեւ ջանայր զուսումնասիրութի. և գրե՛թէ յազդմանե հոգւոյն՝ զլինելոցս նախատեսեալ, զառ ՚ի յոքունցն հաւաքեալ պարաստէր լինել բազմաց պիտոյից նիւթ, ծածկաբար զաստուծոյն առ իս բարբառելով. “ Կէր մանր զմատեանդ զայդ ”, պատգամատարդ հրաւիրեալ լինել իսրայելեանն ազին :

Եւ եթէ երբէք ուրեք խորհեի արդեւք զհրամանացն խորտակել զլուծ, և խզել զախատութենն սամետէս, այլում ումեք ակն զնելով կենցազական տարփանաց, աստուածայինն նորհ անդքէն ձգեալ բերէր զիս կապանօք սիրոյ իւրոյ, սաստելով յականջսխորհրդոցն իմոց, “ Օ ի կայ քո և ճանապարհին եզիպատացւոց, ըմպել զջուրն ՚ի եհանին : Յաղագս որոյ ապա հաւանեալ իմ այսոքիւք՝ իբրու թէ ձայնիւ կռ չողին զիս այ, զյամնձնառականն ընդ առաջ տանելով բան, “ Վհաւասիկ եմես, առաքեալ զիս ”: Օ որ օրի

նակ ձի ոք նորավարժ ոչ կարացեալ յինքենէ զվերեւակն իւր 'ի բաց սստուցամնել, զակամայ սանձիցն բռնադատութիւն գժոխակամուեն իւրոյ եղեալ զոր ծիցէ քաջ հլութե ասպարէզ:

Վայքանք և այսպիսիք յիսկզբանն առ իս այ նախախնամուեն մեծուի: Որովհիւր աւասիկ ես այժմիկ հարկանեմ զանձն իմ և նուաստանամ, հարցափորձեալ 'ի տնել՝ թէ զիարդ անհանձարեղագունի հասակին տուեալ զգործոցն խոհականութիւն, իսկ զգեզապարեն ուսեալ ներշրջանակացն, և մակացականքն փարթամացելոյ, զյոլովս անդուստ 'ի բացյուղարկեցաք զգործնական իմաստութիւն: Ոինչ զի ըղձալի լինել ինձ այսօր, որպէս յառաջն ասացի, հանդերձ կատարելութիւն և պատուոյս բարձրութէ դառնալ հանդիպել մատաղագունի և անթարշամ'ի մեղաց եղելոյ հասակին, եթէ պարտ է ըստ առաքելական բանին՝ զպիտանի և զընտրեալ անօթ լնուլ պատուական գանձու, վրկայք լինելով յարմարութեմիմեանց հանդիտարար և ազգակցապէս:

Եւ զի մի թուեցայց այսգունիւ բերեալ ցանկութ՝ զՊեղիայ զթետտաղացւոց գոռողին ախտանալ, որ զգառամացեան իւր Ոիդիայ առաջի առներ առ ՚ի յօշել զմարմինն՝ որպէս թէ 'ի մեռելութենէ առ մանկուի զծերութիւն փոփոխել յուսալով, զարձցուք և զկարելոյն բուռն հարցուք՝ 'ի բաց զնելով զանհնարիցն մտածուի: Օ ի կարելի է բանական կենդանւոյս՝ ամենեցուն յամենայն ժամը լինել զինչ և կամեսցի: Թէպէտ և ոչ համանգամայն 'ի միոջէ և ՚ի նմին ժամու ներգործելով զներհականն: որ մանաւանդ ըստ զօրութե երկոքին 'ի նմին գտանին 'ի մարդն:

Եւ պարտ է այնմիկ՝ որ զխոստացեալմն իրրե զըմը բըռնեալսս յուսովն ողջունել գիտէ, յարատեւողացն և գժուարաշարժիցն հոգ տանելով ձգել ձեռն: Որք միանգամ բնաւորեցան կամոչ հեռանալ 'ի մարդոյն, կամ թէ հեռացեալ վաղվաղակի վերատին դառնալով յարահիւսել. և այս են առաքինութիւք, որք առ հասարակ հոգւոյ և մարմնոյ զփառացն 'ի զըուխ յօրինեալ կապէ զպսակ: Վանզի այլք 'ի տրա-

մաղքութեանցն ժամանակաւ տրամակայեալ, լուծանեն զմիմեանս . իսկ առաքինութիւն համապաղորդ՝ ի մեզ խնդրէ բնականալ: Ա ամս զի յայս իսկ և գոյացուցին զմերս հաստատեաց բնութիւն, զի բարեգործք և ածանելը եղիցուք . և ինքնիշխանութեն կառօք՝ իրը՝ ի տեսարանի ումեք՝ ի սոսա նահատակել հանդիսացուք . կնքելով որպէս թագաւորական մատանեաւ ածայինն երկիւղիւ զփրտումեր և զձեռս, ընդ որս յարմարեալ պատկանի խորհուրդն գործ: Օ ի նոքումբք իրօք, որովք առ մահն սողոսկեալ անկաք, առ կեանսն դառնալ վերստին դիտիցեմք: Օ կնի որոյ ապա ճշմարիտ և քաջ հովուապետին հնարել հանդիտատիպ առ նմանութին, զառ՝ ի նմանէ՝ ի վայր մնացեալմն՝ ի մերումն ընլով մարմնի զվշտամբերութի . մինչ զի կարօղք լինիցիմք համարձակապէս որոց իշխիցեմքն հրամայել: Ա, մանողք ինձ եղիջիք, որպէս և ես «Քնի»: Հանդոյն նմա առաջի երթալ ընդ պատուիրանապահութեն շաւիզս . և զսուղելոյն ձայն միշտ՝ ի լսելիսն հնչեցուցանել զաւետարանական քարոզութեն վարդապետութի, զառողջ և զանինաս բանիցն ճարակեցուցանել դաշարիս, և առ մնուցին հոգեկան պատգամացն մնուցանելով ջուրս, մակաղելոր արտաքոյ ապականացուիս այսօրիկ է՝ ի հրաւիրեցելումն զմեզ վայրի . անխրամատելի երեքկին ըրջապատել զնոսս պարըսպաւ եռանձնական հաւատոյն խոստովանութք: Եւ ընդ գազանացն կռուել յարձակմունս, զի մի քայքայեալ ցրուիցին մերձ՝ ի գժոխս՝ գեղեցկապէս միւ աւորեալ «Քնի» անդամքն . այլ ամենեքին միոյ գաւոթի միոյ քրիստոսական դաւազանին յարդարեսցին լինել հօտ:

Բ. «Քնա՞ր տեսանեմ՝ ի յոլովադոյն և՝ ի ծանրիրս անկարգութիւն բազմացեալ, ոչ միայն՝ ի ժողովը գականս, այլ առաւել յուխտի մանկունս, և յառաջնորդս եկեղեցեաց: Այդ մին լեզու՝ ի ձեռն միոյ քարոզի՝ ի մի ելաք ճշմարտութեան ճամապարհ, և արդ բազմահետք և բազմաշաւիզք եղաք, յանչափաբար և զանազան և այլաձեսն առնելոյ՝ թէ զվարս և

եթե զփառաբանութիւնն որ առ ած : Ո՞ինչ գըլք թե զնոյն կրել զի՞ւասս ըստ հնոյ պատմութեանն՝ պատերազմնել մեզ այր ընդ եղբօր, և այր ընդ ընկերի, քաղաք ընդ քաղաքի և օրէնք ընդ օրէնս : Եշրկական զրուանոքն և վաճառացն տուրեառութեամբք խօսակիցք և հաշուակիցք իրերաց լինելով, և առ խաղաղութեանն ած ժողովեալք՝ զխաղաղութիւնն իննզրել խուճապիմք և խուլիմք : Եւ իրքե այլաղզիք և այլալեզուք՝ տանիմք և բերեմք զմիմեանս, լինելով սա նմա խուժ, և այլք այլոց դուժ :

Գ. Ի՞նչ որովք և զայս էջաս տեսանել . զի՞ ՚ի տեղիս տեղիս զսեղանս և զաւազանս ոչ առնեն ըստ հրամանի և աւանդութեն երանելեացն մերոց հարսնց՝ քարեղին և անշարժաբար զերկոսինն հիմնացուցանելով . այլ զսեղանն փայտեղին և շարժուն առնելով, իսկ զաւազանն ըստ պիտոյիցն՝ ըստ ժամուն և ըստ տեղեացն, որ ինչ անօթով և ՚ի ձեռն գայցէ, կատարեն զկարգն : Իշրելով տարացոյց իւրեանցն սիսալանաց տղայապէս և անփորձաբար, եթե առ հարկի ՚ի սկզբանն յումեքէ երագազրաւելի ինչ ցուցեալ եղէ գործ : Արպէս Վանի սովորական սեղանաւն ՚ի վերնատանն կատարել զխորհուրդ մարմնոյ և արեան իւրոյ . և Փիլիպպոս զնելքինին յոր և իցէ ջուր մլրտեաց : ՚ոյնպէս և վասն այլ Շռափելոցն՝ ցուցանէ, ասեն, պատմութիւն՝ եթե այլաձեապէս միւմանց, և որպէս զիարդ և ժամն իննզրեր՝ ընդ երկոսեանն անցանեին խորհուրդս : Եւ սուրբն մեր Լուսաւորիչ փայտեղին ընդ ինքեան շրջեցուցանէր, ասեն, սեղան . և ՚ի գետս և ՚ի վտակս, յոր և հասանէր, մլրտութիւն կատարեր :

Շռ որս ՚ի դէպ է ասել . եթե ամենայնք ՚ի Վրիստոսէ եղեալքն, ով դուք, յօրինակ մեզ բերելի է, ապա հարկ է և երեսնամեայ մլրտել . և թղփատել ութօրեայ, և երեքօրեայ յառնել, և քառամնօրեայ յերկինս համբառնալ . զի ըստ այսմօրինակի զայսոսիկ հաճոյ թուեցաւ ներգործել Վրիստոսի : Շայլ և զինի ընթրեացն յերեկորին ժամու հաղորդել խորհրդոյն, զի տերն ուրանօր

զշինն աւարտեալ կնքեաց , անդամնօր և իւրումն հիմն ձգեաց նորոյ ուխտի : Այժմ բազում ժամն 'ի միջի կատարեմք ընդ մարմնաւորականն և ընդ հոգեռ բական սեղանն , և ութօրեայ մկրտիմք : Խսկ վասն թղփատուե 'ի Պաւղոսէ ընկալաք հրաման . " Եթէ թղփատիք , ասէ , 'Վո՞ ինչ ձեզ ոչ օգնէ , " : Խսկ նախ քան զկատարածն յարութի տալ մարդկային բնութես՝ հիմենոս և Փիղետոս այսմիկ սկիզբն արարին ամբարշտուե բանից : Այժմ և ոչ ընդ դրունս երկնից կարողութի է ումեք անցանել աստստին կենօք 'ի մարդկանէ , " Ուր կարապեմն մեր ՀՅՈ յառաջեալեմուտ , :

Դարձեալ Առաքեալքն զյոլով ժամանակս 'ի տաշարին զառ 'ի Վրիստոսէ նոցուն կատարեին աւանե գեալ խորհուրդս . Եթէ զաղօթից , Եթէ զհաղորդութեան : Խսկ այժմ կանոնական սահմանաւ զմեզ պարլսպեալ զգուշացուցին նոցին աւանդապահք և ժառանգորդք , ոչ երթալ 'ի ժողովարանս և 'ի մատրունս Հրեից կամ հեթանոսաց : Եւ Առաքեալքն ընդ Հրեայս յիւրեանց ժամանակն զարբոյ պասեքին տօնախմբեցին զօր . իսկ 'ի մէնջ Եթէ ոքյանդգնեսցի ընդ Հրեայս տօնել , և կամ յառաջ քան զգարնանային հասարակաւորութին , և նախ քան զմիաշը բաթին օր լուծանել զպահմն , ընդ նզովիւք 'ի հարկէ անկեալ գտանին :

Ապա ուրեմն զայն նորագիւտ և դեռահաւակ ժամանակն ստիպէր առնել այսպէս . իսկ այս 'խորհրդոյ և ածային տեսչութին . զի մեծութ առաջի անկեալ իրաց՝ զփոքումքն զանց առնել և անտեսել վարդապետէ : Վանզի անփոյթ առնել ծանունցն՝ համանգամինցն է 'ի բաց բարձումն . իսկ թեթեագունիցն՝ ամ ժամանակ առ ձեռն պատրաստ կազմութի . զի որպէս 'ի խաւարի և աղօտաձանանն է պատուեալ լոյս , ըստ նմին օրինակի լոյս եղելոյ՝ և գուշնաքեայ խաւարին վատթարանայ : Ջաղագս որոյ ապա հարկ է հաւանութ և հաւատովք հետեւել զինի բոլոր քրիստոսականացս , և սեղան և աւազան քարեղին անշարժաբար յամենայն եկեղեցիս արձանացուցանել :

Խսկ Եթէ ասիցէ ոք 'ի հարցասիրաց և 'ի ըսասի-

բաց , է՞ր աղագաւ քարեղին և ոչ փայտեղին հրամայ-  
եցաւ կանգնել մեզ սեղան : « Ա, ախ , զի և պատշաճա-  
դոյն իսկ առ յարմարութի խորհրդոյս՝ զնիւթս զայս  
տեսանեմեղեալ . որպէս թէ զանցողդողդ և զանշար-  
ժահիմն փրկութե մերոյ իրողութի՝ կարծրագոյն և  
դժոխաշարժելի գործարանաւ մնօրինել : Երկրորդ ,  
զի և յառաջագուշակ եղեալ Եսայայ ՚ի վերայ ամ  
հեթանոսաց , զոր առ եղիպտացիսն պատգամաւո-  
րեալ խօսի . « Հաւուը յայնմիկ եղիցի , ասէ , սեղան  
ուն արձան կանգնեալ յերկրին եղիպտացւոց , և  
եղիցին ՚ի նշան յաւիտենից „ : « Քանզի և արդարե-  
խսկ սովաւ զյաւիտենական կենացն առ մեզ երաշխա-  
ւորեալ տեսանեմ բարութս : Որպէս և տէրն ասէր .  
« Ո՞ինչև արբից զդա , ասէ , ընդ ձեզ նոր յարքայուն-  
հօր իմոյ „ : Երրորդ , թերես արդեւք ՚ի հանդեր-  
ձեալ յաւիտենին ՚ի Քու զնոյն շմարտապէս , որ-  
պէս և այժմ ՚ի սեղանոյ աստի օրինակաբար , վայե-  
լիցեմք : « Քանզի և նոյն ինքն Քու վէմ անուանեցաւ .  
« Ո էմն զոր անարդեցին , ասէ , շինողքն՝ նա եղե  
գլուխ անկեան „ . և դարձեալ , « Ո լեռնէ վէմ ա-  
ռանց ձեռին հատեալ , գուշակէր զնա ՚ի ամսիկլ . և  
Եսայի ասէ . « Հաւադիկ ես զնեմ՝ ՚ի հիմունս Ոիո  
նի վէմբազմապատիկ , զընտիր , զգլուխ անկեանն . և  
որ հաւատասցէ ՚ի նա , մի ամաչեսցէ „ :

Դ . Բազզ տեսցուք և զայս եւս ՚ի կարգիս . զոր  
մանաւանդ թէ և յառաջագոյն իսկ արժան էր յիշել  
իրեւ զմեծագործ և զբազմերախտ՝ ՚ի Քրիստոսէ պար-  
զեեալ մեզ աւանդ . զիւզոյն սրբոյ ասեւմ , որով զհա-  
գին ՚ոք ՚ի մեզ ձգեմք ՚ի Քու միանալով : « Քանզի յոյժ  
օտարաբար նովաւ և այլապէս ՚ի միմեանց վարիմք .  
զոր և տեսաք իսկ առ մերով ժամանակաւս : « Քահա-  
նայից ձեթ ընդունել յերուսաղեմէ բերեալ , իսակ  
ձեթ զնա անուանելով , և զնոյն նովին ամանօք առ  
մի ըստ միոթէ միլրտեալմն իւրաքանչիւր ումեք վերըս  
տին օրհնել : ( Օ որ դանդաղիմ ասել , որպէս թէ բա-  
զում անդամօրհնութքն , յոլովագոյնս ՚ի ներքս յեւզն  
կուել զնորհն . և կամթէ ՚ի գալստենէ նորոյ նոր-  
հին զհնացեալն ՚ի բաց մերժել յամանոյ անտի : Եւ

դարձեալ նովին ձիթով օծանէին զմկրտեալսն և զերախայսն, այլ և զհիւանդս և զեկեղեցի և զսեղանս և զխաչս :

Որ թէպէտ և հոգին մի է, և առհաւատչեայ հոգւոյն եւղն նոյն է, սակայն բազմազգի մերում ըստ փրկութեն, բազմօրինակ և խորհուրդ փրկութեանն հրաշագործի . ըստ նմին և տեղիքն որոշին 'ի միմեանց՝ որովք փրկեալն լինիմք, և անուանք տեղեացն : Վպա և աղօթքն և գործառնութիւնն ոչ ամ զմիոյ մատուցանէ մեզ փրկութեան պարգև, և ոչ մին զամենեցուն, և ոչ նմանապէս միմեանց օգտամատոյց մեզ լինելով . այլ երախայութեն օծումն զհրաւիրականն ունի դրոշմ . և աւազանին օծումն՝ զըստ հոգւոյն մեզ յարմարէ վերստին ծնունդ . իսկ որ զկնի մկրտութեն է օծումն՝ զորդեգրութեն այ 'ի մեզ կոչէ շնորհ : Կարձեալ՝ սեղանն կերակրէ զմեզ, և ոչ ծնանի . աւազանն ծնանի, այլ ոչ կերակրէ . խան մարտնչի ընդ մեր առ թշնամիսն, և ոչ ծնանի, և ոչ կերակրէ . 'ի հիւանդութեն՝ զառողջուեն ունիմք կարօտութի, ոչ ես և զայլոցն : Այս ապաքէն և աղօթքն և քարոզուին և օծմունքն՝ բաժանաբար ըստ իւրաքանչիւրոցն վայելէ լինել խորհըրդոյ : Եւ պատճառ ոչ ունիմասել, զանփոյթն առնելոյ զառաջնոցն այսպիսի խառնաբնդոր և եղագործ սովորութեց, եթէ ժամանակի կարձութի, եթէ հիւանդութեց 'ի վերայ անկումն, եթէ անպարապութիյաշխարհակալացն հարստահարութէ . զայս 'ի նոսա և յած թողլի է : Իսկ մեզ իբրև հայրասիրաց ոմանց որդւոց՝ զառ 'ի նոցանէ անտես մնացեալն, ձեռն տալովն այ, տեսանել արժան է, և 'ի բարեկարգութի և 'ի բարեզարդութի ածել :

Ե . Օ յ տեսանեմք առ այսոքիւք և զայս ես, զի ոմանք զառ 'ի մկրտուին գալ հանդերձելոցն՝ զհրաժարելոյն 'ի սատանայէ՝ նոցա հարցմամք 'ի վերայ ոչ բերեն զերդմունս, և ոչ զսրբոյ Երրորդուեն խոստովանութի, և ոչ յերեխայուեն նախկին մատուցանեն ձեռնադրությոծումն . այլ միայն առ մկրտութիւն աւազանին վաղվաղեալ՝ 'ի ներքս արկանեն :

Կմանս իմ առնելով այնոցիկ՝ որոց թագաւորեցուցանել զոք կամեցեալ, նախ քան զմարմնոյն ծածկել մերկուի՝ զպսակն՝ ՚ի գլուխ կապել յառաջեալք, ՚ի միասին ընթանալով փառացն և անարգուեն : Եւ կամ թէ որում ծնանել առաջի կայցէ, զծնունդն առաջի դիցէ յղանալոյն և երկնելոյն . զորս՝ ՚ի դէպէ անսին խոստովանել զնո ծնունդս, և կամ վիժածս, և ոչ ծնունդս : Վանզի պարտ է՝ նախ ՚ի բաց կալ՝ ՚ի ծառայեցուցանօղ տեռնէ, և յապստամբ ծառայէ անտի . զի “Ճերեսցէ, որպէս Ասղոմոն ասէ, ծառայն իմաստուն՝ տերանց անմտաց”, : Հետ այնորիկ ապա հաւատալ սրտիւ, և խոստովանել բերանով, յորմէ կեալն հասցէ, զհայր և զԱրդի և զմք հոգի : Այս յերեխայուեն կարգի առ դուրս մլրտարանին պատշաճեսցի լինել նմա՝ որ մլրտիցին : Եւ ապա զկնի այսորիկ զհոգեսորն ծնանել ծնունդ յաւազանին . և զեւթնեակսն՝ ըստ եւթնեկացն որ ՚ի մեզ հոգեկան շարժմունք՝ զգենուլ զհոգւոյն շնորհս, զոր Ասայի ամն թուէ : Օկնի որոց ապա և զորդեգրութեն այ անուն ժառանգել՝ յետ ելանելոյ ՚ի ջրոյ անտի : Որպէս և ՚ի վերայ փրկչին յօրինակ մեզ՝ հայր յերկնից աղաղակէր, թէ “Դաէ որդի իմսիրելի”, : Օկնի ամենեցուն, այս ինքն յղութեն և ծննդեանն և ժառանգաւորութեն, ապա և զկենացն՝ որ յերկնիցն իջեալն է՝ ճաշակել կերակուր, զմարմին և զարիւն կենագործողին Վասի :

Այսպէս և ըստ այսմ օրինակի՝ երանելոյն Աիւրզի Երուսաղէմի եպիսկոպոսի զերախայիցն կանոն պայծառացուցեալ է, և ըստ իւրաքանչիւր հաւատոցն բանից ընթերցուածս յածային գրոց հանգոյն միմեանց զուգեալ և եղեալ է : Օ որ ՚ի սուրբքառաներորդս պահոցն առանձնաբար ՚ի վերայ նոցա կատարելով արտաքոյ ժողովրդանոցին, յետոյ ապա արժանի լինէին ընդունել զլուսաւորուի սրբոյ աւազանին ՚ի մեծի աւուր ճրագալուցի զատկին : Որ թէպէտ և այն խափանեցաւ . վասն զի յայնմժամանակի առ կատարելահասակս ոմանս կատարիւր երախայուեն կարգ . որք յիմաստ և ՚ի բան հասեալք՝ կարօղ էին անձամբք իւրեանց լսել, և հաւատօք հրաժարել և

խստովանել։ Խակ այժմ՝ ՚ի տղայութեն հասակի այտորիկ միանգամայն ՚ի միասին ՚ի վերայ եկեալգտանին, ՚ի ձեռն այնոցիկ՝ որք զմանկունմն ՚ի մլրտունն մերձեցուցանիցեն։ Վակայն նոյն խորհուրդ նմանապիս առ նոսա և առ մեզ մատակարարի ։ զանազանութիւն հասակացն և ժամանակացն այլաձեապէս ՚ի վերայ բերել հրամայէ զկարդ և զգիր աւուրցն և կանոնաց՝ ըստ երկայնութեան և կարծուե։ Վ. յլ ոչ եթէ հոգին սուրբ փոփոխեալգտանի յիւրմէն խորհրդոյ, կամ առաւելեալ և նուազեալ։ Եւ այս մինչեւցայս վայր այսպիս և այսքան։

Զ. Քննչառ առ սոքօք և զայս ևս տեսանեմք յումանս անկարգութիւն սովորութք հիմնացեալ։ զի զնոսա, որք յամումնուի անդր գայցեն, ոչ տանելով ըստ օրինաց հաւատացելոց յեկեղեցիս ՚ի մէջ ժողովրդոց, հաղորդս առնելով ամեկարգաց և կրօնից քրիստոնեութեն, և անդ յարժանաւոր տեղին զնոսա պսակեցեն։ Վ. յլ առանց ժամու և ազօթից, և առանց օրհնելոյ և հաղորդութեն, արտաքոյ մնան՝ ուր կամքիցեն։ Եւ քահանայն ընդ ձեռն ուրուք անդր երթողաց հրամայէ տանել զպսակն . թշնամանելով միանգամայն զպսակն և զպսակեալն . Եւ որ ծանրագոյնն է քան զայսոսիկ, անարդանս ածելով ՚ի վերայ խորհրդոյ իրին։ Օ ՚ի սուրբ առաքեան ասէ, թէ “ Խորհուրդս այս մեծ է, զոր և ասեմ ’ի Քո և յեկեղեցիու ։ Եւ նա յիւրմէ կամակորուէ փոքրկացուցանել ջանաց զպսատուական ամումնունն մեծախորհրդութիւն, զինքն ՚ի սպասաւորունն այ արձակեալ ՚ի բաց տանի ՚ի լծոյ . զի որ զժողովրդեանն այ ՚ի վայր թողու զժառայութիւն, այ ոչ ծառայէ։

Եւ այս յորդոց անտի Հեղեայ յայտ է . որք անպարապ լինելով ՚ի մարմնամնութեամնն յդփութենէ, հանապազափակ զուրս խորանին այ ընդզէմեկելոց անդր ուխտաւորացն պահէին . և միանգամայն անկեալք տարագրեցան ՚ի կամաց հրամանատուին և յիւրեանցն պատուոյ։ Պստ նմին օրինակի և սպա | զշեղգութենն մեծարելով զախտ, ոչ տան թոյզ ամումնացելոցն | զհանգերձեալ կենացն

օրինակել յանձինս զխորհուրդ . այլ որպէս որք  
յամօթալիսն ըմբռնեալ իցեն դործս , այնպէս ըստ  
դիւտ և գաղտագողի լըաղթութեն առնուցուն 'ի  
դժուխ զասակ , թագընկեցք առաւելքան թէ թագ-  
առուք լինելով : **Օ Հոգին** սուրբ տրտմեցուցա-  
նեն , որ սիրէ միշտ բացափայլութք 'ի վերայ մեր  
զարդեականն իւր ծագել ձիրս . իսկ զիսանտա-  
ցօղն բարեվայելքականաց մերոց իրաց ինդացուցանե-  
լով զաստանայ , մանաւանդ թէ և եղագ ներքսան-  
կութեն նմա՝ յանչնոհակալուս բազմերախտութեն  
այ ներհորդեսցի . զի անձանաչողք բարեացն անձինք՝  
հակառակացն ամ իրօք բանայցեն յինքեանս տեղի :  
**Խ**ւ որ 'ի ժողովի բազմամարդութք զուրախականմն  
ու փափաքէ գտանել , տրտմականացն՝ ծածկաբար  
ընդ էսն անցանելով անբաղյապէս հանդիպեսցի :

**Է . ԲԱՅՑ** գեր զասացեալսս վատթարագոյն ևս  
այս է մեղադրանաց փաստաւոր , յաղագս ածայնոյն  
վերջանալով հրամանի՝ առ իւրն երագուտնագոյնս ըն-  
թասցի ցանկութիս . զթագաւորեցուցանելն ռամկաց  
հաւատալով ձեռաց , և զմարմնապարար սեղանովն  
զիւրն տարածեսցէ բազուկս : **Օ Բ**նչ զսոսա անուա-  
նեցից . հովիւս հօտավատնիչս , եթէ գազանս կեղե-  
քիս խաշանց . զկուսանացն իրըև զերկրորդանայն  
առնելով տիսուրս և անկատարելագործ հարսանիս ,  
իսկ զերկեակմն 'ի պոռնկութէ և ոչ յամումնութէ  
ածելով առ զուգաւորութին : **Վ**, ախիկին թոյդ տալով  
պղծութեանն յառաջել և յափշտակել զօրինաւորն  
զայն անկողինս , և ապա զգիշերայինն իրըև զտուրն-  
ջենային 'ի լոյս բերել համարձակութ առեալ . օրէնս  
դրացն զպապանձելն օրէնս գնելով , բանսարկութին  
լինել կամակատար . զի յառաջքան ընդ բարին խըն-  
դալ մարդկան , զուարձասցի չարաւն որոգայթա-  
գիր թշնամին : **Վ**բ որս ոչ են մեզ յերկարագոյնս տո-  
ղելքանս . ուր մարդարէն **Խ**զեկիէդ զգսրովականն  
և զսպառնալիմն կարգաւ առ սոսա՝ զոր առ հովիւսն  
խարայէղի յայ պատգամաւորեալ բարբառի . **Պ**զ-  
կաթնն ուտեն , ասէ , և զասին զգենուն . և զիսա-  
շննն իմ ոչ արածեցին . և ցրուեցան խաշինքն իմ .

արդ ես խնդրեցից, ասէ, զխաշինս իմ՝ ի ձեռաց հովուացն Խսրայեղի „: Եւ դժոխադատելի յոյժ է պահանջիլ համարս այնմիկ՝ որում ամենայնքն յայտնիք են և անմոռանալիք, յորումոչ կարեն օգնել կաշառացն ակնառուիք, և յանօգուտս բազմախօսիցն հասցէ պերճաբանութիւն:

Ը. Բ.ԱՅՅՅ տեսանեմք առ այսոքիւք և զայն ես, եթէ ոմանք և վայելքագունից սովորուեց ջանան խափանումն՝ ի վերայ բերել. և զածայայտնուեն և զծնըն դեան նորին զօր, զոր՝ ի վեցն յունուարի՝ ի միասին տօնել սովոր է աշխարհս մեր, այժմզծննդեանն սիրեն ոմանք կատարել զտօն. իսկ յայտնուեն խորհըրդոյ՝ և ոչ միովիւիք կամին ճառս՝ ի մէջ բերել, կապելով ամենեւին զինքեանս ընդընթերցուածոցն հրաման. զոր երուսաղեմացիքն յութօրեայս յայտնուենդ՝ յութ եկեղեցիսն իւրեանց երթալով՝ զնոցին տեղեացն և զկանոնն կատարեն. օրէնսազանցուի կարծելով զայս, եթէ զառ՝ ի հնոցն զթերի ինչ ըստ խորհըրդոյն խնդրոյ՝ կատարելագործել ումեք հրամայէ հոգին նք: Եւ մանաւանդ եթէ եկեղեցի այ հանապազօր յառաջատութիւն աճէ և հարստանայ. զի և չէր իսկ հնար միով մարդով ըստ միում գործոյ, և ըստ միում ժամանակի՝ զբովանդակն իւր կամն տնօրինել այ ի մարդիկ:

Ե. ԱՅՅ զոր ասեմն, այս նախնական սովորուի՝ ի վազնջուց հետէ նախահաւեալ, և մինչև առ մեզ հասեալ.՝ ի վերայ ջուրց զքսան և զութերորդն նուագելով յաւուրդ յայդմիկ սաղմոս, կցուրդ ասելով “ Ձայն տն՝ ի վերայ ջուրց „, և զմկըտուեն՝ ի Վատթէոսէ զաւետարանն ընթեռնլով՝ օրհնէին զջուրն, ձեթ արկանելով՝ ի նա: Եւ իբրև զբուժիչ ախտից հոգւոյ և մարմնոյ՝ ամենելքեան անդուստ վայելեալք, ցնծալից լինէին. որ և այժմոչ է ամենեւին՝ ի բաց խափանեալ, թէպէտ և խանգարին Խսրայեղի տզօր և կնատ զօրեղութն նկրտի խափանել: Եւ եթէ առ՝ ի վսաս մեզ է յիշել զփրկչական մկրտուեն ճառս, թերեւս չէր իսկ մկրտեալ Վատթէ: Վարձեալ թէ ծածկել զհուչակեալն Քորդանան խորհուրդ մեզ տնօրինէ,

մեք ընդէր դիմեալ անկանիմք առ նոյն : Հիմ և  
զգործեցեալն՝ ի Վոհ պատմագրութե մեղ ետուն  
աւետարանագիր ոք հարքն : Օմք և հայր և հոգին  
սուրբ ՚ի վերայ ջուրցն նմա վկայեալք՝ ոմն ձայնիւ  
և ոմն երևմամք, զէակցուին յայտ առնելով : Ե՞ր ա-  
ղագաւ և կցուրդս գեղեցկանուագս զմկրտութեանն  
բանից յօրինեցին երանելիքն մեր վարդապետք : Ե՞յլ  
ուրեմն անտես և անլուր ճշմարտութեն սիրէ լինել  
անբան յամառութի :

Թ. Ե՞ր այսոքիւք են ոմանք դարձեալ, որք ՚ի ոք  
քառասներորդս պահոցն, զշաբաթ և զկիրակէ օրն  
ընդ տրտմութե և ընդ ապաշխարութե արկանեն,  
որպէս և զայլ ևս հինգ աւուրսն զանցեալս : Աւ  
տան թոյլ զփրկչականն ՚ի նոսա կատարել զպատա-  
րագ . առ երեսս առաքինութե կեղծաւորին լինել  
ջատագովք, և սրտիւք ՚ի չարաչար աղանդաց կործա-  
նին խորխորատս : Փառաւորագունիս այսորիկ միա-  
շաբաթուս աւուր՝ մեծ է և դժուարադիտելի յոյժ  
խորհուրդ : Օի զանճառելի խոստացելոց կենացն  
յղանայ ՚ի միջի մերում զճշմարտութի : Յայսմաւ-  
ուր Վոհ զմահ խափանեաց, ընդ ինքեան ՚ի մեռե-  
լութէ զմարդկայինն վերածելով բնութի : ՚Վ սմա  
և հոգին սուրբ առաքեալ ՚ի հօրէ, զանմերկանալին  
մեղ զգեցոյց մսիթարութի : ՚Վ սմին աւուր և զերկ-  
ըորդն իւր խոստացեալ է առնել Վոհի յաշխարհ  
զգալուստն . յորում հրեշտակապետացն ուժգնա-  
կի հնչեալ լինին փողոցն ձայնք . զոր մարգարէն աւա-  
գափող զնա անուանէ, այս ինքն վերջին և մահա-  
լոյծ և կենսառաք ձայն : ՚Վ սմա և հասարակաց մեր  
բնութի ՚ի բաց դիցէ զորս ՚ի պատուիրանազանցու-  
թեն եբարձ զբեռինս մեղաց, մահու և ապականուե :  
Յայսմաւուր բանան ՚ի նախահօրէն մերմէ աղխեալ  
դրունք դրախտին, բոցայինն ՚ի բաց երթեալ ՚ի նմա-  
նէ սուր, և փեսայն ընդ ինքեան ՚ի ներքս ՚ի լուսե-  
ղէնն տանի յառագաստ զհարսնացեալն իւր եկեղե-  
ցի : Եւ ընդ գիշերոյ շարալծեալս այս մերկանայ ՚ի  
մէսջ զգալի լոյսս արեգական և լուսնի, ՚ի բաց դնե-  
լով զգամալարունակ պայծառուին . զի որ ինքնին եղի

ցի մեզ լոյս մշտնջենական, և փառք նորա մեզ փոխանակ տուընջենային լուսոյ :

Եւ զի ասհմանաւ դուն ինչ 'ի վերայ սորա ասացից, սա է նախագոյակ լուսոյն ծնօղ, և սկիզբն զեակս գոյացուցանողացն աւուրց : Աա է առ երկո զիւրն կոչող ձարտարապետ և առ հանգիստ : Աա է, որ զլուսոյն արարիչ 'ի խաւարէ մեզ լոյս ծագեաց և ծագեսցէ : Աա է անմահուե պտղոյն պտղաբերիչ :

Եւ զի այսպէս մեծագոյն է սա և մեծամեծաց իրողութեց պարունակօղ, յիրաւի ըստ գերակայ իւրում ձոխուեն՝ զառաւելագոյնն 'ի մէնջ պահանջնէ պատիւ :

Եւ նախ քան զայլն՝ զառանձնական զիւր ինքեան զիսկագոյնն և զհարազատագոյնն, առանց որոյ ոչ անուն և ոչ փառք առ սա ասասցին . զառ 'ի յերկնից ասեւմ իջեալ կենսատուն կերակուր, զնորն ուլստ և նորոգօղն զմեզ 'ի մեղացն եղծմանէ : Ա. յլ և յերկրաքարշական զրուսանաց անտի դատարկանալն մեր, և զուարթագին իրօք 'ի վերայ ելանել ողբալեացն՝ պատուոյն սորա է առաւելուի. զի ազատ յամենեցունց յայսցանէ տրտմագին և տաժանաւոր իրաց՝ զուրախացուցանօղն զմեզ հաւատամք գոլ զերկիիր :

Երկուք են որ յափշտակելոց են զմեզ տեղիք, և զուգապէս միմեանց ընդդիմադրեալք . երկոցունցն՝ ոչ միայն 'ի միտս, այլ և առ երեսս բարեպաշտից կերպացեալ ձեւանան երևմունքն : Օ միոյն հընդեակ աւուրքն շանակեմք զնմանութի . քանզի և հինգ անուանս 'ի գրոց ուսաք գոլ զտանջանարանացն . հուր, արտասուս, կրծումն, խաւար, որդն : Եւ երկուք են աւուրք, որ զհանգերձելոյն առ մեզ նկարագրեն բարուիս . որպէս և զերկուսս զայսոսիկ լուաք լինել արդարոյն բնակութի . զերկինս և զդրախտն :

" Ծագեսցեն իրրե լուսաւորք յերկնի „ տըն ասէ . և " Ա. յնօր ընդ իս ես 'ի դրախտին „ ցաւազակն ասէր :

Եւ սոցա երկոցուն վախճան խորհրդոց՝ առ հանգիստ և ոչ առ տանջանման զմեզ հրաւիրեալ ձգէ . միայն թէ զգուշանայցեմք, 'ի չափաւորագունիցն՝ ոչ յանչափիցն ելանել սահման : " Ճանապարհ զարքունի դնասցես, ասէ . մի խոտորեսցիս, մի' յաջ և մի' յահեակ :

Որ առ պատուիրանադրեալն ոչ ձգտի հասանել կանոն, նա յահեկակողմանն դանդաշէ խոտորեալ ձանապարհի . իսկ որ յառաւելազանցն նկրտի հրամայեցելոցն հասանել, զաջակողմանն այնպիսին տեսացաւ դտանել զիստորումնն : Վիճն յանդգնաբար յապաշխարութեան հոսելով վտանգս, յառաւել ոլրնդութենէն յանյուսութեան ընկղմի խորս : Եւ մեւմն անչափաբար ընդարձակեալ, թողութեանն յուսով զբովանդակ զերկիւղին՝ ի բաց լուծանէ ըզկապ : Իսկ որ յերկաքանչիւրոցն զանդիտեալ հրաժարիցէ ծայրայեղ խոտորմանց, միջին իմն արդարակ և անստերիւրող ձանապարհաւ ըերիցին : Հորմէ ոչ փոփոխեսցի նախահարցն հաստատեալ սահմանք . այս ինքն՝ ոչ տէրունականն աւուր զապաշխարութեանն՝ ի վերայ ածել զնսիր, և ոչ նմանօրին սմա զծումականն դատարկացուցանել և փափկացուցանել զաւուրս : Եւ ոչ դարձեալ յառդերազանցա գոյնն սոցա ումեք վերանալ ելանել, որպէս թէ ընդանդործութի և ընդ բերանալուծութի խառնել և զքնոյն խորութի և զգինեաննութեն որովայնամուլութի . իսկ՝ ի տրտմականն ծանրաբեռնութեն՝ ի ներքոյ դնանիլ տկար ընութենս . մարմնասպան լինելով յաւետ քան թէ ախտասպան . և՝ ի կքել մարմնոյն դտանել հոգւոյն զվճատուեն տարակուսանն :

Ի՞այց ինդրէ ընդունել զպատիւն իւր փրկարանս այս մեծ օր՝ յերեկորեայ շաբաթուն մինչև ցերեկոյ միաշաբաթուն : Վանզի մինն՝ հիմն՝ ի ներքոյ անկեալ զնի պատուականագունիս այսմիկ աւուր, և մեւմն աւարտ՝ ի վերայ եկեալ՝ բովանդակի : Օ ի այսանակ ձնիսագունիցն վերջոյ և առաջոյ պատուադիրքն յանախեն զիառս : Վայլ առաջնքն մեր և մինչև ցառաւոտ երկարաթոյն ոչ լուծանէին զհանդստեանն կապ : Վայլ որ շաբաթուս երեկոյ՝ կարգ պաշտամանն սրբոց մարտիւրոսաց՝ ի սմա կատարի . իսկ ծունը ոչ կրկնի, և ոչ զգործոյն ունի խոնջութի : Վանզի միջասահման իմն երեկորինս է ժամամտուընջեան և գիշերոյ . տիւն մինչև ի նա յանդեալ, դադարումն ընդունի . իսկ գիշերն՝ ի նմանէ յառաջհաւեալ, զիւրն աձեցուցանէ սահման : Վակս որոյ և երկոցունց մաս-

նաւորաբար և հարազատասցի տա , այս ինքն տուրն թեան և գիշերոյ , և օտարացեալ դոցի : Այսորիկ աղազաւ ընտրեցին ոմանք զայս ինչ և զայս դնել երեկորեացդ այդոցիկ , և զայս ինչ և զայս բառնալ . իսկ այլք զառ 'ի նոցանե՛ թողեալմն բերել , և զբերեալմն 'ի բաց տանել :


Ժ. ԱԱՅՅ արժան է ոչ միայն քրիստոսեան պատարագաւն և կերակրափոխութե՛ք և անաշխատ հանդքատեամբ պատուել զօրս զայս , այլ և զբոլոր նախադասեալն սմա պարտ է աղօթիւք յուզարկել զգիշեր , Վանզի գիշերս այս , որ առ միաշաբաթիս լուսանայ , եղեւ յարուցողին զմեզ Վանի յարութե՛ն ժամանակի : Ա ամս որոյ լինելոց է և համաշխարհականն 'ի նմին գիշերի յարուենի իսկ եթե ո՞լ ոք 'ի բազմացն իցէ կամ գիշերն այն , կամ գիշերոյն այնորիկ ժամ , յորում զմեզն է հանդերձեալ նորոգել Վան , այս ծածկեալ է յամենեցունց զի և Վրիստոսին ոչ բացայայտեալ եղեւ յարութե՛ն ժամ : Եւ յաղագս այսորիկ յերեկորեայ շաբաթուն մինչեւ 'ի լուսանալ միաշաբաթուն սպասել և ակն ունել արժան է , զյաւիտենականն զգենուլ կենդամութի , լուծեալք 'ի կապանաց աստի մահու : Օ այս և տերն զմեզ յաւետարանի անդ զգուշացուցանելով ասէր . " Վրթուն կացէք , զի ոչ զիտէք յորում ժամու տերն ձեր գայցէ . յերեկորեայ , թէ 'ի մէջ գիշերի , թէ 'ի հաւախօսի , և թէ յառաւօտին , : Օսկիզըն և զվախնանն 'ի ներքս ածելով , զբովանդակ զնորայն նշանակի մասունս լինել արթնութեն : Եւ զի մի զարթնութին ընդ կենցաղականաց իրէք թուիցի շարախառնել ասացեալ զբօսանաց , յարէ առ նոյն ասելով . " Վրթուն կացէք , և ազօթս արարէք . : Եւ ցուցանե երկոցունցս այսոցիկ հանդիպել շահաւորութեց , որք հսկմամբ և աղօթիւք զբոլորագիշերս զայս մեծարելքազմացան . 'ի վտանգիցն ապրել , և անձառելեացն հասանել պարզեաց . " Վրժանի լինիցիք , ասէ , զերծանել 'ի նեղութեանց անտի՝ որ զալոյն է , և կալ առաջի որդւոյ մարդոյ . :

Իսկ զորս 'ի միջի անդ յիշե իսկզբանն և կատա-

բածի , այս ինքն զմիջագիշելն և զհաւախօմն , զայտ գտանեմք յասացելոց աստի յայտնել միտս : Կարձեալ արդելու զնոսա , որը միանդամ զերեկոյս զայտ կամ քնոյ՝ կամ արբեցութե մասն վիճակեալ հանիցեն : Օ ի երեկանիրհասէրն զմիջագիշելն հրաւիրէ լինել իւր արթնութե ժամանակ . իսկ այն՝ որ զգիշերոյն սկիզբն ընտրեաց առնել արբեցուեն սկիզբըն , հարկաւորաբար այնախիմն հանգուցանիցէ քընով զաւելորդն իւր տքնութի՝ ի հասարակ գիշերի . իսկ զանգգայ քնոյն թըմքրութիւն՝ հաւուն յանձնեցէ ձայնի , յինքենէ ՚ի բաց փարատել : Վայլ այն որպէս զիարդ և իցէ , ըստ երկաքանչիւրոյն իմացեալ դատողութեց՝ զմի և զնոյն յայտնէ զՃշմարտուեն իրակութի : Վայ ինքն զերկնային զուարթնոյն բերել զնմանութիւն , յածայնում յայտիկ գիշերի հրակել , և անընդհատաբար առ ած յերկինս ՚ի վեր առաքել զփառաբանութի՝ յերեկորեայ , և մինչ ՚ի ծագելն արեգական : Վայլ և հանդերձ յոտանաւորութ առանց ծունը կրկնելոյ կատարել զասացեալսո , ըստ նորին իսկ ոն հրամանի . “ Աշղիցին , ասէ , գօտիք ձեր պլնդեալ ընդ մէջ , և ճրագունք լուցեալք . և դուք նմանեալք մարդկան՝ որ ակն ունիցին ոն իւրեանց , թէ ե՞րբ դառնայցէ ՚ի հարամնեաց . զի յոր ժամգայցէ և բախիցէ , վաղվաղակի բանայցեն նման Արամի իցէ ծառայիցն այնոցիկ , զորս եկեալ տէլն գտանիցէ արթուն , :

Այս և զօրինադրեալս մեզ զայս ինքեամբ յանձն  
էառ կատարել՝ թու, յորժամելեալ՝ ի լեառն զգի-  
շերն ամ 'ի գլուխ զաղօթմն հաներ։ Ուուի թէ 'ի  
սմին իսկ 'ի գիշերիս յայսմիկ յօրինակ մեզ վարդա-  
պետելով զայս առներ։ վասն զի ոչ ասի յաղօթելն՝  
թէ եդ ծունը, որպէս 'ի մասնութեն գիշերի գրեալ-  
է, թէ « Վնկաւ 'ի վերայ երեսաց իւրոց, եդ ծունը և  
կայրյաղօթս»։ Եւ անդ զինի հրամայելոյն, թէ  
« Հսկեցէք և աղօթս արարէք»։ և զքնոյն հրաման  
'ի ներքս ածեալ յաւելոյր։ « Վնջեցէք այսուհետե-  
ասէ, և հանգերուք»։ զօր և յետ այնորիկ ասէր։  
“( )”ն արիք գնացուք աստի “ . . . ( ) . . թեան,

\* Աստվածոր Ծուղթ մի անկեալ էր՝ ի գըւազբէն . և որպէս ի գլխոց



և 'ի սպառելն նորա , ընդ նմին և նա անցեալ 'ի բաց  
գնայ մղեղեալ և լուծեալ : Եւ սակայն եւթնպատիկ  
սպառնայ ջեռուցանել , թերեւ զի կիզուլ կարացէ  
զեւթնեակմն՝ որ 'ի մեզ հոգեկան չորհքն , և խա-  
փանել զհանգստական հոգւոյն խորհուրդ , որ եւթ-  
ներեակ և յիսներեակ աւուրբք և ամօք զաշսատու-  
թին 'ի բնութես լուծանէ : Յաղագս որոյ պարտ է  
մեծաւ զգուշութ այսմիկ տանել հոգ , զի մի ըստ բա-  
նիցն սպառնալեաց՝ և զգործոցն ընդունիցիմք զիորձ .  
յորժամու զոգեկանն՝ որ յառաքինութեն է՝ պինդ  
պահիցեմք զազատութի , անփոյթ առնելով զառ 'ի  
մեղացն պարզեեալ մեզ հանգիստ : Ինդ ձեռն որոյ  
եւթնպատիկ , որ իրաւապէսն դատի , զմարմնականն  
'ի ծոց մեր հատուցանէ տանջանս . գերելով և 'ի  
հնոց արկանելով շարացար , և կիզանող ախտիցն  
մատնեալ բարեղնական աներեւոյթ գոռոզին :

Եւ յաղագս այսորիկ օր ըստ օրեւ յամենայն աւուր  
յառաւատինան , հրեշտակային իմն | զոգցես թէ ազգ-  
մամք 'ի թառամեցուցանող քնոյն ընդուստուցեալք ,  
զնոյն զերից մանկանցն 'ի բերան առնելով նուագեմք  
զօրհնութի , հանդերձ խոստովանութեք և գոհաբա-  
նութեք ասելով . ("Օրհնեալ ես որ ած հարցն մերոց":  
Հարս՝ ըստ հաւատոյն որ առ ած՝ զվախճանեալն  
անուանելով . և վասն զի վերստին զառաջին զիշխա-  
նական պատիւն յարմարագոյն է զգենուլ այնմիկ՝  
որ զզմանն հրով զինքն հալել գիտիցէ , և որպէս երկ-  
նային ցողով արտառուացն թորմամք լոգանալ և մա-  
քրել : Յաղագս այնորիկ ապա և հանրականացդ հա-  
մարձակի հրաման տալով երկնայնոց և երկրայնոց  
արարածոց 'ի փառաբանութի կանխել արարչին , ա-

նախագրութեան հառիս յայտէ ,  
պակասն երբեակ գլուխիքս . ժամ .  
թէ Կինը իսրահորդ ռահիդի սահա-  
րը . և որպիսի իսրահար պարու է ու-  
ժանել զնա : Ժի՞ Ըստդիմարանութիւն  
առ այնորիկ , որ որդեւուն յօրհնելու  
զնուու և յօդանեւու իսրահը . ո՛ւ իսլի  
հաւատն : Ժի՞ Եթէ Ալլէ ածդ յօրդի  
հայն առաջեւուէ , և ուշա՞ ի հայր  
և 'ի հագի . յաշագու որոյ և շիսու-

լուարն զնես բերել արծան և պնի  
մոյ մոյ ասունք : Յարում և նև ընդեմ  
յառաւատին և յերեխոյին պալու-  
սանն 'ի վերն ականուանեն Ալլէ ածդ ,  
իսլի յարում ասուր զադարագ յարւի՝  
'ի սիրտանն ասուագէն : Եւ սկիզբն ժի՞  
գլուխոյն , թէ Կինը իսրահորդ ռահիդի  
առաւատին պալուամանն առջնուուն  
և պնի և իսրահարութի նոցին :

սելով, “( Օ՛ՀՆԵՑԵԼՔ ամբ գործք ո՞ն զ՞որու ։ Ի՞ ամսզի զոր  
մանկունքն յայնժամ ՚ի փրկութէ անձանցն ծամու-  
ցեալք առ իւրեանս զփրկին, իբր առ երկին՝ ՚ի հնոցն  
վերաձայնեալ կոչեին զարարածս յօրհներդութիւն  
նմա, /ըստ նմին և մեք՝ իբր անդամք մարմնոյ նորա,  
՚ի վերայ մեր և ՚ի մեզ բերելով զգլուխն, մեծագոչ  
հնչմամք աղաղակեմք ՚ի յընդհանուր ամենայն ա-  
րարածոցս տեսակս, ասելով. “( Օ՛ՀՆԵՑԵԼՔ ամենայն  
գործք տեառն զ՞որ ։ : Որպէս թէ ազատացեալք մեք  
՚ի ծառայութէ մեղացն զդմանն հրով, ազատուն  
մերում հաղորդք լինելով, և բոլոր գոյացելոցն տե-  
սակք՝ հարկաւորին ամենայն իրօք ընդ մեզ և նոքա  
գոհացողք և բարեբանիչք լինել այնմիկ, որ ազա-  
տէն զամենեսեան :

Վարդ այս որպէս զիարդ և իցէ, զայս մեզ ուսու-  
ցանէ, թէ պարտ է մեղուցելոցն՝ նախկին արդա-  
րանալ ապաշխարութէք, և ապա իշխել և հրաման  
տալ արարածոց : Յառաջագոյն ասել “ Վեղաք անօ-  
րինեցաք ։ . և ապա ասել “ ( Օ՛ՀՆԵՑԵԼՔ ամենայն  
գործք ո՞ն զ՞որ ։ : Դարձեալ թէ “ Ողորմեալ ինձ ած-  
ըստ մեծի ողորմուե քում. ըստ բազում գթուե քում  
քաւեալ զանօրենութիւն իմ ։ : Եւ ապա համարձա-  
կել և վերաձայնել, թէ “ ( Օ՛ՀՆԵՑԵԼՔ զ՞որ յերկնից,  
օրհնեցէք զնա ՚ի բարձանց ։ : Եւ եթէ ընդէլը երկիցս  
անդամ զնոյնս բարբառի ։ յաղագս վերջացելոցն ՚ի  
նախաժամանողացն . զի զորս ծուզուին զրկեաց յա-  
ռաշնումն, յերկարելովն վայելեսցեն յերկրորդումն ։  
Եւ այս յաղագս հարցինն և Դործոցն, Ողորմեցին  
և Տէր յերկնեցոյն :

Իսկ ապա յետ այսորիկ զհրեշտակայինն ձայն միա-  
բանաբար նուագել. որպէս թէ ապաշխարութեամք  
զինքն մաքրեալ, և երկնային յօրինուածով հաստա-  
տեալ զանձնն յանմեղութէ, ընդ նոսա և զուգա-  
ձայնեալ երգաբանէ ։ Եւ այն՝ որ յառաջագոյն զայս  
ամենեցուն հասարակապէս հրամայէր օրհնել զած,  
այժմ թողով զգալիս և զնիւթեղէնս, վերաթե-  
եալ ելանէ յանմարմնականացն դադարս . և ընդ նոսա  
զիաղաղասիրելն առ միմեանս և զգուցաբնակն լինել  
երգակցէ, ասելով. “Փառք ՚ի բարձունս այ, և յերկիր

խաղաղութե՞ն, 'ի մարդիկ հաճութիւն', : Եւ վասն զի համեալ կարգեաց զինքն մտօք ընդ զուարթնոյն պարակցութիս, ապա ըստ նոցա իմն կարգին ձեանաւ լով, սկսանի ախուհէտեւ աստիճանաւոր պատուովք զնախապատուելին բարեպաշտել. յառաջ մատուցանելով նախկին զիսազմն, և զինի նորա հետեւալ ըստ կարգի սարկաւագն. յետոյ ապա իբրև զվեհագոյն գերաստիճանեալն 'ի նոցանէ եպիսկոպոսն Ուր պէս թէ 'ի ստորուստ 'ի հրեշտակական գասուե, առերիս երիս գասս անմարմնոյն զմի մի կշռեալ յեկեղեցականացն, վերոտնելով առ սակաւ սակաւ երթալ հասանել մինչեւ 'ի թագաւորական գահոյն. ուրանօր սրովըէիցն և քրովըէիցն Ճոխացեալ պարէ բաղմութի: Յաղագս որոյ և զերեքսրբեանն խառն ընդ նոսա միաբանական ձայնիւ սկսանի նուագել: Եւ այսպէս ապա զի՞րեւագալոյն ըստ գասուց վերաձայնելով զսաղմոս կատարեն:

Gamma են թանց սորա առաւօտին ասացեալ սաղմուքն թուով վեց. զուգաքանակ առ 'ի մեզ տպաւորեալ զգայարանաց: Օ երկումն ապաշխարութե և աղօթից, սակա ողբաձայնեալ հոգեկան մասինն՝ որ ընդ աղախնացելոցն որ 'ի մեզ գանաւորեցաւ հեշտութե Ճաշակելեաց և հոտոտելեաց: Խսկ չորքն 'ի նոցանէ՝ պարզաբար առ 'ի նուագերգութիմն առեալք. որպէս թէ 'ի քառից աստի գեղեցկաձայնեալ 'ի տեսանելեաց և 'ի լսելեաց, 'ի խօսարանաց և 'ի շօշափելեաց: Քանզի երկուքս 'ի սոցանէ իմաստասէլք անուանին. խսկ զմինս՝ արբանեակ բանի և սպասաւոր խոհականութե կոչէր Ճերակղիտոս, զեղու: Խսկ ձեռք առ հնարադիտութիմն հպելով, արարւականք անուանին. բայց առաւելագոյն բանին 'ի պէտս օդնականութե ներկազմեալք և յարառոցեալք: Օ ի զոր լեզուով աղդմամբ՝ լսելեաց մատուցանէ զրանն, զնոյն սա տարրաբար տեսանելեաց առաջի դնէ: Եւ պարտ է ուսումնասիրացն և խոհականագունիցն՝ նուագարանօք քնարահարութիւնութիւն այլ և զբոլոր գոյացելոցս ընդ ինքեան հնչեցուցանել ձայնից տեսակս: Եւ այս մինչեւ ցայս վայր

**Ի**սկ երեկորին աղօթիյն հաւաքումն այսպիսար յինքեան ունելով զեկուցանէ, մեզ միտսւ ։ Ա ան զի 'ի զանազան տուլնջենային տաժամանաց անտի աշխատեալ և խոնջեալ լինի մարդկայինս կազմած, և խնդրէ անդուստ իբր 'ի ծանրակիր ինչըեռանց զերծանել և գիշերային անկողնայն պատրաստութեալ համար հեցու ու զօրանալ ։ Վախկին՝ մատուցեալ ասէ, ցած . « Խոնարհեցու ուր զունին քո և լուր ինձ, զի աղքատ և տնանկ եմես » : Հայեաց ուր, ասէ, յաղքատուի և 'ի անամկուի բնութես, թէ զորպիսիս և զուրբանս զրօսաննաց և զրադմանց սաստկութիւն յայգուշ մինչեւ յերեկոյ միալուծ ձգեալ բերեմ : Եւ վոր զի պատճառ այնոցիկ զպատրանս բանսարկուն սատանայի գիտէ . « Ի՞ ասէ, անօրէնք յարեան 'ի վերայ իմ . և ժողովք հզօրաց խնդրեցին զանձն իմ . : Եւ ցուցանէ թէ 'ի պատուիրանապահուն իմնէ զըսըեալ եկն 'ի խարդախել և 'ի խարել զիս . « Խորհեցան խափանել, ասէ, զգնացու իմ . թաքուցին ամբարտաւանք որոգայթ ինձ : Վարս ձգեցին որոգայթ ոտից իմոց . շուրջ զշաւղօք իմովք եղին ինձ դայթակղութին » :

Իպա զմնաւ ածեալ թէ և ոչ մի ինչ իրօք զորութայթ զայս փշրել կարիցեմ, եթէ ոչ այնուիկ՝ որով զթասիրեալ երկնային հօրն, փրկանաւորեաց զմեզ արեամբ միաձնին իւրոյ, զնոյն և մատուցեալ յիշեցուցանէ . զոր յընդերեկս աւուրն ուրբաթու զանապական մարմինն իւր 'ի հաճոյս հօրն Որդին միածին պատարագեաց : « Ուղղեցցին, ասէ, աղօթք իմ որպէս խունկ առաջի քո . համբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկորի » : Այսուիկ ուրախարար զոհապործութեալ ապրեցուաց յորոգայթէ յայսմանէ, որ թագուցաւ ինձ 'ի գայթագուշէ զործողին զանօրէնութի : Եւ վասն զի գիտէ, թէ ներկայ ամանակիս գիշերային հանգիստ զապականութես ոչ կարէ յինէն մերկանալ զըսնուի, եթէ ոչ վերջնումն

այնմիկ ասպականահալած և մահալուծօղ զիշերին երթեալ հանգիպանամ, զսոյն և ընդունել հայցէ 'ի նմաննէ, 'ի յանգումն ածելով զերեկորին զկարգեալ սաղմոսմն . “Հանցես, ասէ, 'ի բանտէ զանձն իմ, և գոհանամ զսմուաննէ քումմէ , : Բանտ՝ զկեանս աշխարհիս անուաննէ . և հանելն 'ի սմաննէ՝ առ հանդերձեալ աշխարհին կեանս զելանելն ասէ . վասն որոյ և 'ի վերայ բերէ, թէ “ Խնձ համբերեն արդարք՝ մինչեւ հատուցես ինձ , : Ուշ և վասն իմու փութացուցանես հատուցանել զիսոստացեալ քո զարքայուին, զարդարոյն ընդ միտ ածցես զյապաղումն . զի և նոքա մեղման ընդունել զաւետիսն :

Օ կնի որոյ ապա զջրագայն նուազեն զկցուրդ, որպէս թէ 'ի տամներորդ ժամէ աւուրն սկիզբն արարեալ աղօթիցն, արեգականն լուսով մինչեւ ցայնժամը լինին պայծառացեալ . իսկ ապա զերկրորդն՝ որ աղօտաճաճանն է՝ 'ի ներքս ածելովլոյս, մանաւանդ թէ փոխանակ զգալի լուսոյն՝ իմանալի լուսոյն ճառագայթիւք զըրտին իննդրեն լուսաւորել զաւս : Եւ վասն զի ընդ ձեռն բանից՝ յանմարմնականայն մտօք սլացեալ ելանեն 'ի բնակուին<sup>1</sup>, ընդ նմին և բարեձեանալ ցանկասիրեն : Ա, ահապետական նախագահութիւք ձեռնարկեն զնախապատուելին պատուել . և զոր ինչ արարին յառաւօտին աղօթմն, զնոյն կարգ և աստ յառաջ առնդով, 'ի սաղմոսողոգեն և 'ի հրեշտակական դասուէն սկսեալ՝ տանին յանգել յեպիսկոպոսմն և 'ի քրովըեական դասն . ընդ որս և զերեքս սըրբեանն զուգաձայնեալ՝ երգակցեն զսրբասացուի : Եւ այսպէս զհանգստեանն նուազելով զսաղմոս, արձակեն :

Արդ չորք են ընդ ամենայն երեկոյին աղօթից սաղմոսք, առանց հանգըստեան սաղմոսին . թերեւս ըստ չոքից տարերացդ, որ 'ի նիւթականումն մեր գտանի մարմին : Օ ի զվեցն, որովլիմանալի հոգին միշնորդէ ըստ զգայարանայն, յառաւօտին աղօթիցն յիշեցաք սաղմոսս . և չորք և վեց զումարին 'ի տամն, որ է առաջին կատարեալ թիւ 'ի միակեն սկսեալ, և կատա-

1 Յորբնակին 'ի լուսանցմն 'ի բնաւիլ :

բելագունից թուոց սկիզբն . և զուդաթիւ 'ի ձեռն  
Վովսիսի տէրունեան աւանդեալ օրինացն : Վայլ և  
ընականագոյնք , որովք զուդիւք ներգործել բնաւո-  
րեաց առաջնորդականն որ 'ի մեղ միտք . աչք , ական  
ջօք , ունդամբք , բերանով և ձեռօք : Բայց և բանա-  
կան մակացուեն սովաւ բովանդակին հնարք : « Ի ան  
զի մի ըստ միոնթէ համօրէն տասն թուով սահմանեցին  
զսեռականագոյն զէակացն սեռս : Եւ և եռանդիւնի ,  
'ի միակէն առ չորսն վերանալով . առ , թէ , դէ , որոց շա-  
բագրութին բաղկացուցանէ զտասն : Եւ այս մեղ յա-  
ղազս թուոց քառակի և միակի , որովք առաւօտին  
և երեկորին աղօթք ասացեալ եղեն :

Ֆ. ՅԱՅՅ արդ այսոցիկ այսքան բաւական լիցի ,  
սակաւս ինչ 'ի բազմաց նշանակելով , յոլովիցն 'ի գի-  
տութիւ ածել կամեցեալ : Ո ասն զի և չէ իսկ առա-  
ջիկայս մեղ զստեղծեալն եղծանել հականաւութիւ-  
տարօրէն սովորութիւն , այլ կանոնական սահմանա-  
դրութիւ ըստ իւրաքանչիւր գլխոց՝ զհիմնացեալ զան-  
կարգութին քակել և 'ի բաց հանել յեկեղեցւոյ այ ,  
և փոխանակ նոցա զբարեվայելուն և զօդտակարա-  
դոյնան 'ի տեղւոջն արձանացուցանել :

Ֆէ . Վ. Ր. Դ որովհետեւ . 'ի միասին հրաւիրեալ գու-  
մարեաց զմեղ ածային տեսչութիւն հրաման , որք մի-  
անգամ հազորդք եմք միմեանց առ ած խոստովանու-  
թիւն և նախագահութիւ , այլ և սիրով առ իրեարս ե-  
ռացեալք , ոչ ինչ արդելու զառաջի արկեալս 'ի գլուխ  
բերել մեղ հոգեւորական ջան : « Ի անզի և զայս 'ի մէնջ  
պահանջէ՝ որ հաւատացն 'ի մեղ զվերակացուես այ-  
սորիկ չնորհ . շուրջ գալով միշտ , տեսանել հոգաբար  
ձութ զհօտ « Բնի , զոր պատուական արեամբն իւրով  
փրկեալս ազատեաց . և յամենայն հարուածոց բանա-  
արկուին բժշկեալ , առողջս և անարաստ ինքեան  
յօրինեաց մարմին , զբոլորեցուն զանուանս գրելով 'ի  
գոլութիւն կենաց : Օ ի մի գուցէ , որ առ մահն զմեղ  
ածէ , 'ի վերայ եկեալ ծուղութիւն քուն՝ յափշտակել  
համարձակուի տայ զհօտս հանդերձ հովուաւն ան-  
երեսոյթն գազանի . որ յամենայն ժամանակ ժուրջ գայ , և

ինդրել կլանել՝ զորս եթուքն . և գտամիցիմք եղեալ պարտականք արեան անձանց և յանձնեցելոցս : Վայլ պարտ և արժան է հանապազօք վարդապետական մեր բանիւն ամրացուցանել զառողջն , և վիրաւորեցելոցն զբարեգործութեն հրաման տալով 'ի վերայ բերել սպեղանիս . որպէս զի հնար լիցի ամենայն անձին Երրորդութեն երկրպագուաց ժառանգել զերինից արքայութին 'ի ԲՇ ՀՅ 'ի որ մեր , որում փառք յաւիտեանս . ամէն :

ԺԲ . ՆՈՐԻԿ ԿԱՆՈՒՔ

ա . Եպիսկոպոս կամքահանայ կամ սարկաւագ կամ ով և իցե յուխտէ եկեղեցւոյն , յարբեցութեան դտեալ մի իշխեսցէ պաշտել զկարգն . մինչեւ աւուրս ընդ մէջ արարեալ , սրբեսցէ զինքն ապաշխարութե , պահովք և աղօթիւք . և ապա համարձակեսցի մատչել 'ի կարգն իւր և 'ի հաղորդութին : Իսկ եթէ յամառեալ 'ի նմին որկորըստուե յամեսցէ , լուծցի :

Ե . Վաշխարհական ոք զնոյն առնելով , մի իշխեսցէ առանց զզման և ապաշխարութե հաղորդել . ապա թէ 'ի նմին զեղխութե մնացեալ յերկարեսցէ , որոշեսցի :

Ֆ . Ոչ է արժան յաւուր շաբաթու և կամ Տրագալուցի զատկին սպակադիրս առնել , զի ոք աւուրք յարութեն առաջի կան . յորս պարտ է աղօթել և հըսկել , և հոգեորբական կարգօք միսիթարել զանձինս , և ոչ մարմնական զեղխութե զսուրք աւուրցն խորհուրդ արհամարհել և ընդ ոտն հարկանել : Իսկ եթէ ոք գտցի զայս արարեալ , սպակն անվաւեր լիցի , և սպակադիրքն ընդ պատժօք եղիցին , մինչեւ ապաշխարեսցին . և եպիսկոպոսին տեսեալ , որպէս և կամեսցի՝ մարդասիրեսցէ 'ի վերայ նոցա :

Է. Աւ է արժան, յորժամառ վաղիւ պսակ ընդունելոց են, յերեկորեն ժողովս առնել և արբենալ և զեղսել. այլ պարկեշտուք և աղօթիւք արժանի առնել զինքեանս պսակին օրհնութե և ածային հաղորդուե: Վայ եթէ ոք գտցի զայս արարեալ, քահանայն զօրն 'ի բաց փոխեսցէ, և որպէս ասացաքն՝ յայլում աւուր հրաման տացէ զգուշութեամք և արժանաւոր կարգօք պսակիւ և հաղորդիւ օրինացն :

Ե. Աւ է արժան 'ի սուրբ քառամներորդս զատկին և մինչև 'ի սուրբ պէնտակոստէն հարսանիս առնել, և զաւուրցն խորհուրդն թշնամաննել. զի ամենայն օր կիւրակէ է, և 'ի նոսա կատարի աստուածային խորհուրդն :

Շ. Վարժան է 'ի սուրբ քառամներորդս պահոցն՝ յաւուր շաբաթու և կիւրակէի պատարագ մատուցանելահիւ և երկիւղիւ, ըստ սահմաննելոյ սրբոց հարանցն յամենայն ժողովս իւրեանց: Խակ եթէ ոք հակառակեալ ընդդիմասցի մերում հրամանիս, կամ բանիւ կամ գործով, թէ ուխտաւոր է՝ լուծցի, և թէ աշխարհական՝ որոշեսցի :

Է. Վ. յլ վասն պահելոյ և լուծանելոյ զշաբաթ և զկիւրակէ 'ի սուրբ քառամներորդս պահոցն, այս յիւրաքանչիւր կամս թողեալ լիցի. միայն գոհանաւովզայ՝ առանց խղձի և հակառակութե, և առանց բամբասելոյ զընկերն, զոր կամեսցի և արասցէ հանդերձ պարկեշտութե. երկոքին ընդունելի են առաջի այ, և յաւանդութե եկեղեցւոյ Վ. թի:

Ծ. Վարժան է և զհացն՝ անխմօր, և զգինին՝ անապակ հանել 'ի սուրբ սեղանն, ըստ աւանդելոյն մեղ սրբոցն Վարիգորի. և ու խոնարհել յայլազգացքիւատոնէից յաւանդութին: Օ ի սուրբ Լուսաւորին՝ յօրինականէն ըերեալ զայս, առաքելաբար հրաման ետ կատարել իւրոց վիճակելոցն. որպէս և զայն օրհնութե յագապացն զենմունս խառնել, և ըստ կարգի զեւտացւոցն՝ ազգաւ սեպհականել զեկեղեցւոյ

ՀԱՅՐԴ . և մեզ՝ի նմին պարտ է յարանալ, և չթողուլ  
՚ի բաց, և չառնել նորաձես ինչ :

Ե . Պարտ և արժան է զսուրբ միւռնն, այս ինքն  
զեւզն անուշահոտութեան, հայրապետին օրհնել . և  
իւրաքանչիւրոց եպիսկոպոսայն միանդամ՝ ի զատկին  
հինգշաբաթին օր, որպես և հրամայեալն է ։ յւրա  
համային՝ ինոցանէ ընդունել և օծանել նովառ զսե-  
զանս և զեկեղեցիս և զխաց . առ մկրտեալմն մա-  
տուցանել միայն յորդեգրութեն օծումն, որ յետ  
մկրտութեն թնի . և յայլ՝ ի պէտս օծման մի խառ-  
նեսցէ զնա, և մի ընքեամբ յանդզնեսցի օրհնել քա-  
համայն :

Ֆ . Պարտ և արժան է զմկրտութեն ձեթ՝ քահա-  
նային օրհնել մի ըստ միոջէ ընդ մկրտելն, ըստ բաւա-  
կանի ժամուն պիտոյից . և նոյնժամայն առ մկր-  
տեալմն մերձեցուցանելով զօրհնեալն սպառել և մի  
իշխել զմիանդամ օրհնեալն բազում անդամ օրհնել .  
և միայն օծանել նովառ զերեխայն և զմկրտեալմն  
ընդ մկրտելն յաւազանին, և յայլխորհուրդ օծման  
մի իշխեսցէ մատուցանել զնա :

ԺԱ . Վարժան է զհիւանդացն զձեթ քահանային  
օրհնել ըստ իւրում աղօթիցն, և ըստ բաւականուե-  
պահանջելոյ ժամուն պիտոյից :

ԺԵ . Վէ արժան զսեղանն, յորոյ վերայ պա-  
տարագն ՝ Բաի մատի, փայտեղէն կանդնել և շար-  
ժուն, այլ քարեղէն և անշարժ հիմնացուցանել, Վակ  
եթէ ոք հակառակեսցի, և ոչ արասցէ ըստ հրամա-  
նիս մերում, և ըստ աւանդութե կաթողիկէ եկեղե-  
ցւոյ, եպիսկոպոսն լուծեալ եղիցի՝ ի պատուոյն, և  
սեղանն արհամարհեալ և անդործ մնասցէ :

ԺՒ . Վէ պարտ զաւազանն յայլ իմեքէ նիւթոյ  
պատրաստել, և կամ ուրանոօր և կամեսցի . այլ աւ-  
ազան քարեղէն հաստատել ՚ի նմին իակ յեկեղեցւոյն,  
և կամանդէն մերձ յեկեղեցին՝ ի մկրտատունմն :

ԺԴ. Պարտ և արժան է զերախայիցն ձեռնադրութիւնն և զօծութովանելին առ դրունս մկրտարանին կատարել, և ապա տանել՚ի ներքս՝ ուր աւաղանն է, և մկրտել.

ԺԵ. Պարտ և արժան է զայնոսիկ՝ որը պսակելն հանդերձեալ են՝ քահանայիցն յեկեղեցին տանել, և 'ի վերայ նոցա կատարել զկարդ և զկամնն ըստ օրինաց քրիստոնեից, և անդ՚ի սրբութել տեղիմն պսակել. զի 'ի միում տեղւոջ վայելէ լինել պսակին, և որ ընդունի զպսակին : Խակ եթէ ոք ոչ այսպէս արասցէ, այլ որպէս և իցէ իւրով կամակարութք և ծուլութք անարդեսցէ զօրինս և զկարդ ամումնաւորութեն, քահանայիցն լուծցի յիւրմէ պատուոյն, և զպսակաւորն վերստին պարտ է պսակել ըստ օրինաց քրիստոնեից. որպէս և առաքեան պատուիրէ, թէ « Վահնայն ձեր ըստ կարգի և պարկեշտութք եղիցի » :

ԺԴ. Խակ զերկեակն նոյնպէս պարտ է ըստ առաջին կարգին միջնորդօք և խօսնականօք հաւանեցուցանել յիրերաց յօժարութիւն, և յեկեղեցւոյն և 'ի քահանայիցն օրհնութէ ընդունել զնշան զուգաւորութել իւրեանց : Խակ եթէ ոք ոչ այսպէս, այլ յառաջ խանծեսցին և պղծեսցին առ իրեարս, զայն պիսիմն 'ի բաց մեկնեսցեն 'ի միմեանց, և զշնացելոց կամնն և զսահման 'ի վերայ դիցեն : Խակ եթէ ոչ առնուցուն յանձն մեկնել 'ի միմեանց, յետ տանն ամի ապաշխարութեն ողորմութք և արտասուօք արժանաւորեսցին խառնել յեկեղեցի այ :

ԺԵ. Վարժան է շաբաթն օր երեկունն մարտիւրոսաց պաշտել, և ծունք չկրկնել, և զնրագայն օրհնութի ասել । ոյս զուարթ նք :

ԺԸ. Վարժան է գիշերապաշտօն առնել յայդ կիւրակէ . և հսկմամք և աղօթիւք և յոտանաւոր տըրնութք զանցեալ շաբաթուն աւուրց զյանցանս ննջել, և արժանաւոր առնել զինքն մեզսաքաւիւ և կենդանարար խորհրդոյն . և ակն ունել ամենայն զուար-

թութք և փութով տեսնագալուստ փողոյն , և անշառ յաւիտենական ալբայութեն :

ԺԴ . Վրժան է յերեկորինս և յառաւօտինս զինի ամենայն պաշտամանն՝ նուազել զլուրք ածն . և ապա զհետ բերել յերեկորինսն զհանգստեանն սաղմոս և յառաւօտինսն՝ զլուրեագալին սաղմոս : Իսկ յորժամ պատարագ մատչի , 'ի սկզբունս անդ պաշտամանն յիշել զլուրք ածն . և զսոցուն խորհուրդն յառաջաբանի անդ հաւաստեաւ յայտնեցաք :

Ե . Պարտ և արժան է զլուաչեցարն երիցս անդամ զհետ բերել , ըստ երիցս անգամ կըկնելոյ սրբասացութեն . և մի նուազեցուցանել , և նուազ գտանիլ 'ի շնորհաց խացին ՎՌԻ :

Ի՞ն . Վրժան է 'ի զիշերին , յորժամ ժողովին 'ի պաշտօնն , նախ զառաջաբանիցն ասել զւորեսին սաղմոսն միաբանութք 'ի թիւ՝ խոնարհ ձայնիւ . Վրա զին՝ զերորդ սաղմոսն : Երկրորդ՝ զութմներորդ եւթներորդն : Երրորդ՝ զհարիւրորդ երկրորդն : Չորրորդ՝ զհարիւրորդ քառամներորդ երկրորդն . և նոցին զքարոզութին և զաղօթմն զհետ բերել , զոր 'ի նոյն խորհուրդ արարեալ է երանելոյ Յոհանայ Ա անդակունւոյ Հայոց կաթողիկոսի : Վարոզուի , Օ արթուցեալքս : Վցօթք , Օ քէն գոհանամք . և զհանդիսան նորին , Եայեա տէր ողորմութքդ քով :

Ի՞ր . Վրժան է զառաւօտինսն՝ ամենեցուն նմանս միմեանց զնոյն և ըստ նմին կարգի կատարել . զի այսպէս վայելէ քրիստոսամիրաց , որ նորին լեզուոյ և ազգի են , միաբանութք փառաւորել զած , և յօրինել զվարս ուղիղս . զի զրեալ է զսրբոց առաքելոցն՝ թէ ։ Եմն ամենեքեան միաբան յաղօթս , ։ Վրդ զինի Հարցինն և Ողորմեցւոյն և Տէր յերկնըցւոյն՝ զֆառս 'ի բարձունան պաշտել . ապա ըստ իւրաքանչիւր աւուր զկցուրդմն , զոր առեալ է 'ի սաղմոսացն : Երկուշաբթւոյն , Եոյս տուր տէր աչաց իմաց : Երեքշաբթւոյն , Եքէն է տէր աղքեւր կենաց : Չորեքշաբթւոյն ,

Ես ասացի տեր ողբրմեա ինձ։ Հինգշաբաթւոյն, Ես  
առ քեզտեր աղաղակեցի։ Ուրբաթուն, Վտյեն ա-  
զօթք իմ առաջի քո տեր։ Շաբաթուն, Վրաքեա  
տեր զլոյս քո։ Վապա զինի քարոզութե և աղօթիյն՝  
զերեքսրբեանն երգել զփառաբանութիւն հանդերձ  
սրբոյ ածածնին կցըրդիւն։ Վապա զՎարեադալին սաղ-  
մոսն ասել, ըստ դասուց վերաձայնութե։

ի՞դ։ Վոյնպէս և զերեկորինսն հանգոյն միմեանց  
ըստ այսմկարդի և այսու օրինակաւ կատարել ։ Ու-  
ռաջագոյն պաշտել զլոնարհեցո՝ վերաձայնութե ըստ  
դասուց։ զոր երանելի Վերսիսի Հայոց կաթողիկոսի  
յաւելեալէ։ որպէս թէ կամելով սկիզբն ամենայն  
վերերգակ սաղմոսիյն՝ յաղօթելոյ առնել։ զի և սաղ-  
մոսս այս աղօթք Վաւթի են, ըստ վերնագրին յայտ-  
արարութե։ Օ կնի նորա զՎարեցո՝ մի ըստ միոջէ զե-  
րեսին սաղմոսսն զմիմեանց զչետ, ըստ դասուց վերա-  
ձայնութե։ Խակ զինի Վեսեդի և Ուղղեսցին ասե-  
լոյ, քարոզել և աղօթս մատուցանել։ յետ այնորիկ  
զլորեքսրբեանն նուագել նովին նմանութե։ և վախ  
ճան ամենայն պաշտամանն՝ զհանգստեան սաղմոսսն  
ասել, ըստ դասուց վերաձայնութե։

ի՞դ։ Խակ կիւրակեին աւուր առաւօտինքն՝ այսգու  
նի խորհրդով յօրինեալ բերէ զկարգն իւր։ Օ կնի  
Հարցինն Վեծացուցե ասել, վասն զի հարկաւորա-  
պէս պարտի այն՝ որ զՎարութին Վոհի Ճառէ՝ ընդ  
նմին և զգերեզմանն յիշել, և զսուրբ կոյմն։ Օ իւթէ  
ոչ էր ծնեալ, ոչ էր հնար և ոչ թաղել։ և եթէ ոչ  
էր թաղեալ, ապա և ոչ յառնել։ արդ գերեզմանն  
յընթեռնոյ զաւետարանն յիշեալ լինի։ իսկ զսուրբ  
կոյմն՝ ի Վեծացուցեն ասելոյ յիշեմք։ Օ ի որպէս  
ընկալան ի միմեանց զփրկին, յարութին՝ ի գերեզ-  
մանէն, և գերեզմանն՝ յարգանդէն, ըստ նմին և վը-  
կայք պարտին լինել միմեանց վասն յարուցելոյն։ և  
այս է Ճշմարիտ մարդեղութեն և մահուանն Վոհի  
խոստովանութի։ Վ. յլ սակայն ի ծնողենէն առ յա-  
րութին զչետ երթեալ միաւորին, իսկ ի յարութե-  
նէն առ ծնունդն վերջադարձիլ անկարելի ։ զի չե-

գործեցելոցն 'ի Վահ պատմութիւն առնել անհնար  
է : Եւ յաղագս այսորիկ՝ աւետիքն և ծնունդն և  
մըսութիւն Վահի 'ի միասին առեալ տօնախմբին . և  
սոքա ամենեքին , և որ այլն ևս իցեն տնօրինեալք  
'ի Վահ , 'ի յարութեան միաւորեալ բովանդակին :  
Եւ այս յաղագս Արեծացուսցէ ասելոյ յառաւօտինսն  
յաւուր կիւրակէի :

Հետ որոյ գարձեալ մինչ չե զաւետարանն ըն-  
թերցեալ , որպէս թէ տակաւին ևս 'ի թաղման  
վարկանելով զտէրն , արտաքուստ 'ի գերեզմանն առ-  
նա աղաղակիցեմք ասելով թէ « Վահ , տէր , օգնեա-  
մեզ և փրկեա զմեզ » . և թէ « ՎՃ լուր աղօթից իմոց ,  
ունին դիր բանից բերանոյ իմոյ » . և եթէ « Խաղա-  
ւորեսցէ տէր յաւիտեան » : Խակ յետ ընթեռնոյ  
զաւետարանն , իրու թէ զնոյն ինքն զյարուցեալն ան-  
դէն և անդ ընդ աւետարանական բանին 'ի գէմն մեր  
բերելով , հրամայեմք միմեանց՝ թէ « ՎՃ գիշերի համ  
բարձէք զձեռս ձեր 'ի սրբուի , և օրհնեցէք զտէր » :  
Ա ամն զի լուեալ աղօթիցն մերոց , յարեաւ և օգնեաց  
մեզ , փրկելով զմեզ 'ի մահուանէ՝ և թագաւորելով  
մշտնջենաւորաբար ամենայն տիեզերաց : Բայց գի-  
շեր՝ ոչ այնքան զժամանակին , որքան թէ զհրեական  
զանհաւատութիւն անսուանելով . որ զաղջամդին խաւ-  
արի արդարեւ բերէ զօրինակ , ըստ Խասայայ պանծա-  
լի բանին , թէ « Վիշերեաց կանխէ հոգի իմ առաւա-  
տել առքեզ ած » . այս ինքն թէ 'ի միջոյ ամբարշտաց  
համարձակիմ բարեպաշտել առ քեզ ած : ՎՃ զայ-  
սոսիկ այսպէս և այսու օրինակաւ յառաջ վարելով  
զկարգն , արժան է՝ զինի Փառք 'ի բարձանցն՝ յարու-  
թիւն ասել . խակ զլուրք ածն՝ հանդերձ սրբոյ ածած-  
նին կցըրդիւն 'ի վերջն անցուցանել , որպէս և յայլ  
աւուրսն ըստ ասացելում պատճառին : Եւ զինի ա-  
մենեցուն՝ զլարեագալին նուագել սաղմոս , զոր Խաղի-  
ցի ահուն տն ասել սկսեալ են 'ի ժամանակացն Խզրի  
կաթողիկոսի :

իԵ . Պարտ և արժան է 'ի գիշերապաշտաման ,  
զկարգնացն զՀետ բերել զորս զայս քարոզութիւն .  
Ա ամն 'ի վերուստ խաղաղութեան , Ա ամն 'ի գիշերի

և՝ ի տուրնջեամն, Ա ասն ուղղելոյ զգնացս մեր, Ա ասն գտանելոյ մեզ չնորհ. զոր արարեալ է վասն նորին իրի սրբոյն Աահակայ Հայոց կաթողիկոսի: Եշտ ըստ իւրաքանչիւրոցն զաղօթսս զայսոսիկ հանգըստիւքն իւրեամս. Տէր ած մշտնջենաւոր. Հանգիստ, Շնորհատու բարեաց: 'Ի գիշերի և՝ ի տուրնջեամն. Հանգիստ, Հովիւ քաջ: Ինկեալ եմք առաջի քո. Հանգիստ, Վումամենազօր տէրութեղ: Ա երջին

( Օրհնեալ ես տէր ած մեր, որ և զմեզ զմեղաւորս արժամնի արարեր փառաւորել զքեզ. ընկալ բարերար և մարդասեր տէր զամենեցուն մեր աղաչանս<sup>1</sup>, զինդրուածս, զխոստովանուիս, զգոհացողութիս. և չնորհեա ամենեցուն մեզ զքո առատ ողորմութիդ և զգթութիդ: Ո՞ի թողուր տէր զժողովուրդս քո, և մի մատներ ՚ի սպառ վասն անուան քո. մի ըստ մեզս մեր առներ զմեզ. և մի ըստ անօրէնութեն մերումհատուցաներ մեզ. այլ արա առ մեզ զողորմուի քո ՚ի հազարս և ՚ի բեւրս: Օ երծո զմեզ յամենայն որոգայթից սատանայի, և փոխեա զմեզ յարքայուի միաձնիդ քոյ տն մերոյ { Յոհ Վոհ } :

### Հանգիստ.

Վեզ յանձն առնեմք զանձինս մեր, ած ամենակար հայր տն մերոյ { Յոհ Վոհ }, որ ՚ի բարձունս բնակեալ ես, և զխոնարհս տեսանես յերկինս և յերկրի: Հայեաց, տէր, յաղօթս մեր և ՚ի պաղատանս. մի ցրեր զուխտ քո, և մի մերժեր զմեզ ՚ի ժառանգութենէ քումմէ. այլ ըստ առատ քումբարերարութեդ՝ արժանաւորս արա զմեզ ծառայս քո անձառ լուսոյդ երկնից արքայութեդ { Յոհիւ Վոհիւ տերամք մերով, ընդորում քեզ Հօր և սուրբ Հոգւոյդ վայելէ փառք իշխանութիւ և պատիւ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1 ՚ի լուսանցան առջնութեան:

ի՞լ. Պարտ և արժան է, յայտնութեն աւուր՝ կատարել զջրոյն օրհնութեն՝ ի վերայ ջուրց ըստ պատշաճի՝ ի տեղիմն հանգիպեալ, ձեթ արկանելով՝ ի նաև աղօթս մատուցանելով.՝ ի ձեռն այնորիկ յիշատակել զառ՝ ի փրկչէն վասն մեր՝ ի Հորդանան զմկըրտութին: Արակէս և՝ ի գալստեանն աւուր ոստոն բառնալ, և Ճօճանակս շարժել, զնմաննութեն բերելով մանկանցն երայեցոց ծափելոյն և ոստոն մատուցանելոյ. զի և աշխարհիս մերոյ մարդկան, և ամենայն քրիստոնէից աւանդութեն կալեալէ զսոյն:

ի՞լ. Խթէ ոք խաչ արասցէ փայտեայ, և կամ յինչ և իցէ նիւթոյ, և ոչ տացէ քահանային օրհնել և օծանել զնա միւռնովն սրբով, ոչ է պարտ զնա՝ ի պատիւ ընդունել և երկրպագութեն՝ մատուցանել. զի դատարկ և ունայն է, յածային զօրութին, և արտաքոյ աւանդութեն առաքելական եկեղեցոյ:

ի՞լ. Խսկ զայնոսիկ, զորս օրհնութեն և օծմամբ կատարեալ է, որք միանգամե իցեն ածային խորհըրդոյն գործարանք, պարտ է զնոսա պատուել և պաշտել երկրպագել և համբուրել. զի՝ ի նոսա քնակէ հոգին սուրբ, և նոքօք մատակարարէ՝ ի մարդիկ զպահպանութիս և զնորհս բժշկութեն ախտից հռդւց և մարմնոց: Վ. յլ եթէ մեռանել հասցէ՝ ի վերայ այնոցիկ՝ ի ձեռաց հեթանոսաց, մի հրաժարեսցէ. զի մեծագոյն այնպիսւոյն առաջի կայյոյս, և ընդմարտիրոսս համարեալ է:

ի՞թ. Ոչ է պարտ ամենեին անխտիր լինել և հազորդութիս առնել ընդ հերձուածողաց. այլխորշել՝ ի նոցանէ, և չհաւասարել ընդ նոսա՝ ի հոգեկան և՝ ի մարմնական սեղանս. զի պատկառեսցեն և փափեսցեն միաբանել ընդ ուղղափառութեն աւանդի:

Ե. Վաժան է, յայտնութեն աւուր՝ ի Վատթէոսի դլսոյն զմկըրտութեան կարդին ընթեռնուլ զաւետարան: Վ. յլ յամենայն իսկ ութօրեայսն խառնել պատ-

շահ վարկանիմը ընդ ծննդեան աւետարանսն զլլըր-  
տութե աւետարանսն . զի որպէս տօնն հասարակաց  
է երկոցուն , հասարակարար պարտի լինել կարդաց-  
մունքն և պաշտօնն :

ԷՌ . Ոովորեցին ոմանք զիիւրակէն օր մինչեւ ցհան  
պատուել , և անտի յառաջլուծանել զաւուըն խոր-  
հուրդ : Հաղագս նորին հրամայեցաք մինչեւ ցերեկոյն  
նովին պատուով պատուել զօրն . արգելու զինքեանս  
'ի գործոյ և 'ի ձանապարհորդութե , և երեկունն  
ծունը չկրկնել , և յարութեան պաշտել :

ԷՌ . Աւ է պարտ 'ի չարաղանդ մծդնէիցն տեղիս , որ  
կոյին Պոլլիկեանք , օթել սւմեք . և կամյարել և խօ-  
սակից լինել , և երթեեկութիւնս առնել : Վ. ՅԼ ա-  
մենեխն հեռանալ 'ի նոցանէ , գարշել և ատեալ զնո-  
սա . զի որդիք սատանայի են և լուցկիք յաւիտե-  
նական հրոյն , և օտարացեալ են 'ի սիրոյ կամաց ա-  
րարցին : Եթէ ոք իցէ՝ որ յարեսցի 'ի նոսա , և 'ի սի-  
րելութե և 'ի բարեկամուի եկեսցէ , պարտ է զայն  
պիսիսն խոշտանկել , և ծանր պատուհաս 'ի վերայ  
ածել , մինչեւ զբաստացին և առողջասցին 'ի հա-  
ւատս : Վ. պ եթէ դարձեալ վերատին 'ի նմին գտցին ,  
զայնպիսիսն հրամայեմք ամենեխն հատանել և ար-  
տաքս ընկենուլ իբրև զժանստ ախտյանդամոց եկեղե-  
ցւոյ հիմքի . " Օ ի մի արմատ դառնուե 'ի վեր երե-  
եալ նեղիցէ , և նովաւ բազումք պղծիցին " :

# ԵՐԵՒԱՆ

ԸՆԴՀԱԿՄ

## ՊԵՏՎԱԿԱՆ ԵՐԵՎԱՆ

Եթէ 'ի սկզբան անդ մարմնամալոյն՝ Քրիստոսի  
զետ եղեւ ասել աւետարամնչին Հովհաննու  
յիւրումն կաթողիկէի, եթէ « Յազումք են եկեալ  
յաշխարչնեռինք, որով մարթեմք իմանալ թէ յետին  
ժամանակ է . . . զի՞նչ ևս ասասցուք մեք, որ ոչ միայն  
զնեռինսն չարագոյնս և բազմապատիկս քան վնոյնս  
ընդ մեզ բերեմք, այլ և ստուգապէս վերջնումն ա-  
ւասիկ եկեալ հանդիպեցաք ժամանակին . որք յետին  
յետնոց՝ գտանին արդարեւ քարոզք և վկայք . զժա-  
մանակս ասեմ, և զմարդիկ ժամանակիս : « Յանզի  
ահա գտաւ որոգայթ իրրեւ զվարմհաւորաց ձգեալ  
'ի մէջ ժողովրդեան ազդի իւրոյ՝ ըմբռնել զախմարս  
և զպարզամիտս 'ի մարդկանէ, որք չարեաց 'ի չարիս  
վերացեալ ելին . 'ի պատկերամարտութենէ, 'ի խա-  
չամարտութիւն և 'ի քրիստոսամեցութիւն, և ան-  
տուատ յանածութիւն 'ի դիւապաշտութիւն : Այլ և  
խորամնակեալ գտին չարութեն իւրեանց զի՞ն խող-  
խողիւ քրիստոսասիրաց անձանց, դաշնակից լինելով  
բոհակալաց . . . և 'ի հմտութիւն ածեալ նո-  
ցուն ստուերագիր առասպելապատում մատենիցն  
զհամբակացն իւրեանց խմբաւորութիւն : Օ ի որոց 'ի  
կամակորութենէ, ախորժելի եղեւ բանարկուին գալ-

'ի բարեկամութի՞ , ոչ ինչ են զարմանք թէ և արքանեկաց նորուն ընտանասցին համախոհութեամբ :

Եշ ուղիղ և ածաւանդ կրօնիցն մերոց լուսաւորութեամբ նախատել զմեզ յանդդմին պղծալիցն իւրեանց շրթամբք , կռապաշտս անուանելով տէրունեան ազագաւ նշանապաշտութե . զոր անխորապէս յանդեղեւուն մտաց առեալ մեք կապեցաք զհռչակելին զայն նշան ընդ ամենայն նիւթու , որ և քերովթէիցն է սարսափելի և պատկառելի , զբուժին հոգեկանաց մերոց և մարմնականաց ախտից , զպակուցանող և զջարհութեցուցիչ գիւաց : Վ. Ա. և կենդանագրեալ պատկերաւ մարդացելոյ Բամինն այ , պախարակել զմեզ անամօթին , յիմարեալք և խելագարեալքն յայսոյն անհաւատութենէ , զսրբոց մարդարէիցն զբանս ընդդէմ մեր քերելով , զոր առ 'ի յանդիմանութիւն հեթանոսական կռամոլութեանն է ասացեալ : Ոչ կարացեալ տէսանել խաւարեալքն մտօք , թէ զի՞նչ նմանութի՞ է ածապաշտութեանս մերոյ առքազմաստուածութին հեթանոսաց . մեք զմիայնոյ միաձնի Որդւոյն այ պաշտեմք զպատկեր և զնշան յաղթութեան . իսկ զհեթանոսս անհուն և անթիւ պաշտամամբք մոլորեցոյց սատանայ :

Վանզի են ոմանք ՚ի նոցանէ որք զաչայն զհետերթեալ խարեցան . որ ինչ միանգամ ՚ի տարեցդյերկնէ և յերկրէ գեղեցիկ ինչ առ երեսս հանդիսաւ՝ ածս անուանեցին . զաստեղս , զերինս , զրլուրս , զծառս , զքարինս : Եշ են դարձեալ , որք յուժգնութենէ կենդանեաց կամ 'ի դժնէութենէն երկուցեալք և ահարեկեալք՝ 'ի պաշտօն նոցին դարձան , և ածս անուանեցին . որպէս առ բարեզօնացինն վիշապն պատուեցաւ , առ եղիստացինն կրոկոդիդոքն : Իսկ որք անչափարար զիջական ախտին հոգտարամն՝ զարական և զիդական մնդամն նոյնաձեւքար ստեղծեալ պաշտեցին , մոլաբացիքն և սիդոնացիքն զհրամավնն և զիստարտմն : Վ. Ա. դարձեալ զօդտակարս և զպիտանիս 'ի տարեցաց այտի առ կենցաղական պէտս ընտրեալ ածացուցին . որպէս Պարսիկք և Վարք զհուր և զջուր և զերկիր . մինչ թէ հաջոյ թուեցաւ նոցա 'ի մեռանելն , զմարմինս իւրեանց

դազմնաց և թռչնոց ծախել տալ՝ քան թէ ընդ երկրաւ ծածկել, և նեխութերն անպատուել զյիմարաբար պատուեալն : Են ոմանք 'ի նոցանետ, որոց տեսեալ զարիւնարբուս և զթարախածուծս 'ի կենդանեացդ՝ իբրև զախտարոյժս և զցաւահալածս մեծարեալ զնոսսա ածս անուանեցին . որպէս գազացիքն և ակիարմնացիքն զտղրուկս և զճանճս և զմժիխս: Աւսք 'ի նոցանետ զբնդդիմամարտս այլոց կենդանեաց զկենդանիս 'ի պատիւ առեալ պաշտեցին . որոց յաղթահարելն զմիմեանս՝ օգնականութեն սպասաւորութիւնուել է իւրեանց ստացողաց: Որպէս հիւսխայինքդ զձի և զցուն . զմին վասն երազաշարժութ ոտիւքն, որպէս թեսովք թռչել հեծելոյն զինի որոյ հասանելն բաղձայ . և զմիւմն՝ 'ի գազմնացն յափշտակութենել, զտեր իւր յապահովացուցանելոյն սակս: Եւ կամ որպէս առ նոսին իսկ, զորոց բանս, կատուապաշտուին է մեծարդի եղեալ՝ կերակուր իւրեանց զկերակրոյն ապականիս առնելոյ աղագաւ:

Իսյց ամպարշտագոյն զեր զասացեալսս՝ այս էր հեթանոսականնացն, ինքն անձին իւրում երկրապագու և պաշտօնատար լեալ. զի որ առ ընկերսն մոլորեցաւ ածութեան կարծեօք, ինքն իւր ինքեան խոնարհեալ երկրագէ յիմարաբար: 'Կ համեմատութիւն գալով առ միմեանս մարդիկն, որով իւիք նուազեալ գտանեին առ ընկերն՝ նորին պատճառաւ յարաբութեան աստիճանի զգերազանցեալն հանեալ զներ. և խելագարեալ, զինքն արարած խոստովանիւր լինել: Իստ այսամօրինակի քաղդէացւոցն տեսեալ զտիտանեանն զայն վիթիարի և աշխոյժ, վաթմանականգնեան գոլով ըստ երկայնութեն հասակին, իսկ լայնութեամբն վեցաքանակս ունելով կանգունս, վասն որոյ զգերամբարձեալն մարմնոյն տրամադրութք՝ ածօրէն իմն պատուով պատուեցին . և սորա խաւար չարապաշտութեն զբոլոր տիեզերս ընդ իւրեւ կալեալ կուրացոյց: Իստ իւրաքանչիւր լեզուաց այլաձելով զնորա զանուն, քուշացիք՝ Վե-

բրովթ կուելով, բարեղացիք Ռահը, փղտացիք Ռահաղ, եղենացիք Դիսո, պարսիկք Արմեղդ, Հայք Վահազդ :

Եւ զորօրինակ սորա ընդ բարձրութիւն հասակին հիացեալք՝ խարեցան, վասն այլոց այլով իւիք քաջաճութեցն պատահմանց 'ի զարմացումն եկեալք՝ ածս անուանեցին . զլունոս վասն յոխորտաբար առ կոռւարաբութիմն յարձակելոյ . զլուս՝<sup>1</sup> վասն արին գոլոյ . զհերմէս՝ վասն քաջախօսնակ չոռումաբանութեանն . զօև՝ վասն անընդդիմամարտներհակացն զուգախառնութե . զայլս վասն այլիրիք քաջաբատիկ զբնականսն ունելոյ որակութիս . յորոց անուն և զկուռս պատկերակերպ քանդակեալս ածս անուանեցին : Եւ վասն զիյաղջապղջից անուն և 'ի վատթարագործաց կուռքն կանզնեալ լինէին, դեն չարասէր և չշմարտատեաց 'ի ներքս մտեալ դարանէր . և զկուապաշտիցն, ընդ ձեռն երեւելի անդրեացն առինքն ձգեալ ընդունէր զերկրպագութին : Յորմէ գտանէին եղեալ դիցն երկրպագուք ոչ միայն տարրապաշտք, այլ և դիւապաշտք . առնլով 'ի նոցանէ դիւացն պաշտօն, և տալով զինքեանս փոխարէն ընդծառայութե : Ա ամս որոյ դիւաբնակք և դիւաշունչք կոոցն լինէին սպասաւորք . այլ և դիւցազունք անուանեալ, գեր 'ի վերոյ մարդկայնոյս համբառնային բնութեան :

Եւ արդ վասն զի բացայայտակի քողախնդրեալ զկուապաշտիցն հոլանեցաք զյիմարութի, ոչինչ են պէտք գերանունութք զայնոսիկ, յաղագս որոց բանս ընթանայր, նշանակել . զի համագործութիրի յանդիմանակաց եղեալ, ոչ կարօտանայ անուանակոչութեան : Վրեգական երկիր պագաննելով, նորայութեակցին երկրպագուաց . մինորսակայն լինելով պաշտօնամատոյց, յայնոցիկ մղեալ անկանին խորխորատ որք զձի և զսուն ընտրեցին իւրեանց լինել աստուածս . և կամ յեգիպտացւոյն ընկղմին գաղանամոյց գետ : Ինդ խաւար զխաւարայինսն կատարելով ծանակու-

<sup>1</sup> Յօրինակին Առեւ, այլ 'ի լուսանցսն Առեւ :

թիս, 'ի պարսկական մայրապականութեցն վայր վը տանգեալ խրին խոհերս։ Եւ կամ զնոյն ինքն դՊամովսայն և զՄստարոտայն անկեալ զգարշելի կուռուն ողոքեն։ Օ կայծակնահանու գիւին զգեհենսին հրոյ ցայտմունս բարեբանիք լինելով ընդ Յանեսի և Յամրեսի յլլումպիոս լերին գետնաթաւալ և փրփրերախ գիւին խոնարհեալ երկիր պազանեն։ Տղայոցն արեամբ զանգեալ ալեւր, զանօրէնն ժուայթելով զօրէնս, անդր ևս քան զիսողիցն գտանին զանզգայ ծննդակերութի։

Որը և զնոցին գիակունս առ երդովքն ուրեմն 'ի տանիս զեղչեալս բարձրահայեաց և երկնապիշ լինելով, երդնուն այլ ընդ այլոյ ասացեալք։ Դարձրեալն դիտե։ Խակ զարեգակն աղաւել կամեցեալ, ասեն։ Վրեիկ, լուսիկ. և 'ի ծածուկ զօդային և ըզվերնոտ դեմն կոչեն ըստ Վանեայ և Ախմովնի կախարդի մոլորութեցն։ 'Իոյնպէս և զասացեալ զառաջնածին կնոջ զմանուկն 'ի ձերբաձգութենէ առիրեարս չարամահ առնելով, զայն՝ յոյր ձեռս ոգեսպառ եղեալ սատակի՝ յաղանդապետական կարգեալ պատուի մեծարեն։ Եւ յիւրաքանչիւրոցն անուն երդմունս կատարել զառաձանին. Երդուեալ, ասեն, 'ի միածինն որդի։ Եւ դարձեալ թէ Ակայ ունիմքեղ զփառս այնորիկ, յոյր ձեռս միածինն որդի զոգի իւր աւանդեաց։

Վասպէս ազգի ազգի խարկանաց բանիւք զանձինս ծածկեն. և զանգետս 'ի հաւատացելոց յինքեանս հնարին յանկուցանել։ Եւ որպէս ինչ զորտոցդ առնեն ազգ, զանդամն մարմնոց իւրեանց 'ի լիճն սուզանելով, զձայնն եեթ բերանովքն 'ի դուրս առաքեն, միանդամայն և գտանին և կորնչին. սոյնապէս և ասացեալքս այսոքիկ, տղմասերք և ժանտագործք, առ միմեանս անպատկառացոյցք են պղծումն, խակ 'ի թէնջ վրիպանուն պատրողաբանութէ զանիւլանալ կարծեն։ Աչ գիտեն՝ թէ որպէս հօտոցն անկարածածկելիք են, ընքեամբ առ հոտոտելիմն բերեալ, բուրմունքն. սոյնապէս և վասն գործոցն հողմով համ բաւուցն զյուլովից բախեալզեկուցանէ զլսելիս։ Վասկայն և գժուարագիտելի է յոքնազան և բազմա-

խուռն 'ի նոսա անտառացեալ ըարութին : «Վանդի որոշաբար սատանայականն ուսմունք 'ի մի իմ տեղի հաւաքեալ ծովացան ուղիւք ամսպարշտութեն նոցա :

«Ախիկին մծղնէութեն պայզակենուն իւեցերանք . որք խրատեալք , և ոչ իմաստնացեալք , 'ի 'Աերսիսէ կաթողիկոսէ , զինի նորուն մահուանն խուսեալք չոգան զօղեցին յոլորտս ուրեք աշխարհիս մերոյ : Աւ 'ի նոսա հատուածեալք եկին յարեցան կշամքեալքն 'ի կաթողիկոսացն Վցուանից պատկերա մարտք ոմանք . զի սիրէ առ համանմանիմն իւր հասանել վրիպեանն 'ի ճշմարտութին : Աւ մինչ չե նոցա զօրավիզն գտեալ զկարապետս դերաքրիստոսին , երկուցեալք և սարսեալք կային յուղիդ և 'ի գերապանձ կրօնից քրիստոսականաց . մանաւանդ թէ և ինքն զինքն դատապարտէ անզգամն , յիւրոց տանջեալ խորհրդոց : Խակ յորժամայսմիկ որպէս մեծագունի ինչ և նորոյ՝ հնացելոյս և աղօտացելոյ՝ հասանել կարծեցին , յայնժամ 'ի գարանամութեն իւրեանց սողեալ յորջից՝ յաշխարհամէջս և 'ի ժողովրաբնակս համարձակեցան յարձակել տեղիս . 'ի հեղեղական հեղձուցիչ ջուրցն մասն հասեալ նմա , ՞ քիայ անուանելով : Ուրանօր 'ի միասին ընթացեալ կուտեցան ամենայն ուստեք , որպէս անզեղք աշխարհաց 'ի նեխաշաղիդ ինչ զէշ . և զանուանն իւրեանց զաղտախինս յանդզնեցան կախել զայնցանէ , որ զերկնից բարուեցն բուռն հարեալ ունիցին յուսով : Վնարեալք 'ի մարդկանէ և ածային բնակութեն արժանաւոր լինել գտեալք , որք 'ի վերայ երկրի զերկնայնոցն հանդիսանան կատարել վարս , զայսպիսեօքն անամօթին փոխել զամպարշտութեանն իւրեանց զմաղձ . անզգայեալք յայսոյն հայհոյութենէ , կուապաշտս ասելով :

Աւ նուաստանամ որով նախատել վարկուցեալք անուամբս , բարեպաշտաբար լուեալ . զի արդարեխակ կուեմք և կոփեմք և քանդակեմք և քերեմք որովք միանգամ ածապաշտութեանս մերոյ կատարին կարգք , զեկեղեցիս , զսեղանս , զիսաչս , զպատկերս : Վ. Ա. ոչ եթէ ընդ ձեռն այնոցիկ և համապաշտօն հեթանոսացն . զի նոցա մեհեանկքն կուոյն

ընդունարանք շինեալ լինեին . իսկ եկեղեցիք բարեպաշտացն տաճարք աղօթից և խնդրուածոց , և ժողովարանք որոց առ ած մերձենալ կամիցին : Յաղագս որոյ և կարի յոյժ աննմանիք միմեանց են տաճարն այ և մեհեանք կոռոցն . որպէս և Պաւղոս ասէ :

**Դարձեալ՝** նոցա ձեռագործքն յախտէ իմեքէ ըսկիզեն ընկալեալ՝ դրօշեցան , որպէս յառաջն ասացի . և իւրաքանչիւրոցն ախտից դեն 'ի ներքս ընթացեալ , ընակարան իւր զկոռոցն առներ զմեհեանս . և այս է , զոր մարդարէն ասէ , թէ « **Ոմենայն կոռոք հեթանոսաց , դեք են** » . կամ բարկուե դեն , կամ ագահութե , կամ սպանութե , կամ պոռնկութե :

Իսկ եկեղեցիք հաւատացելոց ածսիրութեանն փափաքանօք շինեցան . յաղագս որոյ և ած 'ի ներքս եկեալ դադարէ , և երկնայինքն դասակցեալք 'ի նոսին պարեն զուարթունք : **Օ** 'ի ուրանօր ած յայտնեալ , ամենայն իրօք և զհրեշտակացն իմանամք շուրջ կացեալ 'ի սպասաւորութե բազմութի :

**Դարձեալ՝** կռապաշտիցն զմեռելոց ոմանց զնմանութի յանշունչ նիւթս կերպագործեալ տպաւորելով , յաղագս որոյ միանգամայն և 'ի նախտապէն և 'ի պատկերէն զրկեալ լիներ յուսոյ պատկերագործն : Իսկ մեք զկենդանին և զկենդանացուցին քոյ յամենայն նիւթս մարդակերպ նմանուք նկարագրեմք . նորին աղագաւ և հաստատուն է յոյն մեր . զի « **Որ հաւատայ յիս , ասաց ինքն , զմահ մի տեսցէ . այլթէ և մեռանի , կենդանի է :** յաւ որպէս յասայիասն ասէ . « **Տը ած Դարայելի , 'ի ծագաց երկրի արուեստու լուաք , յոյս բարեպաշտի . և ասիցեն , խորհուրդ իմ ինձ և իմոցն , այս ինքն 'ի ձեռագործ արուեստէն զառաջի կայ յուսոյն խորհուրդ երաշխաւորեալ , սեպհականէ անձինն և իւրայոցն : Իսկ զնոցանէ ասէ . « **Իման նոցա Եղիցին արարօղք նոցին , և ոյք յուսացեալ են 'ի նոռասա , և եթէ « **Ոմայեսցեն ամենեքեան՝ ոյք երկիրպագանէն կռոց , և ոյք պարծին 'ի դրօշեալս իւրեանց » . և 'ի նոցանէ ամենաւար դեքն ըստ իւրաքանչիւրոց ախտիցն վերակացութե զպաշտելութիս պահանջեն :** Որպէս վամն պոռնկուե դիւին դրեալէ . « **Ոտին 'ի Եղեքովլը , և օտարացան յամօթ իւրեանց . և եղեն******

գարշելիքն իրրե զսիրեցեալս, Հաղագս սպանուե դիւ  
ւին ասէ, «Օ ոչեցին զուստերս և զդստերս իւրեանց  
դիւաց, և հեղին զարիւն անբիծ, »: Վրբեցուե դիւին  
աղագաւ ասէ, «Հարեաւ կաթեաց 'ինոսա այս մօլո  
րութե գինի և արբեցութեն, »: Տարրատոփուե դեն  
ստիպէ զիւրմն հնազանդեալս, որոց և դիպէսցին բա  
րեքաձեաց տարեց և գեղեցկակերպից՝ երկիր պագա  
նել. որպէս և ուսան իսկ առնել կարկանդակս տիկ-  
նոջ երկնից, և նուիրել նուերս արեգական : «Իոյն-  
պէս յերկրի առ փայտն աղաղակել վարդապետեր՝  
հայր իմես դու, և քարին՝ քո իսկ ծնեալէ զմեզ. և  
'ի վերայ լերանց և բլրոց հրամայեր զոհել, 'ի ներ-  
քոյ կաշնեաց և կաղամախեաց և վարսաւոր ծառոց  
իսկ 'ի մէնջ «Օ ի՞նչ հայցէ որ անձ մեր, բայց առնել  
իրաւունս և գործել զարդարութի, »: և «Ո՞ի չարի չար  
հատուցանել, այլ յաղթել բարեաւն չարին, »: և թէ  
«Խաղաղութի արարէք, և ան խաղաղուե եղիցի ընդ-  
ձեզ, »:

Այսք և որ սոցին նման՝ սիրելիք մեզ լինել հրա-  
մայեալ յայ, իսկ 'ի նոցանէ ատեցեալք՝ դիւացն  
հրամանաւ, և որ ինչ միանգամ մեզ հրաժարելիք՝  
մեծարելիք նոցա: Վանզի սկզբնաչար դեքն և մարդ-  
ատեացք, ոչ միայն թէ զնոսա՝ որ նոցա ոչ են՝ կա-  
մին տեսանել չարչարեալս և նեղեալս, այլ և առ իւ-  
րեանցմն զբգուին պաշտօնեայս յարձակել չարա-  
րարութե և վնասահարութե: Օ որ և տեսանեմք 'ի  
ծառայութե զեկեալմն սատանայի խեղանդամն և  
ողեհաշմն, ծիւրեալս, ծմրդեալս, և կասեալս 'ի  
զօրութենէ: Իսկ մարդասէրն մեր որ և բարերար  
ընդ ողջոցն ոչ միայն թէ ոչ մախայ ընդ առողջութի,  
քանզի 'ի նմանէ իսկ և եղեալք և պահպանեալք  
այսպէս, այլ և ախտաժետայն 'ի վերայ բերէ զբժը-  
կութեն դեղս:

Եւ քանզի 'ի մարմնի ելով մեր՝ ոչ կարեաք նովին  
կապանակցաւ ընդ իմանալիմն խառնել, և յայտնա-  
պէս 'ի դէմն մեր բերել զարարչին մեծութիւն՝ որ  
և քերորեիցն է անտեսանելի, և ցանկայ միշտ բա-  
նական բնութիւնս գերագունի և առաջնոյ պատ-  
ճառին հասանել տեսութեամբ, նորին աղագաւ

ընդ զգալիսս յածեալ, և 'ի նոսին թակարդեալ, 'ի նոցանեւ և զինդրելին իւր յանձն առնու ընտրել. Եւ քամնզի ինքեան կամօք և ծառայեցուցանեւ, 'ի ստեղծանելն զնիւթն, և տիրացուցանեւ, 'ի պատուելն, ագահէ այնուհետեւ բազմաց լինել և արարիչ և պաշտօնեայ: Յայսմանեւ մոլորեցան մարդիկ զանց առնել զմի իշխանութեն, և բազմիշխանութեն ծառայել. աստուատ և կերպարանին այլայլեալ տգեղանայր ձեւ, զբազում ախտից և ցանկութեց յինքեանս երևեցու ցանելով շաղախմունս :

Ո՞նչև զթացեալ ստեղծողի պատկերին, եղեւ պատկեր ստեղծուածոյն. և որ 'ի սկզբանեւ արար զմարդն ըստ պատկերի իւրում և ըստ նմանութեն, ինքն եկն, և 'ի վախճան ժամանակաց այսոցիկ զկեր պարանս ծառայի էառ, և 'ի նմանութիւն մարդկան գտաւ եղեալ. զի 'ի ձեռն այսորիկ միւսանդամ զարդարեսցի զեղեցկագունութեն յօրինեալ պատկերն ըստ առաջին աստուածատեսակ նմանութեն, Եւ այս է, որ զմարմնացելոյ Շամնին այ վարդապետեաց մեզ պաշտել զկենդանագրեալ մարդկային ձևով զպատկեր, և զպատուականն զայն յաղթութեն նշան: Որոց երկրպագեալ, ոչ յերկուանամ՝ նմին ինքեան բազմեցելոյն 'ի նոսա Վ՞նի զերկրպագուն մատուցանել, ոչ հայելով յերեւելին առաւել քան թէ զանտեսանելին 'ի նմա գանձեալ ընդ միտ ածելով: Ուեպէտ և 'ի զանազանից և յայլատեսակաց իցէ նիւթն, զմի և զնոյն յամենեսին տեսանեմ զօրութի:

Ո՞ի թէ յօրժամտեսանեմ քարեղէն կամ ոսկեղէն խաչ յօրինեալ և կամ պատկեր, 'ի քարն կամ յոսկին դնիցեմզզոյս իմ: Վայ նոցա է՝ որք ընդ քարին և ընդ փայտին չնային. որպէս մարդարէն ասէ, և զորոց Շաւիթն ասէ, թէ « Առուոք հեթանոսաց արծաթ և ոսկի են»: Խակ մեք զայն միայն յիւրաքանչիւրոցն բացորոշեալ պատուեմք 'ի նիւթոց, յօրոց վերայ զնմանութիւն պատկերին Վ՞նի և խաչին իւրոյ ձևացուցանիցեմք: Ա ամն զի անունն և նմանութեն զերկոսին հարկեցուցանէ, Վ՞նի ընակել 'ի նոսա, և մեզ աներկրպայելի սրտիւ մեծարել: Եւ ոչ

միայն այս, այլ և քահանայական ձեռնն և բանն զլրտորդութեն սրբոյ 'ի նոսա կոչեալ քնակեցուցանել զօրութին . որով ձեռամբ և բանիւ պարշեք և պատուհաք 'ի մարդիկ կարկառին, որովք և երկնայինն փակեալ և բացեալ լինին դրունք, որոց և տարելքս ամենայն տեղի տուեալ հնազանդի :

Եւ զի՞նչ ասեմ զբան և զձեռն, որ և զի նոյն ինքն Հոգւոյն սրբոյ առհաւատչեայն վատահացուցանել զմեզ, իբրև 'ի գերազանցեալս ոմանս և յատուածաբնակս 'ի նոսա մերձենալ և ապաւինել. զիւղոյն սրբոյ ասեմ զչեղումն, որով իւիք զքահանայմն և զթագաւորսն 'ի նախնումն աստուածեղին Հոգին յամցնիւրսն շարժէր ներգործութիւնս : Եւ ամենայն ուրեք առ ամենեսին պարզեաբաշն Հոգին իւղովս այսուիկ զիւրն գտանի կատարեալ խորհուրդ:

Օ որօրինակ երկտեսակ բնութիւնս է մարդկային, երկպատկաբար և նորոգող որ Հոգին առ մեզ մերձենայ . նիւթականաւն զզգալին զուարձացուցանել, զի «Եւղղուարթ առնէ,, ասէ մարդարէն. և ինքեամբ զիւմանալին որ 'ի մեզ զօրացուցանելով. «Հրամայեա, ասէ, ած զօրուեքում՝ զօրացուցանել զոր հաստատեցեր 'ի մեզ»: Եւ զի մի կեղակարծելի ումեք թուիցի իրողութեն իւրոյ գործ, մարմնաւոր տեսլեամբ 'ի սկզբ բանն 'ի վերայ ազգակցին իւրոյ իջեալ հանգչիւր, առհաւատչեայ զայնպիսաբար երկեն աշխարհի կամեցեալ գործել աներեւութապէս իւրոյ գալատեանն . որում աշխարհ ոչ կամեցաւ զաշացն տեսութիւն սրտին կազմել տեսուե ճանապարհ : Եւ այս է, զոր ասեր որին 'եթէ «Իշխարհս ոչ ընդունի զնա, զի ոչ տեսանէ և ոչ ճանաչ զնա . բայց գուք տեսանէք, զի առ ձեզ բնակէ»:

Որպէս և ահաւասիկ մեք բանիւ առաքելոցն հաւատացեալքս ամենասուրբ Երրորդութեն, նկատեմք օծեալ իւղովն զփրկութեն գործարանս . զեկեղեցիս, զսեղանս, զխաչս, զպատկերս, և հաւատամք ընդ նմին 'ի ներքս գալ ածային զօրուեն : Եւ այսուիկ որոշեալ լինին նոքա 'ի հոմատեսակ յիւրաքանչիւրոյն նիւթոց . զատանիմք և մեք յայնցանէ, որք 'ի համանգամայն նիւթ ածութեանն կարծեօք

խաբեալք գրաւին : Եւ նշանակ հաւատարմութեն  
այս է մերումն բանի . զզօրութիւն և զնշանմն 'ի նո-  
ցանէ առ մարդիկ կատարել , դիւաց սարսել և փա-  
խրստեայ լինել : Աստ գրեցելումն , եթէ “Ետուր եր-  
կիւղածացքոցնշան , զի ապրեսցին յերեսաց աղեղան , .  
որ մանաւանդ անհաւատիցն՝ քան թէ մեզ'ի դեպ էր  
ըմբռոնիլ հիացմամբ և 'ի հաւատմն հպել . զի  
“Եշանք անհաւատից և ոչ հաւատացելոց ” ասէ  
Եռաքեալ : Ոչ կարեին անշունչնիւթք 'ի կենդանի  
մարդիկ օգնականութեն մատուցանել շնորհ , եթէ  
ոչ ած 'ի նոսա էր բնակեալ :

Եւ մի գայթագղիր տարակուսեալ , 'ի լռելն և ոչ  
ցասմամբ 'ի վերայ հարկանիլ հայհոյչացն և թշնա-  
մանողաց . քանզի հասարակաբար երկոքումբը տե-  
սանեմք վարեցեալ զած՝ երկայնմտութն և վրէժիւրն  
դրութք , ոչ ամենայն տեղի կամժամանակ կամդէմ  
երկոցուն կամմիոյ 'ի նոցանէ . այլէ երբեք , և ուրեք  
և ումեմն և ոմամբ 'ի նոցանէ , որպէս զիարդ ճա-  
նաչէ ածային կանխատեսութիւնն : Եւ մի յամա-  
ռեսցիս՝ անհաւատութեան խորհրդովք 'ի վայր ան-  
կեալ . իբր թէ անհնար է այ յամենայնսս լինել 'ի  
նմանէ գոյացելոցս տեսակս . “ Ինե , ասէ , լի են եր-  
կինք և երկիր ” . և “ Եի են փառօք նորա ամենայն  
երկիր ” . այլ առ ներգործելն այնոքիւք միայն տնօրի-  
նել , որովք կամեսցի ինքն , և ժամանակին պահան-  
ջեն պէտք :

Հերձանէր զծովս Առվսէս գաւազանաւն , և յա-  
մուլ վիմէն գետս զնացուցանէր . ոչ եթէ անշունչ  
փայտին զայնոսիկ համարիցիմք առնել զհրաշագոր-  
ծութիւն , այլ որ 'ի նմա դարանեալն էր՝ ածային  
շնորհացն : Արգելոյր տապանակն զՅորդանան գետ .  
զնոյն և բաժանէր մաշկեակն Եղիայի : Երեքովի 'ի  
վայր կործանէին պարիսպքն 'ի տապանակէն : Ոզա-  
մեռանէր յօդնելն տկար զօրութք հզօրագունին .  
զայլազգիսն հարկանէր յերաստանս , և 'ի սրունս .  
զդագոնականն ընդ յատակս բագնին տապալեալցը-  
րուէր զկուռս , կռապաշտիցն ածպաշտութեն շաւիլ  
ցուցանելով : Աի թէ յանշունչ քարանց կոփեալ պնա-  
կիտքն զայսոսիկ առնելով , եթէ ոչ ինքնին ած՝ որ

՚ի նոսա միաւորեալն էր, ժամանակին զայն պահանջեալ:

Եւ արդ զի ցուցաւ՝ թէ ՚ի հնումն և ՚ի նորումն կամք եղեն այ յանշունչ նիւթս լինել, և ՚ի նոցանէ առ մարդիկ զօդտուեն մատակարարել զպէտս, ցուց ցուք և զայս, թէ և պատուելի և պաշտելի մեղ այսոքիկ՝ յորս ած իցէ: Ի՞այց մի ՚ի վերայ վազեսցեն պար զաբար ասացելոց բանորսակացն դրժողութիք. իբրև թէ զի ամենայն ուրեք ած, ապա ամենայն գոյքս պաշտելիք. անսուտ ուրեմն զարարածս փոխանակ արարչին մեծարօղք: Վահւ լիցի. այլ ՚ի հասարակացն միայն նոքա, զորս ՚ի ձեռն առեալ՝ իբրև գործեաւ իւիք ած զբարերարութեանն ՚ի մեղ հեղու զինամն: Ի՞ազումք ՚ի Ի՞աբեղոնի պատուական անօթք ոսկւոյ և արծաթոյ, այլ միայն յաղագս ածային անօթոցն կրեալ զպատուհամն Ի՞աղտասար արքայի. և յոքունք յաւուրս Ի՞աւթի ոսկէզօծ յօրինեալ արկեղք, բայց կաքաւելն և նուագել միայն տապանակին այ առաջի ՚ի Ի՞աւթէ լեալ: Աչինչ պակաս և առ Այօղոմնիւ գեղեցկակերտեալք ՚ի տեղիս տեղիս տաճարք, այլ յիւրայեղեանն ազգ յառ ՚ի նմանէ շինեալն եւեթ ժողովեալք ամենայն ուստեք ՚ի խնդրել զած: Ի ստայսմբանի և տէրն յանդիմանեալ սաստէր այնոցիկ, որ զպարունակօղսն անսլատուեալ զտաճարն և զսեղանն, պատուեցին յատուկ զպարունակեալսն առ ՚ի նոցանէ՝ զպատարագն և զոսկին. ասելով, “Արյերդնու յընկալեալսն՝ երդուեալլինի յընդունօղս նոցին,,: Օ նոյն և մեղ ՚ի դէպ է ասել, որ պատուէ զիսանն Ի՞ո՞ի և զպատկեր նորին, զնոյն ինքն պատուեալլինի զի զի՞ո՞: Նոյնպէս և թշնամնելովն զնոսա, ՚ի Վալինի մեղուցեալ թշնամնին:

Այս այնքան առաջի անկեալ ձգտեցաւ բանս, որքան թէ զլեզուագարիցն առ ՚ի պապանձեցուցանել զաւելաբանութիս. որ ծամածուեալ խաթարել զմիտս մեր խորհին կռապաշտուե անուամք: Այս որս ասելի է. “Ար անօրիննելոցն է, անօրինէ: Ի՞այց դուք եւեք ՚ի միջոյ նոցա և մեկնեցարուք. և ՚ի պիղծս մի մերձենայք: Օ ի ամտունկ, յայ ոչ տնկեալ, խլեսցի,,: Օ որ և հրաւիրեալ առաջի կալցուք բարձրագոյն և

ամենազօր բազիին, որ կարօղն է խարշելիքը զփուշ  
ագարակի զհեթ անոսական բոյմն, մղեղել և արտաքս  
ընկենուլ. և դնել զգադարս նոցա 'ի բնակութի գա-  
զանաց երկրի և թռչնոց երկնից :

Վրդ զմեղ յառաջ կոչէնա ՝ ինքն ընդդեմ յառնել  
երկակաց ումանց առ միմեանս մենամարտուցելոց յայ-  
լազգեացն գնդից, և ամբարտաւանութ յառաջ կոչո-  
ղաց զմեղ, որպէս յայնժամ Կեթացին զ՛յաւիթ :  
Վայլ և զկենդանականն որ 'ի մեղհաւատ, սրեալիքը  
օձի խօսարանացն իւրեանց սրով սատակել սպառնա-  
ցեալ, որ ըստ նմանութ թռչնոց Ճախրեն դիւրագարձ  
լինելով, և գազանաբար խրոխտանան գօշել և պա-  
տառել : Յաղագս նոցուն ապա և մեր տծայնովն զի-  
նազարդեալ սպառազինութեք, հաւաքեսցուք 'ի հե-  
ղեղագնաց կենցաղոյս՝ զգայութեցն որ 'ի մեղզկարձ-  
րութի, 'ի հոգեկանումն պահպանելով խորհրդարա-  
նի : Վայլ և զկորովագոյնն 'ի նոցանէ ընտրեալ զբա-  
նին Ճահաւորութի, գնելով յիմաստութեցն մերոց  
պարսատիկս, ուղղաձիգ արարեալ ջաղխեսցուք զվե-  
հագոյն և զգերակացեալն 'ի նոսա չարապաշտուեն  
անդամ : Եւ նոցուն իսկ չարաչար ասացուածոցն զի-  
նուք զնոսին սատակեսցուք, աւար առնլով և գերե-  
լով զհպարտացեալ նոցա խորհուրդս 'ի վերայ գի-  
տութեն այ, որք նմանապէս են այ և մեր թշնամիք,  
և մերումս ոչ հաւատան՝ զուգահաւասար առ եր-  
կոսին ունելով թշնամութի . այլ զըսպարտելով բամ-  
բասեն, և իրերաց գոլ ասեն զմեղ ձայնակիցս և հա-  
մախոհակս : Եւ այս է քան զամենայն գժնդակա-  
գոյն մեղ 'ի նոցանէ վտանգ. քանիւ առ ընկերն մը-  
ղել, և ձեռամբ առ ինքն յանգուցանել . օսոխինն  
վիրօք խարել զսիրտն, և 'ի ծածուկ ընդ ինքեան յա-  
բահիւսել ջանալով . զայն միայն գտեալ անձին յաղ-  
թութի, զստելն և նախատինս զմեօք արկանել զօ-  
տարուտոցն լուտանս : Խոկ մեք այսքան յերկոցունց  
'ի նոցանէ հեռացեալ գտանիմք, որպէս ոչ է հաղոր-  
դութի լուսոյ ընդ խաւարի, և ոչ զայլք ընդ զա-

ռանց ընտանասցին համակամութե՛ : Ի՞այց է և ոչ  
սուդ ինչ և զոր առ միմեանս ունիցին նոքա զթշնա-  
մուի . վասն զի իւրաքանչիւրոյն նոցա չարափառու-  
թիւն յոյժ աննմանիք են միմեանց և տարանջատա-  
կանք : Վաճանզի մին միով ձանապարհով, և միւսն եր-  
կուք, որք ոչն են անմոլար, հակառակին անհասանե-  
լի մարդեղուե բանին հասանել :

Դւ այս մինչեւ ցայս վայր եղիցի :

# ԵՐԵՒԱՆ

ԸՆԴՀԱԿՄ

## ԵՐԵՎԱՆԻ ԹԱԿԱՆՆԵՐԸ

**Յ**ԱՅ տեհնչալի էր ինձ և փափաքելի, ոչ այլոց զիս, և ոչ զայլս ինձ լինել՝ի թշնամութեն. այլ յամենայն ժամ զբարեաց զհետ երթալ ըստ առաքելական հրամանին՝ առ միմեանս և առ ամենենին, 'ի բոլոր սրտէ առ համօրէն մարդիկ զխաղաղութիւնն ունել խնդրելով։ Որպէս զի նովին և զածն սիրոյ և զխաղաղութեան ՚ի մեզ հաւանեցուցանել հնարքաք բնակել տալ Շայց վամն զի զոր ՚ի սկզբանն ՚ի բաց հրամայեցաք գնել զապանութեանն գործիս, վերստին այժմ աւասիկ ՚ի ձեռն առնլով մարդիկ պատերազմին առ միմեանս, և ընդ միոյ գլխոյն Վասի անդամոց՝ բազում գլուխք և ցեղապետք նստեալ կացին, ապա հարկ է մեզ՝ որ զմին միայն ընտրեցաք ունել զօրագլուխ և վերակացու կենաց մերոց, որք ոչ միայն այ զմեզ ասեմք, այլ և վամն նորա գիր հանեմք, և յանուն նորա խրախոյս բառնամք, յաղագս նորին ահաւասիկ և ատեամք զատելիս նորա + զկատարելագոյնն զնոսին ատեսցուք զատելութիւն։

**Ա**յլ և ասացից առ նոսա. « Ո՞ի կեցջիք, փոխանակ զի սուտ խօսեցայք յանուն տնն,, ըստ մարդարէ ին ձայնի։ Եւ զի՞նչ ստել չարագոյն կայցէ քան զու խոստովանել զարդ մարմնով եկեալ. զոր մոլորեցուցիչ և ՚ի, եռն անուանէ մեծն Հովհաննես։ Վանզի այն քան նըրեն և նուաղեցուցանեն նորա՝ զորոց բանս է, որ վասն Վասի մարմնոյն մտածութիք և ձառք, մինչ

զի առ աշւ երևութեն կարծիս արկանել մարմնացելոյ բանին, որքան ՚ի զօրութեն բանից նոցա ՚ի միտ առնուլ է : «Վանդի զամենայնն ՚ի ՚Վ՛՛ ըստ մարմնոյն կիրս՝ ոչ առնուն յանձն ասել ըստ մարմնոյ և կամ մարմնով . զի մի երկուց, ասեն, ակնարկութեն տայցեմք բնութեց ՚ի մին ՚Վ՛՛ այլ ինքն իսկ Շանն անձ էր՝ որ ընդ երկոսին անցանէր, ասեն, ընդ մարդկայինն և անձայինն :

Օ արմանամընդ այսպիսի կեղակարծ և գայթե՞ի գայթե՞ խոստովանութիւն . եթէ անմարմնապէս ըդմարմնականսն կամելի էր կրել ՚Վ՛՛ ի, ընդէր և մարմին զգեցաւ ՚ի կուսէն՝ իննամսեայ ժամանակաց յղացութեք, և ծննդեամբ յառաջ եկեալ երեեցաւ տղայ, ՚Վատանիցէք, ասէ, մանուկ պատեալ ՚ի խանձարուրս, և եղեալ ՚ի մնուր,, . և «՚Վղելոյ ՚ի զաւակէ ՚Վաւթի ըստ մարմնոյն,, . և «Հորոց և ՚Վ՛՛ ըստ մարմնոյն,, . և «Վեծ է խորհուրդ անպաշտուեն, որ երեեցաւ մարմնով,, . և «՚Վ՛՛ չարչարեն մարմնով,, ասէ . և «Ուեպէտ և մեռաւ մարմնով, այլ կենդանի է հոգւով,, : Վայլ ակամայ կուրութի ցանկայ՝ ոչ տեսեցելոցն լինել տեսօղ, իսկ կամաւոր կուրութի ինդրէ՝ ոչ լինել տեսեցելոցն տեսօղ :

Վայլ և ոչ ՚ի կուսէն, ասեն, մարմնանալ, այլ ՚ի կուսին. զի մի արդեւք ՚ի կուսէն ասելով զմերս յիշեցուցեալ ՚ի ներքս ածիցեն բնութի : Իսկ ՚ի կուսին ասացեալ ինքն ապա, ասեն, Շանն անձ մարմնացեալ լինի յարգանդի կուսին : Բատ բնութեան զմարմնանալս տայբք բանին, հարցանեմ զձեզ, եթէ ըստ առնիքն զառ ՚ի մէնջն միաւորելոյ : ՚Վթէ յիւրն ընկալաւ զայս գոյացութի, լուծեալ եղեւ յայնմանէ՝ յորումէրն, ՚ի նանիր է և յոյս փրկութեն մերոյ : Շայց կարծեմ զայլ ինչ երկնել մոտաց ձերոց՝ այսպէս կեղծաւորելովգ : Օ ինչ արասցես և զհրեշտակապետին ձայն . «Որ ՚ի քէն ծնանելոցդ է,, ասէ, և ոչ թէ որ ՚ի քեզ . և եթէ « Վապեաց անձ զորդին իւր, որ եղեւ ՚ի կնոջէ,, . և թէ « Վապեցաւ անձ յայ, և առ հոգի և մարմն ՚ի կուսէ . և եթէ « ՚Վ՛՛ ՚ի կուսէ . կանայք, կոյսք լերուք,, . և եթէ « ՚Վառաւ ՚ի Վարիամայ սրբոյ կուսէ,, : Գիտեմ զի զայսոսիկ

լսես, և ոչ հնազանդիս . զի Եղիցիս 'ի կորուստ ան-  
հնազանդեալ որդիդ հարսմաց :

Իպա թէ յերկիւղէ տարակուսանաց է, թէ բարա-  
նելց ձեր, զնմանմն առնեք այնոցիկ, որք 'ի սրբյն  
զարհուրանաց փախճելով՝ գահավլէք եղեալ մեռա-  
նին : Իստ նմին և գուք երկուցեալք յերկուցն ասել  
ընութեց՝ 'ի Պանդորոսին փախուցեալ անկանիք յի-  
մարուի, որ զի՞ւնն 'ի մարմին և յոսկերս յեղեալ ա-  
սեր : Օ ի եթէ ոչ խորհրդոյ ակամք հայել դիտա-  
ջիք յաւետարանական ձայնն, « Իւնն մարմին եղեւ »  
ոչ իւիք հեռանալ կարիցէք յառաջասացեալ հայհոյ-  
ութեն :

Իստ նմին օրինակի՝ զմին ասել ընութիւն, եթէ  
որպէս պարան է ասել՝ ըստ Ճշմարտութեն կարգի ոչ  
ասիցեք, բազում շանց հօմատեսակք եղանիցիք զհայ-  
հոյութիւնն բարբառողաց : « Պանզի առ այս՝ ամենայն  
քրիստոսասիրաց լուսաւորեալ են մտաց աչք . զի ոչ  
է մի ընութիւն մարմնոյն և բանին ըստ նոյնուե ընու-  
թե . զի ոչ մարդկային երկոքին, և ոչ ածային : Այ-  
սմարմինն յերկինից իջեալ՝ ըստ առաջինից լուսակեայ բա-  
ջազանացն, և ոչ ածն Իւնն 'ի Վարիամայ առեալ ըս-  
կիզմն, որպէս Փոտինոսի թուեցաւ ասել . այլ Իւնն  
անեղ՝ յանեղագունելն իջեալ Հօրէ՝ մարմին ստացա-  
կան յարգանգել կուսին զգեցաւ : Իպա ուրեմն ոչ է  
ըստ ընութեն նոյնուե՝ մի ընութիւ . զի թէ և ասեմք՝  
մի ընութիւն Իւնն մարմնացելոյ, ոչ այդպէս խելայեղ  
և ջաղջախ մտածութե՛, որպէս թէ միոյն 'ի միւսմէն  
'ի բաց բարձեալ . և կամ լուծեալք 'ի միմեանց՝ որ-  
պէս խոնաւուտ ընութեանցն . յորմէ լինի և ոչ մի  
ընութիւ : Իւլ զոր երն ոչ 'ի բաց թողլով, եղեւ՝ զոր  
ոչն եր . և այսպէս բարձրագունին ծանուցաւ խոնար-  
հութիւ . մնայով 'ի բարձրութե՛ գտաւ նոյն ինքն 'ի  
խոնարհութեն . որպէս սրբն Վարիկոր ասէ . « Ուեպէտ  
և վանն մեր եջ յանարգութիւ , այլ կայ յիւրումըը-  
նութեն . որպէս և ինքն իսկ ասաց . Իչս նոյն եմ՝ և  
ոչ փոփոխիմ , : Քայանի եղեւ և մեքն մեծուի . ու-  
նելով զալատկեր ծառային՝ զգեցաք զալատկեր երկ-  
նաւորին : Եւ զայս՝ ինքն փրկին յայտնեաց ասելով.  
« Ես եկի՝ զի զկեանս ունիցիք, և առաւել ես ունիցիք ...

այս ինքն ոչ եկի զտուեալն՝ ՚ի բաց բառնալ՝ ՚ի սկզբանն զգոյացութեն չնորհ, այլ զածատեսակագոյնս զիմ ՚ի վերայ նորուն հաստատել: ՚ի անզի ոչ եկն յեղծամնել ստեղծօդին զստեղծեալն յինքենէն ստեղծուած, այլ վերաստեղծել զնոյն և նորոգել: ՚ըս այսպէս ՚ի գոլոյն ոչ ՚ի բաց կալով, մարդկայինն և ածայինն այնուհետե ասին ՚ի միաւորութեն և որոց ոչն է, ին գոյացութեան. այս է Շամնն ած մարդ լինելով և ասելով մնաց և այնպէս ած. և ածանալով մարդս և անուանելով ոչ երեք զիւրն ՚ի բաց կորոյս գոյացութի: ՚ըսպէս երանելին ՚չփրեմատէ. ՚ի վոփոխելով մարմինն յանմարմինութի, այլ ունի զինքեան զմարմինն՝ որպէս ծնաւ ՚ի կուօէն. և առաւելքան զմեզ, ըստ որում յածն Շամն միաւորեցաւ,,:

՚ըդ՝ յայտ է թէ անհասանելի միաւորութիւնն, և ոչ բնութեցն այլայլութի առաջնորդեն մեզ զմին ասել բնութի մարմնացեալ Շամնին. Օ սոյն և մեծահանձարն ՚ի աւելութէ ՚ըդեքանդրի հայրապէտ, ասելով. ՚ի մարմնոյ բնութի փոխարուսեալ Շամնին, այլ և ոչ մարմնոյն ՚ի նորայն, այլ ՚ի յատկութեան ըստ բնութե երկաքանչիւրոյ մնացելոյ և իմացելոյ, ըստ այժմու մեզ աւանդեցելոյ բանին՝ անհառելի և անսանելի միաւորութին՝ մի մեզ եցոյց որդւոյ բնութի: ՚ըդ՝ ՚ի յատկութե ըստ բնութեն ասել, զանշարմն մնալ ասէ յերկաքանչիւրոն՝ որոց է, ինն: ՚ի արդել միութեան՝ զամենայնսն խոստովանել՝ ՚ի ՚ի՞ն, մի դէմ, մի անձն, և մի նորա բնութի. զի որ ՚ի ՚օրէ անմարմին բանն էր, ՚ի ՚արիամնյ սրբոյ կուսէն՝ այս ինքն ՚ի մարդկային բնութես՝ մարմին զգեցաւ. և զնոյն միաւորեալ բնդ իւրումն դիմի և բնութե, մի դէմ, և մի բնութի ասի և հանդերձ մարմնովն: ՚ի եթէ անդոյ և կամ առանց մըտաց և անձին, և թանց բնութե զմերն ընկալաւ ՚ի կնոջէ, այլ ըստ ամենայնի կատարեալ առնլով առ իւրն միաւորեաց կատարելութի Շամնն որ ՚ի ՚օրէ. և այսպէս ասի մի կատարեալ՝ զմի ունելով կենդանութիւնն և զդէմ: ՚ի միութեն զերկաքանչիւրոյն ուրանամզկատարելութի, և ոչ յաղազս երկաքանչիւրոյն կա

տարելութե զմին հրաժարեմասել կատարելութե .  
միութիւն յսմայլայլութե , և անայլայլութիւն 'ի  
միութեան խոստովանելով :

Աբա ուրեմն մի բնութիւն և մի դեմքնի , եթէ  
պարտ է համառօտագոյնս ասել , ոչ է ըստ նոյնութե  
բնութե կամ ըստ միանձնականութե . զի այս զեր-  
կոսին 'ի միասին գրեթէ զրկեցէ , զած 'ի մարզն լի-  
նելոյ , և զմարդն յածանալոյ . այլ է , որպէս բազում  
անգամ ասացի , ըստ անձառ միաւորութե ։ Իանին  
ընդ իւրում մարմնի : Որպէս և սուրբն Վրիգոր ասէ .  
“Ոիացաւ 'ի մարմնի բնութք , և խառնեաց զմար-  
մնն ընդ իւր ածութեն , : Ի հաւասիկ ըստ անձա-  
ռելի և անպարիմանալի խառնմանն և միաւորուեն  
համարձակիմք ասել մի բնութի ։ Ի՞սի , և ոչ ըստ այ-  
լում իմլիք յեղանակի : Օ սոյն և երանելին Յուղիոս  
ասէ Հռովմայ հայրապետ . “Որ ասէ զմարմինն առ-  
նելի առ անեղն ած միաւորութք ածային և երկրը-  
պագեալ , և զերկախումբն իրբե մի անառնելի ած ,  
երանեալ եղիցի , : Ի՞ր երկոսին հաւասարապէս ու-  
նի երանութես բան , երկախումբ խոստովանեալ ըստ  
բնութեց , և մի ըստ միաւորութի : Ոի զմին ասե-  
լով զբնութեցն խցանել կամակորեցուք զաղբեւը ,  
և մի յասելոյ անտի զերկախումբն պատառել կամե-  
լով զմիաւորութեն պատմուձան . այլ բարեպաշտա-  
բար առ երկոսինն գալ գիտացեալ , միութին ձանա-  
չել զբնութինն , և 'ի բնութեց անտի ելանել առ մի-  
աւորութին : Որպէս հրաշալին ասէ Յովհան Առո-  
տանդինուպոլսի . “Ոիութի խոստովանիմ , և ոչ  
քայլայումն ինչ և լուծումն այսր բնութե յայն , կամ  
այնը յայս . այլ միացեալ , մի լեալ , : Ի բդ մի լեալ ,  
որպէս յառաջն ասացի , ըստ միաւորութեն գոլ ասէ  
զերելին և զաներելին , և ոչ ըստ համագոյութե .  
զի որպէս արգեւք եղիցի՝ որք ոչն են :

Իայց սակայն և զայս լեմք 'ի ձենջ ասացեալ .  
“Ոի բնութի զածայինն իսկ ասեմ , զոր 'ի Հօրէ ու-  
ներ զիւր զիսկական բնութին . զի ոչ ասի յարաբա-  
ձականացս ոք բնութիւն , քանզի արարչականն ասի  
միայն բնութի . իսկ զմարմինն մարմին Վհի ասեմ , և  
ոչ բնութի Վհի : Փախչիս 'ի բնութեգ անուանէ ,

ընդ նմին և յերկուցդ ասելոյ . և ոչ գիտես թէ մարմին ասելով՝ յերկոսին՝ ի ներքս ըմբռնիս յորոց փախ շխտ : Վարդ զնոյնս , որովք բարեպաշտելդ կարծես , հակառակ ընդդէմ քեզ եղից : Օ մարմինն՝ մարմին Ռանին ասելով , և զիանն ասացեալ մարմին ունել , զի՞նչ այլ Բնչ թուիցիս ասել , եթէ ոչ կրկին : Եւ դարձեալ զիանն ի Հօրէ ասելով , զՀօրն տացես նմա զբնուի . իսկ զմարմինն ի մարդկանէ ասելով զոյր ունել ասես նմա բնութի , եթէ ոչ զմարդկան : Բայց կարծեմ թէ կամիք և ոչ մարմին քո՞ի ասել . զի թէ զմարմինն շշմարտութք՝ խոստովանէիք ունել . Քոի , և զայն ի մարդկանէ և մարդկային , զնոյն և բնութիւն մարդկային ոչ արդեւք խղջէիք ասել : Վան զի նոյն է մարմին մարդկային ունել . Քոի , և բնութի մարդկային . և զի . Քո առանց միաւորուեն ոչ ասի . Քոչիս , այլ ած Ռան : Որպէս սքն Ռասիդիոս ասէ . “ Օ ի թէ ասիցէ ոք զմարմինն բնութի Ռանին , և զիանն բնութի մարմնոյն , ամպարշտութք լի է այս պէս ասացեալքն , :

Իսկ եթէ զմի և զնոյն . Քոյ յերկուց խոստովանես ցիս ասել բնութիւն , այսինքն ածային և մարդկային , ընդէլք զարհուրիս և զայրանաս , և այլանդակ և հայ հոյիչ շարադրութք զբարեպաշտաց պղտորես զլելիս : Վանզի ասես , որ ի Հօրէ գոյացեալ անձնն էր , նոյն անձնաւորեալ ի սուրբ կուսէն . և որ ի Հօրէ բնութինն էր , նոյն բնաւորեալ եղեւ յարգանդի կուսին : Եւ սակայն գոհութիւնն այ , որ յայտնէ ըզ խորս խաւարի , և հանէ ի լոյս զստուերս մահու . զի թէպէտ և շատ ջանացար կուրաշաւիդ իմն արահետիւք ծածկել և թագուցանել զշաւաքեալ ի քեզ զգառնութէ մաղձ , այժմ յածայնոյն բոհնադատեալ յակնարկութէ տեսլութին՝ ի վեր բղխեցեր : Վարդ զիարդ անձնաւորեցաւ ի կուսին անձն Որդւոյ . թողլով զիւր գոյութինն յայլում գտաւ գոյութէ , որպէս Պանդորոսն ասէ , եթէ յիւրումն մնալով զերեսւթական միայն զձեն զինքեամբ արկաւ , առ աչօք և ձեռվ եւեթ ցուցեալ զմերն ի կուսէ , որպէս Եւտիքէն երկրորդ յիմարաբար բարբառի՝ ասելով . “ Խոս տովանիմ զիանն ած յարդանդի կուսին կերպացեալ

տապաւորեալ, 'ի պատկեր և 'ի ձեւ մարդոյ եղեալ, այլ ոչ եթէ յարարածական բնութին ինչ յինքն խառնեաց. քան զի անխառն է անդութին և անյօդ,, : Տեսանենս, որպէս համաձայնք առ միմեանս գտանիք յամ պարշտելդ. դու ասես, 'ի հօրէ անձնն Որդւոյ անձնաւորեցաւ 'ի կուսին. և նա ասէ, ոչ ինչ խառնեաց 'ի կուսէն յանխառն անդութին :

Եւ եթէ ոչ գոյութինչ անձնաւոր զմերա 'ի կուսէ ընդ ինքեան միաւորեաց Շանն, զիարդ ինքն զինքն մարդ և որդի մարդոյ անսուաննեաց : Օ իարդ և տը ղայ երևեալ խանձարրապատեցաւ, և կաթնաբոյծ եղանիւր, և առ կատարելութին 'ի վեր ընթանայր աշմամբ հասակի, ըստ մեծին Վթանասի ուղղափառ դաւանութեանն . " Որքան ինքն, ասէ, հրամայեաց՝ զընութին կատարելով յինքն ընկալաւ . որքան կամեցաւն, այս է՝ ծննդեան 'ի կնոջէ, աշման հասակի, ամաց թուոյ, աշխատութե, ծարաւոյ և քաղցոյ, և քնոյ, և տրտմութե, և մահու և յարութե,, : Վայոքիկ ամենէքին նմանութիք և երևոյթք թուիցին քեզ եղեալքն 'ի Վայ, թէ չշմարտուի : Վապա եթէ չշմարտութիւն, որպէս և է իսկ . քանզի անհնար է անսուանն այս ստութեամբ իւիք կեղծաւորել 'ի գործս իւր . զիարդ իշխես ասել զաներեւոյթ և զանմարմին անձնն Որդւոյ մարմնաձեւապէս անձնանաւ յարդանդի կուսին, եթէ ոչ զկատարեալ մեր բնութիս 'ի կնոջէ յինքն ընկալեալ ընդ ինքեան միւ աւորեաց Շանն անձ առաքեալ 'ի հօրէ :

Եթէ այդպէս ասեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ գէմս, և երկուս բնութիս : 'Կարձեալ փախէլով 'ի մսոտի երկիւղէ, 'ի մեծագոյնն անկանիս չար : Եթէ յերկուց ըստ բնութե ոչ կամիս ասել զմինն, կարի յոյժ չարաչար ըստ բնութե զմին գտանիս ասացեալ բնութի : Վայ անմարմին բնութի անձային Շանին՝ զմարմնական բնութի 'ի կուսէն ընկալեալ, ընդ ինքեան միաւորեաց . որ է ըստ բնութեան յերկուց անձային և մարդկային . իսկ ըստ միաւորութեմի : Օ յի եթէ այս երկուք զեզեցկագոյն հաւատոյ ոտիւք առ չշմարտութին 'ի վեր կանգնեալ ոչ հաստատիս, առ որ և յենուցուս առ մինն 'ի նոցանի՝ կաղ

գտանիս առ խոստովանութիւն ճշմարտութեն . այլ  
կատարեալը ստերկաքանչիւրոցն դիտելով զերկումն,  
ըստ միաւորութեն մի կատարեալ, մի դէմ, և մի Որ-  
դի այ խոստովանելով . որպէս ոքն Շասիլիոս ասէ .  
“ Երկուց գոյացուեց կատարեցելոց միաւորութին :

Մոր դու հակառակարար ընդդէմ յարուցեալ  
գրեցեր 'ի քում շարագրածութիս անդ, և ասես . որ  
'ի Հօրէ բնութին է՝ նոյն բնաւորեալ է 'ի որ կուսէն :  
Ո՞նչ ի Հօրէ բնութին էր, զի՞նչ այլ ինչ բնութի յար  
գանդի կուսին գոյանացր : Օ մտաւ ած, յորքանեաց  
չարաչար հայհոյութեց պտոյտս ընկղմիս՝ զայդ այդ-  
պէս ասելովդ : Այժ հարքն 'ի Աիկիա ժողովեալքն աւ  
սացին՝ վնոյն բնութի Հօր վասն մերոյ փրկութեան  
ծնաւ մարդացեալ 'ի Վարիամայ ոքյ կուսէն Հոգւով  
սրբով : Եւ ապա 'ի շար արկեալ թուեն զկատարելուի  
բնութես մերոյ . հոգի, մարմին, և միտս . և նովին  
մարմնով համբարձեալ յերկինս . և նովին մարմնով  
գալոց է ասացին : Խսկ դու ասես . որ 'ի Հօրէ բնու-  
թին՝ բնաւորեցաւ յարդանդի կուսին . և յաղագս  
այնք ասի մի բնութիւն : Խթէ յարդանդի կուսին  
բնաւորեցաւ, ապա 'ի Հօրէ ոչ էր բնաւորեալ Վար-  
ձեալ՝ թէ յարդանդի կուսին սկիզբն էառ լինել մի  
բնութի ընդ Հօր, ապա նախ քան զիսոնարհեն յար-  
գանդ կուսին՝ օտար գոյր բնութեն Հօր : Եւ զայդ  
այդպէս զաւղակատելովդ՝ Վարիոսի եղեալ գտանիս  
չարապաշտութեն զուգաձայն :

Վարձեալ՝ զմի բնութինդ ապաքէն ընդդէմերկուս  
բնութիւնս ասողացն ասես գոլ . և որ երկումն ասէ  
բնութիս, զածայինն ասէ և զմարդկայինն . դու զով ոք  
'ի նոցանեւ ասես՝ զմիդ ասելով, կամ ըստ որում յե-  
ղանակի : Վարձ այսպէս շամբուշ խորհրդով բանդա-  
գուշիս, և ոչ զիտես գտանել զշաւիլս այ զդիւ-  
րինս . զի Շանն ած՝ գոյութի հանդերձ մարդկային  
բնութեք ընկալեալ յանարատ արդանդի կուսին՝ ընդ  
ինքեան միաւորեաց անձառապէս գոյութեն և բնու-  
թեն, ոչ զյառաջագոյն գոյացեալն . քանզի “ Օ գոյ-  
ութի մարմնոյն՝ միաւորուք բանին ծանեայ, ասաց  
ոմն 'ի սրբոցն . և այսպէս ասի մի դէմ, և մի բնու-  
թին Շանին մարմնացելոյ : Աւ ըստ ինքեան ասի մի

բնութիւն և առանձնաւորութիւն . քանի զի զայս 'ի հօրէ իսկ ամժամանակաբար յինքեան բերեր Շամնն ած . այլ ըստ անձառ տնօրէնութեն 'ի կուսէն : Որպէս առն Շասիլիոս ասէ . “(Ն)անեան 'ի Վարիամայ էութիւն 'ի նորա բնութիւն 'ու էր ած բնաբար , այլ միաւորութիւն տնօրէնութեն . վասն զի որ 'ի բնութիւն հօր էր ած Շամնն , 'ի բնութիւն Վարիամայ էառ զպատկեր ծառայի , և պտուղ որովայնի նորա գտաւ եղեալ ”: Եւ զայս նա : Վաղ ուրեմն 'ու բնութիւն ածային բնաւորեցաւ յարգանդի կուսին , որպէս գու գանդաշես . այլ ածն Շամն 'ի հօրէ զմարդկային զգեցաւ բնութիւն 'ի կնոջէ : Որպէս և մեծն Վարիամաս ասէ . “Ա ասն զի բնութիւն մարդկութեն էր՝ որ ծնանելոցն էր , վասն այնորիկ և չարչարեալ զնա նշանակէ ”: Վայրէս հայրն :

Շայց դու թէ ասիցես՝ մարդ եղեալ Ճշմարտապէս 'ի մարդկանէ զՇամնն որ 'ի հօրէ , ընդէ՞ր զանդիտես զմարդկայինն 'ի ՎՇ դաւանել բնութիւն . և աղամողիս 'ի բանս քո , և յայլմէտ առ այլ վազեալ անցանես տարապարտ մոտածութիւն : Երկնչիս յերկուց ասել բընութեց . երկիւղ մեծ գոյ , եթէ ու արժանապէս և զմին ասել ՎՇի բնութիւն : Իսկ եթէ իրաւապէս և բարեպաշտաբար զերկոսին լսես , ու ինչ է արգել զմին ասելով յիշել և զառ 'ի յերկուցն . և դարձեալ ու մոռանալով զյերկուցն , խոստովանել և զմին : Օ ի եռը հարքն՝ բարեփառութիւն հիմնացեալ հաւատով , աներկւան և անտարակարծ խոհականութեամբ՝ զէն անվթարելի զերկոսին զսոսա ընդ ինքեանս բարձեալ բերեին ըստ պիտոյիցն իրակութեն , զմի մի ոք 'ի սոցանէ շարժեալ շողացուցանէին ընդդէմ թշնամեաց Ճշմարտութեն : Վու այնոսիկ՝ որք ըստ Երտիքեայ , և կամ չուղիւանեայ չարապէս զմին իմացեալ ասեին , երկակի ասացուածով զբանիցն իւրեանց յօրինէին զառաջարեկութիւն . քանզի իւրաքանչիւր ոք սոքա՝ առմիմեանս բարեփառուագունին առաջնորդեսցեն մտաց :

Դպուղոյ անտի ծառն Ճանաչի , և յարմատոյ անտի ասի ծաղիկն : Հարցամնես զծաղկեն , արմատոյն անուածք նշանակեսցի . եթէ անունն 'ի միջոյ բարձցի , ապա և Շամն . և չարաքարձումն անուածն և բանի

վերաձգեալ ածցիս . անուամբ արմատոյն , տեսութեղ դունոյն , 'ի բուրմանէ անտի հոտոյն , և համոյն Ճա շակաւորութե : Իստ նմին օրինակի և առ փրկչական մարմինն վերաթեւեալ համբարձցիս . դաւանելով զնա տեսակին անուամբ՝ մարդք քայլով : 'Ի տեսութենէ անտի . « Ը օշափեցէք զիս և տեսէք , զի ոդի մարմին և ոսկերս ոչ ունի , որպէս զիս տեսանեք՝ զի ու իմ» : 'Ի մարդկային կրիցն . « Որովհնքն չարչարեցաւ՝ զփորձ առեալ կարօղէ և փորձանաւորացն օգնական լինել » : 'Ի մահուանէ նորա վասն մեր . « Քայլ մեռաւ վասն մեր ըստ գրոց » :

Վապա ուրեմն թէ և միովն ոչ զգաստացար , առ այլսն մի ըստ միովնէ ընթացեալ հարցջիք . և հաւանեցուցեն զքեզ համագոյ և համարուն ասել զտերունական մարմինն մարդկային բնութենս . զի այսպէս յերկուց բնուեց խոստովանելով , նշանակեսցես զնա մարդ միանգամայն և անծ : Խսկ մին ըստ բնութեան զնա ասացեալ՝ որպէս և ասէքդ իսկ , բացարձակ անուամբն եեթ նշանակեալ լինի . զիարդ կարասցես մարդ զնա եղեալ ասել և մեռանել , և մահուամբն զանմահութեան ՚ի մեզ աղքիւրացուցանել չնորհ » : Վ. յսորիկի աղագաւ անպատկառացոյցք որ հարքն երկուց բնուեց Քայլ անծայնոյն և մարդկայնոյն լիեալք . Շնութիք երկու ասելով , վասն զի անծ և մարդ , և եթէ՝ 'Ի միասին եկին բնութիքն , և եթէ՝ Հաւաստի զերկոսին ուներ զբնութին Քայլ . և եթէ՝ Արկին էր Քայլ . մարդ էր որ երեւէր , և անծ էր որ ոչն երեւէր . և որ այլինչ սոյնակիսիք յայլոցն ասացեալ եղեն : Ա եթէ զյերկուցն ասելով հրաժարէին ասել զմին , և կամեթէ զսորին հակառակն՝ զմին խոստովանելով յամառէին յերկուցն գալ խոստովանութի , այլ համարձակաբար երկոքումբքս այսոքիւք բարեփառուե զամպարօք փայլեալք պայծառանային , երկուս ըստ բնուեց , և մի ըստ միաւորուե գա Քայլ քարոզելով . ընդձեռն որոյ ցուցեալ լիներ Վատուծոյն Շանի բնուի անեղանելի , և 'ի Հօրէ . իսկ մարմնոյ նորին գոյացութիւնն ՚ի կուսէ , և արարածական . ասելով Ա զուգասպատիւս ասեմ զաւետարանչայն ձայնս , և ոչ ՚ի նոյունց արժանաւորութենէ ասացեալս .

այլ ոմն զբարձրութիւն տծութեամնն , և ոմն առ նը ւաստութիւն մարդկութեն զիջանելն նշանակեն . և թէ՝ Չարչարելի մարմնով , և անչարչարելի տծութեամքն : Եւ համայն սա՝ որ այժմ անչարչարելի ասաց ածուքն , յայլում տեղուջ մակաձայնէ , Վճ չարչարեալ : Վրդ որպէս զսոսա իմասցուք . միթէ մարտնչիցի ինքն ընդ իւր վարդապետո , քաւ լիցի . այլ զառաջնն ըստ ընութեն տրամարանէ , իսկ վերկ ըորդս՝ ըստ միաւորութեն բանի : Ոչ յորժամ ըստ միաւորութեն ասէ , ուրանայ զհասարակականն , և ոչ գարձեալ ըստ հասարակականացն ինչ ասացեալ բան՝ զմիութեն յերկուս բաժանէ միութիւնս . այլ յերկոսին անչարաբարոյական կամօք բարեպաշտեալ մերձենայ . զչարչարելին ըստ հասարակականին ան չարչարելի 'ի միաւորութեն խոստովանելով , և զան չարչարելին ըստ գոյացութեն բազմաչարչարելի ըստ միաւորութեն :

Ի, մանակի սմա և այլ ոք հարքն զիւրեանցն արձանացուցին խոստովանական բան : Ենորժամ ըստ ընութեն ինչ բարբառել հասաներ , համարձակապէս զերկաբանչիւրցն յիշեին զհասարակականսն . ոչ առ 'ի բաժանել զմին Որդի յերկուս որդիս , կամ յերկուս դէմն , այլ միայն յորոց էինն՝ ազգեալնաշնակէին , ասելով ոքին Շաբսղի . Ո աստակեաց յուղեորուեն՝ մարմնոյն և ջղացն յուղեգնացութէն յաւէտ ձգեցելոց . ոչ ածուեն աշխատութեն տաժանեալ , այլ մարմնոյն որ 'ի բնութեն յարմարագոյն էր՝ զպատահումնն ընկալեալ : Եւ որ այժմս ըստ մարմնոյն բնութեան զայս այսպէս մակձայնէ , այլուր ըստ միաւորութեն առ Շամնկ ած զայսոսիկ վերաբերէ , ասելով : Ես զթաղումն մարմնոյն և զգեստնորա ասեմ Շամնին . ոչ բնութեն ածուեն , այլ միաւորութեամբ անօրէնուեն : Այնպէս զձայնս զանձնականս , և զչարչարանս զանձնականս , զտրտմութիւնն և զզոփան , ոյ Շամնին ասեմ . ոչ բնութեն ածութեն , այլ միաւորութեն տնօրէնութեն :

Եւ այսպէս երկոքումքք այսոքիւք ուղղապաշտութեն շաւզօք առ խորհուրդ մարմնաւորութեն Շամնին վերերթալ զիտացեալք ոք հարքն՝ համարձակէին և

զբնութենցն արժանաւոր բարբառելքանս, և զմիաւորութեն մնօրէնութեանն պատշաճագոյնս, ասելով. Վաղցեաւ ըստ մարմնոյն, ծարաւեցաւ վաստակեաց ննջեաց. և այնու ոչ եթէ զածութիւնն ինչ թշնամանեաց, այլ վասն զմարմնոյն բնութիւն ձշմարտութեր յայտ առնելոյ: Եւ եթէ Ինվիշտ և ան մահ է Իւանն որ յայծօրէ. յաղագս այնը իւրացոյց իւր մարմնն՝ որ վշտանան կարէ: Եւ եթէ Ինդիւրում ածութեն միացոյց զբնութիւն մեր, և զամենայն ըստ բնութեն մարդկութես մերոյ առնէ և կատարէ միածին Որդին Իստուծոյ. այլըստ ածութեն բնութեն անախտ և անսկարօտ, և լցուցիչ և կատարիչ ամենայն արարածոց:

Որդ այսպէս բազմերջանիկ հարանցն անորոշաբար յիշել՚ի վերայ միոյ Ի՞սի, ոչ առ՚իբաժանել զմին՝ Ի՞ս յերկուս դէմս, կամ յերկուս որդիս, քաւ լիցի. այլ զառաւելագոյն աստուատ զամրութիւն առ ձշմարտութիւն հաւատոյն մնտեսել կամեցեալք. միանգամայն թէ և զարափառացն տապաստ արկանելով խումբս, որք ընդ ձեռն մին ասելոյն Ի՞սի բնութիւն, ուրանային զանսուտ նորա մարդեղութեն խորհուրդ: Օ վերջինն Եւտիքէս, որ ոչ համագոյական կուսին դժոխաբանէր զմարմնն Ի՞սի, և մի ընութիւն: Օ առաջինն Եւտիքէս, որ յերկնից և անստացական ասէր զմարմինն Ի՞սի, և մի ընութիւն. զլ աղենտիանոս և զլ անի, որ կարծեաւք ասացին զերեւումն Ի՞սի, և մի բընութիւն. զլ պողինար և զլ ոփրոնիոս և զլ ուղիանէ, որ կիսաբաժ և ոչ կատարեալ զմերս ասացին բնութիւն առեալ Իւանին ՚ի կուսէն, և մի ընութիւն: զլ շնոմիոս և զլ քրիոս, որ զաներեւելի արարած ընդ երեելի արարածոյ շարակարգեալ ասաց զլ Իւանն ընդ մարմնոյն, և մի բնութիւն:

Խակ շաբաթուն ըստ համգստեան աղօթից խոր հըրդոյն կարգեալէ • վասն զի շաբաթ՝ համգիստ ըստ երրայեցւոց ձայնին է, և կատարումն յաւիտենից • յորումն և մարտիրոսացն համգիսից յիշատակն պատմի, որք զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօք և ցան կուք հանդերձ, խաչակից լինելով առաջին վկային 'ի խաչ ելելոյն, և զիս ժողովողին • յոր ապաւինեալ մանկանց եկեղեցւոյ 'ի նոցա կարողքարեխօսութին, աղաղակեն ողբերգագին ձայնիւ, եթէ « Աբաքեա տեր, զլոյս քո և Շմարտութիգ քո », զի նոքա առաջնորդեսցեն ինձ մոլորելոյս 'ի գիտութի Շմարտուե • հանցեն զիս 'ի լեառն սուրբ և 'ի յարկս քո, զանա պատացեալս 'ի գերակայ բնութենին 'ի ստորին նըւաստութիս :

Խւյետ այնորիկ զգոհացողական քարոզն ծաւալեցուցանէ, յաղաւեն զամենական ած՝ որ այսպիսի պանձելեօք բարձրացոյց զազգս մարդկան, անխոռով պահանեալ 'ի ներկայումն • և աղաւէ զի յապագայսն անփորձ պահեսցէ զեկեղեցի իւր մինչև 'ի գալուստ միաձնի իւրոյ • զոր և առ նմին առեալքա հանային զաղօթը ժողովրդեանն մատուցանէր առ ած, հաստատուն կալ և մնալ 'ի կամն պատուիրանապահութին նորա • և առաքելական խաղաղական քարոզութին վարիլ 'ի կենցաղումն, առ 'ի լինել տաշար մաքրութին սրբոյ Խըրորդութեն. և արժանաւոր ձայնիւ և սուրբ խորհրդով փառաւորել զմիածին Արդին այ, սրովեկիցն երեքկին սրբասաց ձայնիւն, յասեն՝ թէ « Առւրբ ած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ » :

Այտանօր որոշիմք 'ի Հունաց կարգէն. խակ առ մեզ պայծառանայ երեքկին սրբասացութին, որ քարոզեցաւ 'ի սրովեկից ձայնէ 'ի մէջ մարդկան • զառ 'ի նոցանէ ասացեալն զաղօտաքար հնչումն առեալ

մարդկան՝ շարակապեցին ընդ այ հզօրի և անմահի . ումանք միամսնական ՚ոք Երրորդութեն, և այլք 'ի վերայ Որդւոյ միայն զայն վարկանելով . և յայնմանէ ատելութի և թշնամութի և հակառակութի մեծ :

Խոկ աստ ապաեգից 'ի բանիս մերոյ տեսութիւն, և լուծումն առաջակայիս : Այդ որպէս ինձ հասու եղեւ, եթէ ամենայն տեսութիք մարդարէիցն պատգամացն Որդւով տնօրինեալ յօրինին, և մի է յլ յրրորդութենէն տէր մեր Հիսուս Քրիստոս, զոր Եսայեանն ետես նստեալ յաթոռ փառացն, որով սրովելքն շուրջ կալով զաղօտարարն նուազէին զհնչումն . և ևս առաւել մեզ քան թէ յայնժամ մարդարէիցն եկեալ 'ի յերեւումն . զի այն նմանութիւն էր նորա հանգերձեալ մարդեղութիւն : Արովելքն ակնակառոյց եկեղեցոյ մանդանց հիսցեալ հնչեցուցանէին զօրհներգուեն նուազմն . ուստի համարձակահայեաց լինելով մեք 'ի նոսա, և զառ 'ի նոցանէ ասացեալն զաղօտարար զհնչումն առեալ Շմարտապէս նուազեցուք ասելով . Այս յաւիտենական, 'ի վախճան ժամանակիս հաձեցար լինել 'ի նմանութիւն արարածոց . հզօրդ, զտկարութիս մեր 'ի քեզ բարձեր . անմահացու բնութիւն, հաձեցար վասն մեր համբերել մահու խաչի . յաղագս այսպիսի բազմազութ մարդասիրուեղ ողորմեսցիս մեզ :

Եւ վասն զի առ Որդի վերաբերի եկեղեցոյ սրբասացուին, և յայտնի աստուստ եղեւ, զի ամերեկորին և առաւատին պաշտմունք մեր՝ սովաւ իբրև զանուշահոտ ինկոց բուրմունս յընդունելութիւն այ մատուցանին . և յաւետ յիրաւի : Ա ամս զի զիսաչի Քառառու յինքեանս բերէ, որով հաշուեցաւ իսկ արարին ընդ արարածոց իւրոց . զոր և անմարմին զուարթունն 'ի գերեզմանին 'իսփոփանս միսիթարուեն տրտմեցելոց կանանցն աւետաւորէ, ասելովս, եթէ «զի՞ս ինդրէք վնազովրացին զիսաւելեանս, յարեաւ» : Ուստի և Պաւղոս խրատեցաւ ասել, թէ «Ինձ քաւ լիցի պարձել, բայց միայն 'ի խան տեառն մերոյ Հիսի Քառի » . և առ Տիմոթէոս գրեալ, եթէ « Մի ամօթ համարիր ըգ վկայուի տեառն մերոյ Հիսի Քառի, որ վկայեացն առաջի Պիւղատոսի պոնտացւոյ զբարւոք վկայուին » :

Օ այս և յառաջագոյն՝ ի հնումն գուշակեալ Մովկ  
սեսի՝ որ՝ ի՞ Քրիստոս լինելոց էր Հշմարտութին, դառն  
մի երեկորին, և գառն մի առաւօտին հանապազորդ  
առաջի այ ողջակիզեալ մշտնջենաւորապէս։ Աւ դա  
ոքն անմեղ վարեալ ՚ի սպանդ, ծանեաք զնոյն ինքն  
զտէր մեր Հիսուս բարձօղ մեղաց ամ աշխարհի։ Պոք  
տեսեալ Հովաննու որդւոյ Օ աքարիայ, և զաղա  
զակ բարձեալ ասէր, եթէ « Շա դառն այ, որ բառ  
նայ զմեղս աշխարհի ։ ըստ որումնե մեծ մարդարէն  
յառաջագոյն տպաւորեաց յասելն, եթէ « Ա, զմեղս  
մեր բառնայ, և վասն մեր չարչարի ։ ըստ աւետեացն  
Գարիբիշլի, թէ « Ա, փրկեսցէ զժողովուրդ իւր ՚ի  
մեղաց իւրեանց ։

Եւ եթէ ընդէ՞ր յարձակ աւուրսն յիշատակի բարեխօսութիւն Մա-  
րիամայ Աստուածածնին, և ՚ի խորհրդականս ոչ։

Ա ԱՍՆ զ՚ի խորհրդական աւուրսն հրաւիրեն զմեղ  
առ Հոգեւոր սեղանն, յանդիման լինել Հշմարիտ պա-  
տարագին մարինոյ և արեան միաձնին տեառն մերոյ  
Հիսուսի Քրիստոսի, չլինի պէտք բարեխօսութեան  
Մարիամու։ Խոկյարձակ աւուրսն քրիստոսեանն ոչ  
մատչի պատարագն, փոխանակ սուրբ և սոսկալի պա-  
տարագին՝ զկարող բարեխօսութիւնն Մարիամայ օ-  
ժինդակ և ջատագով առնումք սրբասացութեանն։  
զի աղօթք մեր ժամանեցեն ՚ի յականց տեառն զօ-  
քունց՝ որ նատի ՚ի քրովքէս, և փառաբանի երեքսըր  
բեան ձայնիւ։ որ գթացաւ առ Հողանիւթեայ և ան-  
արդ բնուիս։ և ընդ վերին զօրացն դասակցեաց ՚ի  
փառաբանութիւն զուարթնոյն, յասելն՝ եթէ « Հա-  
րուցաննէ զաղքատն յերկրէ, և բարձր առնէ զտառա-  
պեան յաղըեւաց, և « Ա, ստուցաննէ ընդ իշխանութիւ  
վերինս, և եթէ « Շնակեցուցաննէ զամուլն ՚ի տան  
ուրախամիտ, որպէս մայր որդւովք բերկրեալ։ պատ-  
մել զօրհնութիւնս տեառն ՚ի դրունս դստեր Աիսինի  
և ՚ի նոր Արուսազէմի, ։

Եւ Եթէ զի՞նչ խորհուրդ ունի առաւտօտին աղօթքն, որ ընդ արեա-  
գալն կատարեն :

¶ ԱՅՍ աղօթքս զմիւսանդամ զբալուստն՝ Վրիս-  
տոսի նշանակէ, և յարութիւն մարդկան 'ի գերեզ-  
մանացն, յաւուր միաշարաթու յառաջին ժամուն .  
վասն զի յայնմժամու լինելոց է յարութիւն ամե-  
նայն մարդկային բնութեանց, թէպէտ և գիշերի  
ասի՛ ըստ տէրունական առակի : ¶ ԱՅԼ նա է առա-  
ւոտ և սկիզբն ծագման արեգականն արդարութե .  
և լինելոց է այն յառաջին ժամուն մեծի առուրն .  
վասն զի յայնմժամու վարկանիմ ստեղծեալ զմարդն  
առաջին, յորում ժամու միւսանդամ կենդանանայ  
'ի գերեզմանէն . այսմ խորհրդով բազումք վարին 'ի  
ներկայումն, ակն ունելով առաքելական խոստմանցն,  
Եթէ " Փող հարկանի և մեռեալքն 'ի Վրիստոս յա-  
րիցեն յառաջագոյն, և մեք նորոգեսցուք ։ այլօքն  
հանդերձ: Բ ստ նմին օրինակի և իմպակաւորն և հայ-  
րապետն սուրբն Պատրիարք, ըստ տէրունական առա-  
կին զյարուի մեռելոց բուսոց և տնկոց օրինակէր 'ի  
գարուն բուսաբեր, և 'ի գալարանալ մարդկան 'ի  
գերեզմանէն . քանզի յետ անցանելոյ ձմերամնոյն և  
լինելոյ գարնանւոյն, և հաւուցն լինելոյ մերձ յա-  
ռաւաւոտն լիեւալ ձայնք, զյարուի մարդկան 'ի գերեզ-  
մանացն նշանակեն :

¶ Ամս այնորիկ սթափեալ 'ի ժամուն յայնմիկ ա-  
զօթեն, ակն ունելով միւսանդամ նորոգմանն՝ յա-  
րութեանն մեռելոց . և զուարթաթուիչ լուսով ձե-  
պեալք 'ի հանդիպումն ամազովք երևեցելոյն, և հա-  
տուցանողին իւրաքանչիւր ումեք զարժանն : ¶ Ամս  
այնորիկ կարգեցան 'ի ժամուն յայնմիկ աղօթք իբրեւ  
արժանի լինել մեծի առաւոտի լուսոյ ծագմանն, և  
զնոր փառաց առանց ամօթոյ տեսանել 'ի նոր յաւի-  
տենին, 'ի կատարումն եւթներեկին 'ի նախակին ու-  
թերորդ գարուն մտելոյ՝ յամեցելոյ փեսային 'ի վերջ  
նում գիշերին, 'ի տրոհելոդեայն և այծեայն՝ յընդըր-  
ման որումանն և ցորենոյն . որ օքն մեծ և երևելի 'ի  
մարդարեիցն դաւանեալ . յորում առուր յանդիման

լինել մեզ կայ առաջի բեմին՝ Քրիստոսի, զի ընկալցի  
իւրաքանչիւր ոք իւրով մարմնովն զոր յառաջ գոր-  
ծեացն՝ թէ բարի և թէ չար. յորում աւուր փայլեն  
արդարքն որպէս զարեգակն 'ի յարքայուեն երկնից,  
յորոց կայ ան ՚ի մէջ աստուածոցն և թագաւորեցե-  
լոցն, որոշելով և բաժանելով զարժանաւորուի անդր  
երանուեցն. որոց և մեք արժանի եղիցուք հասանել  
խոստացելոց բարեացն, չնորհօք և մարդասիրութը  
տեառն մերոյ Հիսուսի Քրիստոսի. նմա փառք յա-  
ւիտեանս. ամէն:

X

ՆՈՐԻՆ ՏԵՇԱԲԻ

ՅԱՎԱՆԵՒԹՈՒ

ՀԵՅՅԱՅ ԿՐԹՈՂԴԻԿՈՄ

ՅԱՆԱԳՍ ԿԱՐԳԱՑ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

Խ Ասկ 'ի տուրնջեանն որոշեալ սահմանք աղօթիյն  
այս ըստ յանցման ժամուն նախահօրն հեշ-  
տասիրուեն և մեղանացն , և 'ի նմին ժամու բժշկել  
զյանցանսն չարչարանօք խաջին տէրն մեր ՀՅ ՎԻՇ .  
զի որպէս Վդամաւն ամենեքին մեռամն , նոյնպէս  
և Վրիստոսիւն ամենեքեան կենդանացին յիւրա-  
քանչիւր յիւրում կարգի : Օ ի յորում ժամու  
յանցեաւն Վդամն առաջին , և յետ յանցանացն յա-  
մեաց 'ի դրախտին , նոյնչափ և Վրիստոս եկաց 'ի վե-  
րայ խաջին 'ի բժշկութի վիրաց նորա :

Խակ յերրորդ ժամու աւուրն կարգել զժամն աղօ-  
թիյն , քանզի յերրորդ ժամու ասաց Վարկոս 'ի խաչ  
ելանել միածին Արդւոյն այ . որով յայտնի է՝ թէ  
և 'ի նմին ժամու եղել ընդունել Աշայի զհրապուրանս  
բանսարկուին , և ցանկանալ պտղոյն Ճաշակմանն :

Խակ վեցերորդ ժամուն կարգեալ աղօթքն , որով  
յայտնի է 'ի նմին ժամու անցանել ընդ սահմանս  
պատուիրանացն , և Ճաշակել 'ի պատրանաց պտղոյն ,  
և 'ի նմին ժամու փոխանակ նորա քաղցր Ճաշակմանն

մեղացն , Ճաշակեաց Վրիստոս զքացախն ընդ ղեղի խոռնեալ , 'ի բժշկութի պտղոյն դառնութե :

Իսկ յիններորդ ժամուն կարգեալ զաղօթմն , այս վասն անդարձ խոստովանութեն մեղանացն Վդամայ . յորում ժամու դատապարտեալ ելաւ 'ի դրախտէն , և 'ի նմին ժամու աղաղակաւ աւանդեաց զողին փըր կին աշխարհաց , և զԴժամ եհան 'ի դժոխոց :

Իսկ 'ի տամներորդ ժամուն , յորում ժամու տէրն արարածոց 'ի գերեզման իջեալ ասի , և իւրով անապական մահուամբն զանապականութի մեղնորհելով . և ըստ այսմ խորհրդոյ կարգեալ են զերեկորին պաշտօնն . զոր հարիւր երեսուն և իններորդ սաղմուն ուսուցանէ զարչարանս փրկչին լինել , և յօձնման չարութի կատաղեալ ժողովրդեանն . և որ զինի սաղմուն , զանօրինաբար աղօթել փրկչին , վասն յանդրգնութե ժողովրդեանն . եթէ "Հայր , թող սոցա , զի ոչ գիտեն զինչ գործեն , : Եւ ապա յաղքատութի բնութես նայեցեալ , իբրև ծանրակիր բեռամբ մեղացն ըմբռնեալք , նախկին մատուցեալ ինդրեաց յայ , եթէ " լոռնաբհեցն , տէր , զունգն քո և լուր ինձ , զի աղքատ և տնանդ եմես , : Հայեաց ասէ յաղքատութի բնութես , և մի թողուր 'ի ձեռաց , եթէ յորպիսի և յորքան չարութի ըմբռնեցայ . և պատճառ այնոցիկ զպատրանս բանսարկուին դնէ . " Վծ , ասէ , անօրինք յարեան 'ի վերայ իմ'ի դրախտին , և ժողովք հզօրաց ինդրեցին զանձն իմ հակառակամարտ զօրութեն , և ոչ համարեցան զքեզ ած առաջի իւրեանց , . և եթէ " լոռհեցան իսպահնել զգնացս իմ 'ի պահպանութենէ պատուիրանին , և թագուցին ամբարտաւանք որոգայթք ինձ . : Եւ եթէ " Լար ձգեցին որոգայթ ոտից իմոց , և եղին ինձ գայթակղութիւն , : Եւ ապա զմտաւ ածեալ եթէ ոչ իւրով զօրութք կարէ զորոգայթն զայն մերժել յիւրմէ , եթէ ոչ երկնայնոյ հօրն գթացեալ փրկես ցէ զմեղ պատուական մարմնով և արեամբ միածնին իւրոյ . և նոյն ժամայն յառաջ մատուցեալ յիշեցուցանէ՝ զոր 'ի վեցերորդ ժամու մեծի աւուր ուրբաթին՝ միածնին լրդին այց զանարատ մարմնն 'ի հաշոյս հօր պատարագեաց իբրև զանուշահոտ ինսկոց

բուրմունս, զմարդկային հոգին 'ի ձեռու Հօր աւանդէր, թէ "Ուղեղ եղիցին աղօթք իմ որպէս խունգ առաջի քո, և զշամբարձումն ձեռաց իմոց պատարագ երեկորին „. և 'ի կատարածի սաղմոսին, եթէ "Տէր, հան 'ի բանդէ զանձն իմ,, : Բանդ զկեանս աշխարհի առակեաց, հանել 'ի հանդերձեալ կեանսն աղօթէ . որոյ յուսոյ սպասեալ արդարոցն՝ ակն ունեն հասանել անսպառ բարութեցն :

Եւ 'ի տասմներորդ ժամուն լուցմունք ճրագացն, որ նշանակէ զինի զգալի լուսոյս անցանելոյ, իմանալի լուսովն առաջնորդել 'ի հանդերձեալ կեանսն : Իսկ աստմնօր մեղ վերստին դառնալի է 'ի կարգն առաջին, և չնորհօքն այ ըստ ժամու աղօթիցն զիսորդն բացայայտել :

Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի երրորդ ժամու աղօթքն :

ԵՐՐՈՐԴ ժամու աղօթից խորհուրդս 'ի վեր է. քան մեր կարողութեն, և միայն նոցա յայտնի է, որոց սուրբ Հոգւոյն չնորհքն յայտնեն զծածկեալ զիսորդն : Բայց ինձ այսպէս թուի, եթէ տեառն մերոյ Հիսուսի Վրիստոսի 'ի կրիցն և 'ի ներգործութեցն կարգեալ, զոր կատարեաց յայսմ ժամու 'ի կենարար չարչարանս իւր . յասել երանելոյն Վարկոսի, եթէ "Եղ ժամ երրորդ, և հանին զնա 'ի խաչ" :

Եւ եթէ վասն Եր յայնը ժամու գայր 'ի խաչ ելանել. քանզի յայնմ ժամու, որպէս յառաջն ասացաք, գերեալ լինի նախաստեղծն 'ի բանսարկուէն տրիական կերակրօքն 'ի ծառոյն մահաբեր և 'ի չար խորհուրդն . ինկ յորժամ Եմմանուէլս մերով քնութք զծանրութի մեղաց մերոց բառնայր, երթեալ 'ի նոյն տեղի գագաթանն, բարձրանայր 'ի դիտին, զի զանկեան վերացուսցէ . բեեռեալ զոտմն և զձեռագիր յաղագս յանդուզն զնացիցն 'ի ծառն, զի զձեռագիր յանցանացն խափանեսցէ . և զտարեց ապականութին, որ յայնժամ օձաջամբ պտղովն դղբեցաց, խաղաղուսցէ իւրով մաքրողական չարչարանօքն :

Իսկ Հովաննէս ժամ վեցերորդ ասէ . ոչ զժամ

խայելուեն, այլ զժամ ձաղանացն՝ որ 'ի հրէիցն, իսկ  
 'ի խանը յերրորդ ժամուն բարձրացաւ: Առաջն տա-  
 րածեալ զթեւմն անշարժ դիտէր ընդ հարաւ, յափըչ  
 տակելով զմեզ 'ի մահուանէ 'ի կեանս: զոր յառաջ  
 տեսեալ մարգարէական ակամք երանելոյն Դանիե-  
 լի, յերրորդ ժամու աւուրն զպատու հան տանն իւրոյ  
 բանալով ընդ արեւելս ընդդէմ Երուսաղէմի աղօ-  
 թէր վասն դարձի գերուեն, տեսանելով զմիածին  
 Որդին այ բազկատարած 'ի խաչին, որ յերրորդ ժա-  
 մու աւուրն Ճշմարիտ աւարումն գերելոյն արար:  
 Եւ ապա յետ այսր յորեղինի, տեսանեմք յերրորդ  
 ժամու զնորհս Հոգւոյն սրբոյ հեղեալ յառաքեալսն,  
 զհեռացեալն յԴամայ 'ի բնութենէս՝ յաղագս  
 ոչ 'ի դէպ ժամու Ճաշակմանն: Ա ասն այս ամենայնի  
 ասեմք յերրորդ ժամու գլորեալ զմարդն առաջին,  
 յորում ժամու զբժշկուի վիրացն և զբարեգործու-  
 թին ընդալաւ: Ապա յիրաւի յայսմ ժամու աղօթից  
 աղայեն զած առաքել զՀոգւոյն օգնականութին, ա-  
 ռաջնորդ լինել յերկիր բարի, ուստի զրկեցաք մա-  
 խանօք չարին: Այս է պատճառ երրորդ ժամու աղօ-  
 թիցն:

Եւ եթէ զի՞նէ խորհուրդ ունի վեցերորդ ժամու աղօթիցն օրհասա-  
 լակին:

Եթ արդ որովհետեւ բանս մեզ Ճանապարհս գոր-  
 ծեաց, և որպէս 'ի փասլարաց ձորոց առաջնորդեաց  
 աշտիճանօք 'ի վեր ելանել 'ի բարձրագոյն յիմաստն,  
 'ի ձիթաստանեաց յածային վարդապետուել լեան,  
 և զուշ և զմիտս ունգնագրութե կարկառեալ 'ի տաւ  
 Ճար սրբութիքն և Ճառագայթք անՃառ լուսոյն, ու-  
 րանսօր Դամբնակէր հրձուալից ուրախութիւն. ուս-  
 տի ապատամբութիւն խրատուն խոտորեցաւ 'ի Ճշմար-  
 տութենէն, և միանգնամայն 'ի կենաց փայտէն, և 'ի  
 դրախտէն, և 'ի պատուիրանէն յօրինադրէն ունայ-  
 նամայր 'ի վեցերորդ ժամուն. վասն որոյ զեօթանես-  
 նեկին եօթն ժառանգէր զտրտմութին, և ընդ բա-  
 զումցաւօք անկանէր տոյժս. կայր իբրև ջերման հիւ-

ւանդութք, և քաղելին ոգիք նորա , լուծեալ յօդք ոտից և ձեռացն ՚ի քարեայն շարժմանեն : Կայր լեզուն անշարժ ՚ի խոստովանութիւն ապաշխարութեն :

Օ որ օրինակ մեռեալ ոք անզգայ յամենայն շարժմանեն, սոյն օրինակ և մարդն առաջին, պարփակեալ ՚ի մէջօրեկի իբրև ՚ի մէջ գիշերի կայր ՚ի տարակուսի, և քաղելին ոգիք նորա : Վանզի ՚ի կարճմտութենեն ըմբռնեալ, յանյուսութեն ՚ի խորխորատ անկաներ .

սիրեր զմահ քան զյանդիմանութիւն այ լինել . և յիշատակ տերունական պատուիրանին ևս առաւելիս ցոտեր, և մահուն երկիւղն՝ որ սպառնացեան եր, եթէ մեռանիս, և ոչ գիտէր թէ զի՞նչ զործիցէ :

Վամն որոյ փրկութեանն միածինն հօր ՚ի վեցերորդ ժառուդ ժամու ՚ի վեցերորդ աւուր ՚ի վեցերորդ դարուն կայր ՚ի ջանս ցաւոցն, և տրտմութք զտրտմութիւն հալածեր, և ցաւովքն զցաւմն բառնայր . և համախմբելովքնդ փայտին անշնչապէս՝ զառ ՚ի փայտէն բառնայր զպատուհամն մեղայն ։ Ճամայ . և միանդամայն կարեօք և կամօքյանձն առնլովն լուծաներ զպատիժս պատուհասի նախնի մարդոցն :

Հաւագան խոնսարհութիւն իւրոյ պայծառութիւն առներ իւրոց արարածոց . և խաւարն առնելով ՚ի մէջօրեկի, զոր գրեան եր ՚ի յաւետարանին, եթէ “ ’Վ վեցերորդ ժամէ անտի խաւար կալաւ ՚ի վերայ երկրի մինչեւ ցինն ժամացաւուրնն : ։ Վ յս խաւար յանդիմաներ զկարծեալ ճաշանչ լուսաւորացն, որ ՚ի պարզամիտ արարածոցն անձք յօրինեին . և զոյս անձգիտութեն ՚ի սիրտ ամենայն մարդկան անգեր՝ ճամնաւել զՃշմարիտն անձ և զողորմածն, որ բժշկեաց զախտո հոգւոց և մարմնոց :

Վամն որոյ յիրաւի յայսմ ժամու աղօթից պատուիրէ արթուն լինել, և զցուշանալ ՚ի ձանձրութեց գիւին ՚ի մէջօրեկի, որ դժնդակագոյն է քան զամենայն դես . որ յոլով մեղկութք ՚ի վերայ հասանել զողանայ զմիտո մեր յիւրն միտելով կամս, և անգիւտ կորստեանն ուղեոր կացուցանէ :

Վամն այսութիւկ ՚ի վեցերորդ ժամուն կարգեցան աղօթիցն, իբրև օգնականութիւք մարդկային քնութես ընդդեմ հակառակարտ զօրութեն, և յիշատակ տնօրինաբար բժշկութեանն չարչարանոք տեառն մերոյ ։ ։ իսուսի

Վամն որոյ յիրաւի յայսմ ժամու աղօթից պատուիրէ արթուն լինել, և զցուշանալ ՚ի ձանձրութեց գիւին ՚ի մէջօրեկի, որ դժնդակագոյն է քան զամենայն դես . որ յոլով մեղկութք ՚ի վերայ հասանել զողանայ զմիտո մեր յիւրն միտելով կամս, և անգիւտ կորստեանն ուղեոր կացուցանէ :

Վամն այսութիւկ ՚ի վեցերորդ ժամուն կարգեցան աղօթիցն, իբրև օգնականութիւք մարդկային քնութես ընդդեմ հակառակարտ զօրութեն, և յիշատակ տնօրինաբար բժշկութեանն չարչարանոք տեառն մերոյ ։ ։ իսուսի

Վրիատոսի : Այս է պատճառ վեցերորդ ժամու աշոթիցն :

Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի իններորդ ժամու աղօթիցն :

Օ ԽՆԵՐՈՐԴ ժամուս զխորհուրդ տեսամնեմք բարձրագոյն աւանդութեամբ քան զայլմն պատուեալ յառաքելական դասուցն : « Բանզի Պիետրոս և Հոյհաննես ելանեին 'ի տաճարն յիններորդ ժամու աղօթիցն , և 'ի նմին ժամու բժշկեին զկաղն , որ նստեր առ դրան տաճարին : Եւ արդ քանզի մեծ է խորհուրդ ածպաշտուեն՝ որ 'ի « Վրիստոս կարդեալ է , զի ընկալցի Ճշմարտութին տեղի 'ի հնոցն և 'ի ստուերականացն . զքահանայութեցն ասեմ , զպատարագացն և 'ի զանսազան արեանցն կենդանեացն հեղմանցն , 'ի մտանել ազնուականագոյն յուսոյն՝ որով մերձենամք առ ած , որով փարաւանցաւ խաւարն անդիտութե՝ 'ի կատարել ժամանակիս : Որ առաջին միջօրեայն եղեւ նսեմ նախնի մարդոյն յանցանօքն . իսկ երկրորդ Լգամն յերկնից զոլով , բարձր բարբառով 'ի վերայ խացին աւանդեալ զոգին յինն ժամուն , արձակեաց զտիեղերս 'ի բանդէ , և 'ի տանէ կապանաց զազգս մարդկան , որ նստեին 'ի խաւարի և 'ի ստուերա մահու : Եւ 'ի նմին ժամու զլուսաւորմն 'ի խաւարէն փարաւանէր ըստ մարդարեական ձայնին , ընդ երեկս աւուրն ըստ առնելով աշխարհի . և ինքն Լնն ած մերով ընուշս 'ի խացին աղաղակէր , զեղի եղին ասելով . այս ինքն է , « Լգ ած իմ , նայեաց առ իս , ընդէր թողեր զիս » . և եթէ « Հեռի եղեր 'ի փրկութենէ իմիշ վասն բանից յանցանաց իմոց » : Այս է որ եկն 'ի իննդիր ոչխարին զկորուսելոյն 'ի հօտէն իւրմէ , թէ « Ուր ես Լգամ » , և լուաւ զապիրաստ պատախանին՝ զկինն բերելով պատճառք : Ա ամս որոյ բանից արտաքս ընկեցաւ 'ի կենաց տեղոյն ինքնակամ ընտրութիւն . ուրանօր լուաւն թէ « Հողեիր և 'ի հող դարձցիս » : Ոյնակէս և 'ի սմին տեղով լուաւ 'ի ձեռն աւաղակին , եթէ « Ինդ իս եղիջիր այսօր 'ի դրախտին » :

Եւ եղեւ 'ի նմին ժամու իններորդի արձակումն

'ի մահուանե՛ ՚ի կեանս , և մուտք կենաց Ճանապարհին ՚ի ծառն կենաց : Յորում ժամու ընդ Երեկո աւուրն արտաքս ընկեցաւ ՚ի կենաց տեղոյն , ՚ի նմին ժամու կանգնեցաւ ՚ի գլորմանե՛ , ըստ մարգարեական յառաջագոյն աւետաւոր գուշակութեցն , Եթէ ՚ի աւուրն յայնմիկ ոչ եղիցի լոյս՝ այլցութս և պարզ , Եղիցի օր մի , և օրն այն յայտնի տեառն՝ ոչ տիւ իցէ և ոչ գիշեր . և ընդ Երեկոն եղիցի լոյս „ ՚ի յիններորդ ժամուն . զոր և յաջորդն յայտ առնե՛ յասելն , Եթէ ՚ի աւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի յլցրուսաղեմէ , ՚ի խացելոյ մարմնոյն արիւն և ջուր . մինն իրը և զմարդոյ , և միւմն առաւել քան զմարդոյ : ՚ի նորա ՚ի ծովն որ առաջին . . . ՚ի հին ժողովուրդն , որ ակն ունեին միսիթ-արուեն յլցրուսաղեմի՝ օրինադիրք և հայրապետքն և մարգարեք : ՚ի կէս նորա ՚ի ծովն որ յետոյ . . . ՚ի նոր ժողովուրդս , որք առաքելական քարոզութեն ժողովեցան ՚ի մեղացն թափառմանեն , և լուսաւորեցան ջրովն կենդանուեն բղխեցելոյն յլցրուսաղեմէ , և խաղացելոյն ՚ի կեանս յաւիտենից . և եղեն նոր ժողովուրդ և նոր եկեղեցի : ՚ի յոր խորհրդոց յիշատակք յամենայն ժամու կատարին . վասն զի սա Ե փրկուե մերոյ աւարտումն . և ՚ի նմին ժամու կատարեցան ամենայն գրեալքն ՚ի յօրենսն և ՚ի մարգարեմն : ՚ի յոր խորհրդով հալածեցաւ ՚ի մերս տապանե ազուաւն մահացան . և ընկայաք զսաղարթն ձիթենւոյ աղաւնաբեր ընդ Երեկո աւուրն ՚ի անիւն կենաց . որով կարասցուք յամենայն ժամ պտղաբեր մտօք կալ առաջի նորա , և հանապաղ յիշել զերախտիս մարդասիրուեն նորա , և զկամաւոր չաքարանսն , զոր կատարեաց յայսմ ժամու վասն մերոյ փրկութե : ՚ի յս Ե պատճառք իններորդ ժամու աղօթիցն :

ՆՈՐԻՆ ՏԵՐԱՅԻ

# ՅԱԿԱԿԵՆԻ ՒՐ

ԻՄԵԼՍԵՎԻՐԻ

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՎՃԽՆ ՄԵԾԻ ԱԽՈՒՐ ՄԻԱՀԱՅԱԹԻՆ

**Յ**ետ այսորիկ զփառաւորագունիս այսորիկ և  
զհրաշալոյս ասասցուք զխորհուրդո՝ զաւուր  
միաշաբաթուս, որ զհանդերձեալ խոստացելոց բա-  
րութեցն յիշէ նա 'ի միջի մերումե ծնանի զշշմար  
տութին: Ա ամս զի յայսմ աւուր Քրիստոս յարու-  
ցեալ 'ի մեռելոց՝ զմահ խափանեաց. և ընդ իւր յու-  
սով յարոյց զսկզբանէ զմեռեալմն՝ որ յ գամայ մինչեւ  
'ի գալուստն երկրորդ. նոյնպէս և 'ի նմին աւուր  
խոստացաւ առնել զիւր զմիւսանգամ զգալուստն. յռ  
ըսւմ աւուր և ուժընդի հնչեցեալ լինի հրեշտակա-  
կան բարբառքն, զոր մարդարէն աւագափող անուա-  
նէ: Ա ամս զի յայսմ զիշերիս, որ հանդերձեալ է լի-  
նել միաշաբաթի, եղեւ Քրիստոսի՝ յարուցանողին մե-  
րոյ յարութե ժամանակ. վասն որոյ խոստացեալ է 'ի  
սմին գիշերի առնել համաշխարհական յարութիւն:

Իսյց եթէ կամեսցի որ 'ի բազմաց գիտել, եթէ 'ի  
զիշերին յայնմիկ, յորում մասին կամ յորում պահու-  
հանդերձեալ է լինել յարուի, այն ծածկեալ եղեւ

՚ի մէնց . քանզի ըստ աւետարանչացն պատմութեն , և ոչ ՚Քրիստոսին եղե բացայայտեալ յարուե ժամանակն . ՚Արդ պատշաճէ ամենայն քրիստոնեից յերեկորեայ շաբաթուն մինչեւ ցառաւաւօտս միաշաբաթուն՝ արթուն և զուարթուն լինել , և ակն ունել հանդերձեալ գալստեանն . Օ այս և տերն յաւետարանին հրամայէ ասելովն , եթէ “ ՚Արթուն լերուք , և անդադար աղօթս արարէք , զի ոչ գիտէք , եթէ յորում ժամու տերն ձեր զայ . յերեկորեայ՝ եթէ ’ի հասարակ գիշերի , թէ ’ի հաւախօսի , թէ յառաւատի ” . և ’ի վերայ բերէ , թէ “ ՚Արթուն կացէք և անդադար աղօթս արարէք , զի մի մտանիջիք ’ի փորձուի ” . և եթէ “ ՚Արժանի լինիցիք կալ առաջի որդւոյ մարդոյ ” :

Օ ի որք հսկմամբ և աղօթիւք զբոլոր զգիշերս զայս բաղձան անցուցանել յերեկորեայ շաբաթուն մինչեւ ցառաւատս միաշաբաթին , այնպիսիքն հրեշտակք եղեալ ’ի մարմնի զանմարմին զուարթնոյն բերեն զնմանութի , Օ ի զոր օրինակ քառամնօրեայ պահօքն զտարոյ զմեղսն քաւեաց , նոյնպէս յայսմ յածային գիշերի զբոլոր շաբաթուն սխալանմն մաքրէ , և զմեղօք զանպատուեալ զբնութին հրեշտակս առնէ ’ի մարմնի , փոխադրելով յորդիս լուսոյ և յորդիս տուրնինեան ՚Վանզի զմեղ հրեշտակաց նմաննեցուցանետ տեր յաւետարանին ասելովն , եթէ “ ՚Կուք նմանողք մարդկան , որ ակն ունիցին տեառն իւրեանց , թէ երբ զայցէ ’ի հարսանեացն . զի յորժամզայցէ և բախեսցէ՝ բացցեն նմա . և երանիէ ծառայիցն այնոցիկ՝ զորս եկեալ տերն իւրեանց դտանիցէ արթուն . ամէն ասեւմ ձեզ՝ զի ածեալ բազմեցուսցէ , և գոտի ածեալ պաշտեսցէ զնոսա ” :

Օ ի զոր այլոցն բանիւն հրամայեաց , ինքն արդեամբք յանձին կալաւ կատարել յորժամ եկեալ ’ի լեառն համեր զգիշերն ’ի գլուխ յաղօթս ոյ , առ ’ի մեր վարդապետութիւն զայն առնելով : ՚Եւթուի ինձ ’ի սմին միաշաբաթոջ զայն կատարել . քանզի յաղօթեն ոչ ասաց թէ եգ ծունք , կամ երկրագագութիւն , որպէս ’ի մատնութեան գիշերին գրեալ է , թէ սակաւիկ մի յառաջ մատուցեալ յաշակեր-

տացն՝ ի ձիթենեաց լերինն, եղ ծունք, կայր յազօթս. և անդ յետ աղօթիցն, և զհանգստեան ժամանակն հրամայէ, յասելն՝ եթէ «Վնջեցէք այսուհետեւ և հանգերութութու խոկ այժմ յանձային գիշերիս ոչ գտանեմք այսպիսի ինչ ասացեալ, այլ եթէ «Հաներ զգիշերն՝ ի գլուխ յադօթմն առ ու:

Տակ առաւաօտին աղօթքն ոչ ըստ այլոց խորհրդականն կարգեալ են . քանզի զինի Հարցինն Ակէծացուցէ ասեն : Ա ան զի հարկաւոր համարիմ այսմ որ զյարութին Քանի պատմէ , ընդ նմին և զծնունդն յիշել , զգերեզմանն . զի թէ չէր ծնեալ և թաղէր իսկ ոչ , և եթէ ոչ էր թաղեալ և յառնել անհնարէր : Եւ արդ զկոյսն յիշելով զթաղումն հաստատեաց , և զգերեզմանն յիշելով զյարութին հաւատարմացուցանէ : Քանզի մինչ չե ևս զաւետարանն կարդացեալ , դեռ ևս 'ի թաղման վարկանելով զտէրն , արտաքուստ 'ի ներքս 'ի գերեզմանն աղաղակելով ողերգագին ձայնիւ , թէ "Արի տէր , օգնեա մեզ , և փրկեա զմեզ վասն անուանդքո , զի խոնարհ եղեն մինչ 'ի հող անձինք մեր , և յերկիր կցեցան մէջք մեր , : Եւ լսեն աւետեաց պատասխանի 'ի մարգարէէն , եթէ " Ծագաւորեսցէ տէր յաւիտեան ածքո Ակովն , ազգէ մինչև յազգս , և եթէ "Պահէ Ճշմարտութի յաւիտեան , և առնե իրաւունս զրկելոցս . բանայզաւ կուրաց , և կանգնե զմեզօք գլորեալմն տէր , :

Եւ յաւետարանին յարուցեալ՝ի մեռելոց, կատարէ զիսոստմունս մարդարեինս. և անդէն աւետարանական բանիցն ընդդէմ բերեն, թէ “՚Ն գիշերի համբարձէք զձեռս ձեր՝ի սրբուի և օրհնեցէք զտէր” որ լուաւ աղօթից մերոց, և յարուցեալ՝ի մեռելոց փրկեաց զմեզ, թագաւորելով համաշխարհական՝ի

վերայ ամենային տիեզերաց : Իսկ գիշեր ոչ եթէ զժաւ մանակն ասէ , այլ զհրեական անհաւատութին առակէ , ըստ Երայեայ պանձալի մարդարէութեն , եթէ և 'Ի գիշերաց կանխիչ հոգի իմ առաւօտ առնել առքեզ, ած' : Եւ ապա այլ աւուրցն 'ի կարգն ելանեն , և զինի Փառս 'ի բարձանցն՝ Եղիցի ասեն , զոր կարգեալէ տեառն Եզրի Հայոց Կաթողիկոսի :

Որ նկարագրի խորհուրդ իմաստիցն աշակերտացն տեառն , որ յետ յարութեն տեառն՝ տեսին յարուցեալ 'ի մեռելոց , և ուրախութեամբ հանդիպէին 'ի նաւարկութեն իւրեանց 'ի տիբերական ծովուն + որպէս և զրեալ է 'ի պատմութեն աւետարանին , և 'ի պրակս Առաքելոցն . Այս է պատճառք աւուր մեծի միաշաբաթ ուն :

Եւ եթէ զի՞նչ խորհուրդ ունի Երրորդ ժամուն աղօթքն յաւուր միաշաբաթին :

**Ա.** Իմ յառաջագոյն ասացեալքն յաղագս՝ Բնի շարքարանացն և յարուեն և մերոյ փրկուեն , զոր յայլ 'ի ժամն աղօթիցն ըստ կարի մերում ցուցաք փոքր 'ի շատէ . իսկ առաջի բռնարկեալս 'ի վեր է քան զմեր կարողութին , յաղագս տղիտութեն և խոշոր բանիս , և 'ի բաց թողուլ վարկանիմանհաւատ հեղիտուին :

**Ա.** Ստանօր վստահանալով 'ի չնորհս Հոգւոյն սրբոյ , աղօթիւք ձերովք բուռն հարցուք զբանին գիտութեն , սուր և սուրք տեսլեամբ . և լինիցի այս որպէս , եթէ ոչ աղօթիւք ձերովք տացին բան 'ի միտա մեր , տեղակացեալ առաջնորդութեն Հոգւոյն զաղօթից խրնդիրմն : Արդ նախկին՝ թէ զի՞նչ խորհուրդ ունի 'ի յերրորդ ժամուն ժողովել 'ի դասիթ եկեղեցւոյն . թուի եթէ որք ցրուեալքն էաք յօտարէն , զանդրէն զդարձումն նշանակէ 'ի ձեռն երկնաւոր հովուապետին : Եւ ապա սկիզբն պաշտմանն . " Տէր թագաւորեաց վայելութիւն զցեցաւ ո , միաւորեալք ընդ մերում թագաւորին , որ 'ի կուտին մարմին զցեցաւն , և զմեզ զարթոյց յօրհնութիւն անմարմնոցն . ուստի հրեշտակագունդ խառնուածով տուն առ տուն երգ առեալքնդ վերին զօրացն միաւորին : Տէր որոյ Երեք-

կին սրբասացութեն ընդ վերնոցն միաբանեալ որ խաչեցաւն վասն մեր 'ի ժամաւս յայսմիկ 'ի պատարագ հօր ընդունելի . ընդ որումե մեք մատցիմք բանաւոր պատարագ հօրն երկնաւորի : **Վ**ստանօր հրաշազանս վերաբերի խորհուրդս և աւանդուիս յոքունց ծածեկալս :

| **Խ**ակ համբարձումն սըյ աւետարանին , յորոյ վերայ զածորդին հոգւոյ ակամք տեսանեմք նստեալ , իրու ՚ի վերայ աթուոյ բարձու և վերացելոյ / ըստ կասայեայ տեսուեն , և բարձր բարբառ արձակեալ 'ի վեր հայելով ուղղուք , որ կուեաց երեքկին սրբասացութեն ՚ի մի լոյս կենդանի , ոչ ես 'ի խոնարհ գթել ըստ որումն անկաւն , և ընկեց զլցամ : **Վ**ստանօր փարումն հոգւոյն սրբոյ օրինակաւ խնկոյն 'ի հօրէ բուրեալ , զամենեսեան 'ի վեր առնլովն ուստի անկամնն . սակս որոյ համբարձակութի առեալ փարին զարքայական սեղանովն , բուրել զանուշահոտ խոստովանութիւն սրբասացութեանն ընդ սերովլեմն յաղագս մեր խաչեցելոյն անմահի : **Ո**ւստի հրացեալ անձային կայծակամբն , կուեցեալք յորդեգրութիւն երկնային հօրն , երդեն օրհնութիւն 'ի վիովն , և նոր աղօթս 'ի յլըրուսաղէմ . ըստ որում համաձայնեալ կասայեայ ազդարարարագ բարբառովն ընու անուշահոտ գիտութեն զտիեղերս . աւետաւորէ զյայտնութիւն Որդւոյն այ 'ի կուսեն ասելովն . « **Կ**թէ ահա կոյս յրասցի և ծնցի որդի , և կունցի անուն նորա **Վ**մմանուել , . և 'ի վերայ բերեալ , եթէ « **Լ**ա զհիւանդութիւն մեր բառնայ » . և յայս միտս նայեցեալ եկեղեցւոյ ընթեռնուն զլկայի : **Ո**ւստի մարդարէական աւետեօքն զօրացեալ մանդունք եկեղեցւոյ երդ նոր երդեն , միսիդի անուանելով , որ ըստ յունարէն բարբառովն թարգմանի , այս ինքն է՝ օրհնութիւնս երդել : **Ե**ւ այսպէս ընդ մարդարէն զմարդարէականն հնդեռն , և ընդ առաքեալն զառաքելականն ընթեռնլով կերակին իրեւ յերկնից ինեւալ հացիւ : **Վ**այս երդք աշտիձանաց ընթերցեալ յեկեղեցւոյ գրդէ զբոլոր լսողն 'ի զգուշութիւն ունինադրութե : **Խ**ակ ալելուն նշանակեաց պատրաստ գտանել առ 'ի վերուստ ազդեցեալն ձայնին ահարկու և հիացուցանող անշարժ

դիտելընդ արեւելս . և լինի այս էր սակաւ : Ա ամս զի ոչ պատգամաւոր բարբառ , և ոչ հրեշտակք , այլ ինքն տեղ՝ ասելով եթե “ Եշի՞ի հօրեւ և եկի յաշխարհս , . վասն այնորիկ անշունչ լուութք կան ’ի սպասու բանից տերունականացն :

Եւ յետ կատարման սուրբ աւետարանին , բարձր ձայնիւ խոստովանին զսուրբ զհաւատն , որ յերանելի սուրբ հարցն ՚ի կիսայ տուաւ եկեղեցւոյ , ամենեին ՚ի բաց վանել զւարուի բանսարկուին , և զըոլոր զտիեցերս հնազանդեցուցանելընդ առաքելական քարոզութքն՝ ՚ի Վրիստոս Հիսուս ՚ի տերն մեր , որում փառք յաւկտեանս . ամէն :

ՀԵՏՈՒՅՔ ԸՆԴԵՑ

ՅԱԿԱՇԱԿԱՆԻ

ԽՐԱՄՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՅՈՒԹՄԱՆ ՅԱԴՎԱՆ ԿԱՐԳԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ

ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ի ԳԻՐԱ ԿԱՆՈՒՆԱՅ



# ՅԱՀԱՆԱԿ

## ԻՐԵԱՍԵՄԵՐԻ

ՍԱԿԱ ԳԻՇԵՐԱՑԻՆ ԺԱՄՈՒ

**Ա** ԶԴԱԲՐԱՐՈՒԹԻՒՆ ԺԱՄԱՀԱՐԲԻՆ զգաբրիելեան  
փողոցն ունի զօրինակ . և դիմելն 'ի տեղի  
աղօթիցն՝ զհաւաքումն ահեղ ատենին , զի զարթու-  
ցեալք 'ի թմրութէ քնոյ՝ օրինակէ զարդարմն առա-  
ջինս յածային ազդմանէ 'ի միտսն զարթուցեալ 'ի  
մարմնականացն հեշտութէ անկողնոց , և զհետ կա-  
մացն այ 'ի կիրս կացեալ առաքինութեանց : Ա, ա և  
զազդումն փողոցն 'ի Աինայ , և զազդումն ոգւոյն 'ի  
մարգարեսն նշանակէ , ոյք որպէս բարձրաբարբառ  
փողով 'ի վերայ լերինն բարձու կացեալ աւետիս  
նօթձէին Աիոնի : Ա, շանակէ և զառաքեալն և զա-  
ւետարանիսն՝ որք փողք քաջաշնչողք եղեն ժամա-  
տուք տիեզերաց , և զհանդերձեալն ևս զեկուցանէ  
վասն հասարակաց յարութէ յաւիտենից ննջեցելոց .  
և զամ'ի գիշերի ուսաք լինել : Ա, քաջին՝ զի գիշեր էր  
անգիտուն , և երկրորդն խաւար եգիպտական ախ-  
տակրութեան . իսկ երրորդս՝ որպէս 'ի գիշերի եղե-  
տէրունական յարութի , սապէս մինչ անզդացեալք  
'ի մեղմն էաք , 'ի մէջ զիշերի կենդանացաք կենա-  
բարին մերոյ յարութէն :

¶ Բ Դ Ե օթն գուբղայիւք կարդեալէ կանոն ըստ  
Ե օթն գարու կենցաղցյա, և Ե օթն անգամ յաւուրն  
օրհնի ած, և Ե օթն անգամ շուրջ գան զլարիքովիւ,  
և յետ վեցիցն կատարելոյ, յեօթներորդին հնչեաց  
զփողն և ուժգին աղաղակել ըստ հրամանին Ծե-  
սուայ՝ ՚ի կործանումն Երիքովի . ըստ այսմօրինակի  
և մեք վեցիւք գուբղայիւք շրջապատեմք զմեքենայ-  
իւքն սատանայի, ըստ հրամանի մերոյն զօրավարի  
Ծի, և Ե օթն գուեմք գուբղայս բարձրահնիւն  
բարեառով զկանոնգլուխն ՚ի բեկումն զօրուե բան-  
սարկուին : Եւ ապա զութերորդ՝ ՚ի խորհուրդ ութե-  
րորդին՝ զոր յայլոց մարզարեիցն է կարդեալ հան-  
դերձ օրհնուեք ամենատեառն մատուցանեմք, զհան-  
դերձելոյն բերելով զօրինակ, յորժամընդ հրեշտակս  
պարեմք անլուելի ձայնիւ : Օ կնի որոյ մաղթանք առ-  
երկնաւոր թագաւորն՝ սրբոյն բարեխօսուե զերծա-  
նիւ յորոգայթից շարին, և յաւիտենից տանջանացն,  
և նոցին մասին արժանաւորիլ : Խոկյարուե առն և ՚ի  
տօնս առունիս զալելուայն երգել՝ նշանակէ զմիայն  
օրհնութե պարապիլն ընդ հրեշտակս, և անկարօտ  
գուբարեխօսի :

¶ Ա Ս Կ յերեկոյին միայարութե աղօթեն գոհու-  
է . վասն զի տիւն կատարելով ժամօքն լցեալ ըստ  
ժամուց, նա և պաճարիցն հասեալ՝ ՚ի խոնարհ լու-  
սոյն մեծի՝ աւելի փոյթ ունին ՚ի լութե յորտվայ-  
նին յաղագս պակասութե գիշերոյն . վոյ զխափան  
զիշերոյն զմտաւ ածեալ աղօթե եկեղեցին ըստ մար-

դարելին ասելով. «Այս առ ած կարդացի, և լուաւ»՝ ՚ի մի ժմկէ՝ ասէ, կարդացի, և յերեսին լուաւ ինձ, յերեկոյս, յայսմաշխարհի, զի կարձեալ է օրն. ՚ի վաղորդեան, ՚ի յարուե. ՚ի հասարակ աւուրս, յորժամդատաստան զնի անստուեր լուսով ՚ը, ըբորդութեան, և սաստկանայ տապն յանցաւորաց. զորոյ օրինակն աստ կարդեցին աղօթք ՚ի գեպ ՚ի սկիզբն աւուրն, և ՚ի ձաշքն զպատարագն, և ՚ի հասարակն երթայ, երբ օրինօք լինի. և ՚ի կատարմանն հայցելքարիս, և ապա գոհանալ զանցելոցն : Խակ մերոցս մտաց կերակուր լրութիւն է իմանալի առաքինութե, զոր կատարեմք աղօթիւք ՚ի սկսման աւուրն, ՚ի մէջօրեի, և ըստ երեկոյս յերիս հատածս կենաց մերոց, ըստ շրջաբերութե ժամանակաց մերոց :

Օ կնի համառօտ սկսմանս և ութմներորդ հինգերորդ սաղմոսն կանոնեալ է, խոնարհեցն զունինքո. և է սաղմոս այս խորհրդարար : Որպէս կնոյն յանցաւորի ծնունդ զոլով քնութիւնս ՚ի թիւնաւոր օձէն խածմանէ, աղօթել աղաւեմք զբնութես մեր կազմին : Յաւուր նեղութե կարդացի, և մեծ եղեռողրմութիւքո. անօրենք յարեան ՚ի վերայ իմ՝ գեք. և կեցն զօրդի աղախմոյ քո զլաւայի և արա մեզ նշանս բարի, և զգբոշմն նշանի քո. զոր տեսցի ատելին չար, և պատկառեալ ՚ի զօրուե անպարտելոյ, զամօթն յաւիտենից զգեցցի. իսկ ես օգնեալ ՚ի քէն, որ, միսիթարեցաց յաւիտեան :

Խակ հարիւր և երեսուն և ինն սաղմոսն ՚ի նախահօրն ՚ի գէմս աղօթէ. Վպրեցն զիս որ, և զբազում վասնգից արարեալ յիշատակ, յաւ հարիւր քառասուն սաղմոս . Տը կարդացի առ քեզ. և հայցէ պատարագ երեկոյին զհամբարձումն ձեռացն լինել, և խունկ ընդունելի զաղօթմն. յիշել զհամբառնալ ձեռացն ոն, ՚ի հօրէ ինդրել զթողութիւնաշնուացն, զոր պարտիմք առնել և մեք. ՚ի զնել պահապան բերանոյ, և դուռն ամուր շրթանց, և ոչ խոտորիլ սրտիւ ՚ի բանս չարս : յաւ ապա հարիւր քառասուն և մի սաղմոսն : Զայնիւ իմով ես առ որ կարդացի. և հեղումն առա զի ոնն զաղօթս, ՚ի նուաղել Հոգւցն պարգեաց, յերեւելի և յաներեցոյթ թշնամեաց կեցն . հան ՚ի բանտէ

զանձն իմ, զհողիս 'ի չարեաց, և սպասել արդարոցն հատուցման. երիւք սաղմոսիւք հայցէ յերից միուեցն վիրկին :

## ՆՈՐԻՆ ՅՈՒԱՆՆՈՒ

**Ե**թ ապա ըստ հնոյն նուիրելոյ չոքք դորակից գինոյ, մեզ պատկանի վկայիցն խոստովանական համարձակութի, որք զարիւն անձանց նուիրեցին. որոյ հանգէտ մեսեղին կայ առաջի խաչին, և ուղղեալ աղօթք՝ ինսկոցն նման, որով զուարձանայ եկեղեցի. զի թէ բանական ամ պատարագ ասի 'ի Պաւղոսէ, ապա 'ի սաղմոսաց ոմն նաշի, ոմն իւղ, ոմն գինի, ոմն խունկ գեղեցիկ, որպէս ինսկարկու հաշտարարն, և սաղմոսն ցուցանէ զհամբարձումն ձեռաց պատարագ. և ժողովեալ զիրին միտս քահանայն յինքն, միջնորդ այ և մարդկան 'ի մէջ անցեալ՝ զամենեցուն աղօթք ընծայ մատուցանէ այ :

## ՆՈՐԻՆ ՅՈՒԱՆՆՈՒ

**Օ**չետ որոյ և խորհրդաբար կարգեալ է երից սրբասացութեցն երգ, ըստ այնմ տեսլեան մարգարէին, և մեկնութե աւետարանչին. զի զփառս խաչին ետես Եսայի, և խօսեցաւ վասն նորա. զնոյն և հայրականն յայտնեաց բարբառ. “Փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից...” և իւր ինքեան յաղագս իւր վկայէ ասելն “Այժմ փառաւորեցաւ որդի մարդոյ,,,:Ա նու ոչ վայրապար մեք 'ի կիր առնումք զիսացեցարն 'ի գլուխ սրբասացուե. և քանզի ոք է Որդի և հզօրեանմահ, և կամօք հօր և հաճուք հոգւոյն եկն նա 'ի չարչարանս խաչին. և նովաւ իսկ ծանեաք զհայր և զհողին: Եւ մի պախարակեսցեն այլապէս

Խորհեցողքն զերից սրբասացուե երգ . որք և ամօթ ևս վարկանին զփրկուե մերոյ անօթ . այլ մեզ յայլինչ մի լիցի պարծելըստ ՚ Շռաքելոյ , բայց միայն 'ի խաչտն մերոյ ՀՅոթի ՎՅոթի . և մեզ առկայացի այս , զի ոչ ժամ իսկ է . այլ այսքան , զի ծանիցուք զսա հրեղէն պարիսպ եկեղեցւոյ , և շուրջ արկեալ է 'ի գլխաւորական աղօթս առաւօտի , և խորհրդական ժամուն երրորդի , և երեկոյի , երիցս անգամ յաւուրն զնոյն եռակի կը կնելով :

Եւ զի զխաչին երախտիքն ՚ Ճանեաք , ընդ նմին և զմայրն լուսոյ յիշատակեմք , և աղերսեմք 'ի բարեխօսութիւն առ այն՝ որ հաճեցաւն բնակիլ յորովայնի նորա , և խաչիւն իւրով սրբով փրկել զմեզ : Եւ այսպէս փոխան օրինաւոր գառանցն առաւօտոյ և երեկոյի մատուցելոց՝ յեկեղեցւոյ աստի մատուցանի խոստովանութի սրբոյ անուան նորա 'ի պտղոյ շրթանց , և անբիծ վարուց ուղղութի :

Համբարձի . զի պահպանիցիմք տէրունական աջովն այ , ուստի և ակն ունիմք զօդնուի ընդունել յարարողէն յերկնի և յերկրի , և զի յարեւու փորձուեցն մի խորշակահար լիցիմք , այլ պահելով զմեզ՝ 'ի մեղանաց ապրիցիմք , և յամ յորոգայթից հոգւով և մարմնով : Տը պահեսցէ զմուտ քո ծննդեամբ յաշխարհ , և զել քո մահուամբ . յայսմհետէ մինչև յաւիտեան , յաստեացս մինչև հանդերձեալ յաւիտեանն :

## ՆՈՐԻՆ ՅՈՒԱՆՆՈՒ ՕՁՆԵՑԻՈՑՆ

Ե՞ր ապա սաղմոսողքն հասարակ մաղթեն ընդ հովանեաւ բարձրելոյն լինել , և յերկինս հանգըստեան արժանաւորել , և աստէն յորսողէն փրկել յորոգայթից զինու Ճշմարիտ պահպանութեն , և զի թագնաբար ընդ խաւար շրջի որոգայթադիրն , զօրացող զընթացս ոտից մերոց կոխել զգլիսաւորական չարուի չարասիրին : Վ ՛յ և յայսմ գիշերի առ քեզ համբառնամբ զմտաւորական աչս իբր ծառայ առ նոր , զի

՚ի ծփական տառապանաց զերծուսցես զմեղ, և ընդունիցիս զոգիս մեր անխարդախ կանխել առ քեզ՝ ՚ի մէջ գիշերոյ և առաւոտի զկամաւորն մատուցանել քեզ պատարագ բանաւոր: ՚յւ քարոզն միաբան խրն դրել զայսոսիկ յորդորէ: ՚յսկ քահանայն միջնորդէ աղօթիւք առ կենացն անմահից յոյսն ՚Վ՛՛, կատարել՝ ՚ի բարի զաղօթմն բարեխօսութե սրբոյ ածածնին, և հաճոյական վկայիցն:

՚յւ ժողովուրդն զքահանայն տը անուանելով՝ աղաէ յիշել յաղօթմն զպաշտօնեայմն ըստ հոգւոյ, և մարմնաւոր զծնօղմն, և զայն ևս մի ըստ միոթէ: ՚յսկ նա համառօտելով ասէ, ՚յիշեալ զամհ հաւատացեալս ՚ի քեզ, և փրկեան յիւրաքանչիւր վտանգից, և ՚ի փորձուեց, զի յամենեցունց արժանաւորապէս փառաւորի ամենասուրը ՚յրորդուին, այժմեւ միշտ և յաւիտեանս յաւիտենից + ամէն:

ԿԱՐԵՆ ՏԵՐԵՆԻ

# ՅԱԿԱՀԱՅԵԱՒԹ

## ԷՐԵՍԱԿԱՄԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՄԱՆ :

ՈՒՍՏԱԾԱՏԻԴ, Ճանապարհ առ անձ հնազանդութիւն ընդհանուր հաւատացելոց Վիճի կազմեցին սուրբ հարքն զկանոնական բանից դիտաւորութիւն . զի որք յերկնային հրաւիրեալ են 'ի ընակութիւն մարդկան տարակարծ խոհականութեք՝ նովաւ ընթացեալք՝ 'ի նապատակն հասցեն բարեգործութեք, և յանդիմանեալ խոշտանկեսցեն զինքնակամուք գնացեալն կամեցողքն : Եւ վասն զի ոմանք առ օմանս և ոչ ամենեցին առ ամենեան սոքա սերմանեալք, կամեցայ զրովանդակ զառ 'ի նոցանէն կանոնական սահմանեալ բան 'ի միում տեղւոջ գեղեցկագործ մատենիւ 'ի հայրապետանոցի աստ արձանացուցանել : Ուրանօր և զիս անձային հոգին վերակարդեաց յաթոռ սրբոյն Պարիգորի 'ի կաթուղիկոսունի աշխարհիս Հայոց, Հովհաննէս նուաստագոյն յիմաստափականաց խմբից, և 'ի բոլորից մեկին մնացեալքստ մարմնոյ յազդականաց :

Եւ ընկալեալ զայս ջան՝ նախկին, վասն հոգեկա-

1 Զի՞շաստակարանս զայս յաւ սա ինքն հայրապետաս 'ի մի գիտութուն զհետ հին և հարազատ կա հաւաքեալ աւանդեաց յետնոց : նոնաց նրա հարցն և ժողովց, զայս

նաց իմոց զարմին, զի ըստ հրամայողական անուանն առլնթեր կացցեն և հրամանայն գումարութիւք, և թէ պարտ է սպասաւորաց բանին ածախօսունակ հարցն բանիւք ինքել բանիս: Երկրորդ զի զուսումնասիրաց անձանց իմով աշխատութ սիրով կամեցայ հանգուցա նել զբազմախոյզ ինդիրս: Վանզի զբեցաք' ի սմա ոչ միայն զկանոնական սահմանեալն նոցա շարակարգութիս, այլ և զժամանակն և զպատճառն ՚ի սոյն յայս ՚ինելքս ածեալ յաւելաք, ընդ նմին և զգլուխս անց նիւրոց համառօտեալ բանիւք 'ի սկզբան անդ նախակարգեցաք, զի անաշխատաբար ամնդուստ զբանն յիւրումտեղւո՞ն գտցել իննդրոյն: Հաղագս որոյ անմոռացարար հայցեմ ընդունել 'ի ձենջ զյիշողուեն փռ խարենս. քանզի է այս գանձ ոչ զոր ցեց և ուտիձ ապականէ, այլ որ ընդ ինքեան յերեխայինն ՚ի վեր տանի գանձ զմնանկ ստացողին զսիրտ, յորմէ ասկա ոչ է պարտ թափուր թողուլ՝ որում և հաւատաց զսա զսրբարանս. զի մի զրկեալք 'ի սմանէ՝ զրկեսցին յայ. կամանարդ լինել 'ի Վատէ, յանարդաց ուրուք ձեռոս արկանելով զսա:

Եւ այն որ պարզեեաց ինձ 'ի վերայ երկրի տէրութ ընդ ամենազօր իւրոյ տէրութն, որոյ բարեգ թուր և 'ի հանդերձեալն 'ի նոյն վստահամ վայելել 'ի փառու, նա տացէ ձեզ միշտ ծարաւարար մերձենալով ճաշակել 'ի հոգեկանս այս աղբիւրէ, յարաբաց ունելով զբերան մտաց առ 'ի լուուլ սովաւ զորովայն նելքին մարդոյն. ածել զահումն այ, և հաւասարել չափոյ հասակի կատարմանն Վատի, որում փառք յաւիտեանս. ամէն:

ՑԱՌԵՎՈՒՄՆԱ

ԴՐԱՄԻ ԿՐԻՏԵ ՑԵԿԵԳԵՑԻ

ԵՐԿՐՈՑՎԱԿԱՆ

---

## ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Օսյառոփկի կրկին ճառս ՚ի մլում ուրեք ՚ի հնագիր մատենից դուք  
առանց անուան մատենագրի . այլ ափոք բանիցն և դարձուածք , ոչ  
սապէք ՚ի բանից Յովհաննու խմատասիրիս , նորին գոլ հաւանեցուցին  
մեզ . և ահա իբրև երկրայտկանս յուղաք զինի այլոց մատենագրու-  
թեանց նորին հայրապեսի , մինչև ժամանակն բազմիմաստ ստուգա-  
գոյնս ինչ ուսուցէ :

---

πτερούσα, πτερούσα,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

“Ճառագլուխ ածայիբն հաշանայապետն ՚ի տեղին նուիրեալ զդասս կղեց և պաշտօնէից ու Բատ որում և երկնաւորն քահանայապետ զառաջին երիցունմն ՚ի գլուխ լերինն թաքօրական, զկազմիչ վկայութեանն խորանի զմեծն Ո՞վակէս, և զեղանակազմն Հեղիսս զնախանձայոյզ փառացն այ ՚ի մարդարէից անտի . իսկ զվեմն անուանեալ հաւատոյ, և զորդիմն որոտման ՚ի մերձաւոր ականատեսացն իւրոց : Որոց փոխանակ ճառեցելց ՚ի նոցանէ տաղաւարացն՝ զամպեղէն և լուսերանգ կամաքն երկնի ցուցանէր . որպէս զի յերկուց և յերից վկայից հաստատեսցի խորհուրդն եկեղեցւոյ, զոր ՚ի վերայ նոցունց իսկ շինել հանդերձեալ էր զհամագումար կաթողիկէ որ, ըստ առաքելոյ՝ զի ասէ, “Ը ինեալք ՚ի վերայ հիմն առաքելոց և մարդարէից” :

“Եւ առեալ քարինս երկոտասան անտաշոյ, Բառ  
որումե զեսու նաւեան ՚ի միջոյ Յորդանանու ՚ի  
վկայութիւն անցից ժողովրդեանն ցամաքաւ ընդ Յոր-  
դանան : ՚Ա, մանապէս և տէր մեր զերկոտասան ա-  
շակերտն ՚ի հոսանուտ վայրէ կենցաղոյս առեալ ՚ի  
վկայութիւն խորհրդական անցիցն հեթանոսաց ընդ  
ջուր մկրտութեաւազանին . որոց և ասաց, “Պատ-  
շէք և մկրտեցէք յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն  
սրբոյ ” :

Իսկ սաղմոնելն՝ ի սոյն խորհուրդ նպաստաւորի,  
“ Ո՞ւծ է տեր և օրհնեալ է յոյժ ”, վասն սկսման  
մեծախորհրդութես : “ Քաղաքը այ և լեռն սուրբ  
նորա ” . . այս ինքն , չանգոյն երկնի բարձրագոյնս այս  
խորհուրդ . զի “ Հաստարմատ ցնծասցէ ցնծութք  
ամենայն երկիր ”, ըստ երկնայնոյն իրախութեան ՚ի  
լեռնէ Անոնի մինչեւ ՚ի կողմանս հիւսիւսոյ քաղաք

լինել թագաւորի մեծի , և տաճար այ կենդանւոյ : Օսր որպէս լուաք՝ ի մարգարեհիցն , սոյնավէս և տեսաք , զի ած խորհրդական վիմօք հիմնեցոյց զսա :

Եւ միւմն ևս սաղմոս՝ “ Աիրելի յարկ ոն զօրուեց , անուանէ , և փափաքելի բնակութի՝ որոց “ Աիրու և մարմին ցնծասցեն առ ած կենդանի ” : Վինչ զի երանելի լինելբնակելոյ արժանաւորացն . և որ ’ի սոյն խոկ յարմարի՝ “ Հաձեցար տէր ընդ երկիր քո ” զօր նուիրեցաքս տեղի բնակութե . յորում դարձուացես զգերութի՝ մեր՝ որ ’ի բանսարկուէն , և թողես ’ի սմա զանորէնութի ժողովրդեան քո , և ծածկեսցես մլրտութեն ջրով զմեղս սոցա : Եւ դարձեալ կեցուացես զմեզ կրկնապատիկ նորոգմամբ , զի ժողովուրդ քո լեալ ուրախասցուք ’ի քեզ յաւէրժապէս :

Եւ և զհիմունս նորա բացածանուցանէ զինի սորին սաղմոս , “ Դ լեառն որ նորա ” , զօր ’ի Վինա հիմնացեալ արմատացոյց ’ի միտսն Վոլսեսի . բայց “ Աիրեաց զգունս Վիովինի ” , ուստի և ետ զիրկութի նորոյս Դարայելի , “ Բան զառաջին յարկմն Յակոբայ ” , զիսրանն և զտածարն , զօրմէ և “ Փառաւարուեալն խօսեցաւ ” , վամն սորա հոգեկիր մարգարէիւքն՝ քաղաք լինել կենդանւոյն այ :

Եւ զինի սաղմոսացս քարոզէ արկաւագն . Եւ ևս խաղաղութեան , ինչզրեսցուք հաւատով , յթնողել զգործս ձեռաց մերոց ’ի հաճոյս իւրոց կամաց : Եւ երիս ասել Տէր ողորմեա , ինչզրուածք են խորհրդականք , զի սկզբմամբ և միջոցաւ և աւարտմամբ ողորմութի նորա մնացէ առ մեզ :

“ Եւ ապա հաստատեն վէմմի ’ի մէջ թեմին ” , յօրինակ հոգեռոր վիմին , որ հատաւ ’ի որ լեռնէ անտի , և ելից ինքեամբ զբուրեսին :

“ Իսկ զերկոտասանն քարինսն առեալս՝ նախ լուանան ջրով , և ապա գինւով ” : Ակարագրեն սոքա զերկոտասանն առաքեալսն , զորոց լուաց տէրն զոտսն ’ի վերնատանն , և ապա գինեաւ անսապականաւ զմայլեցոյց , ’ի յիշատակ ջրոյն և արեանն՝ զօր բղխեաց ’ի կողից իւրոց : Իսկ յետ յարուեն ասաց նոցա մլրտիլ ’ի հուը և ’ի հոգին որ , և մլրտել զհիմանոսս յանուն որյ Եւ րորդուեն խորհրդական ջրով աւաղանին : Իսկ դնեն

զքարինմն՝ ՚ի ըորս անկիւնս եկեղեցւոյն՝ նշանակէ զնոցին ընթացս՝ ՚ի ըորս անկիւնս աշխարհի, և պատշաճիլ հաստատութք՝ ՚ի հիմն տաճարի այ, որ եմք մեք՝ ՚ի նոսա խարսխեալ, և նոքա՝ ՚ի գլուխն ՎՀՇ:

՚յւ ուխտն առաջի երթայ դապտերօք և խնկովք՝ լուսաւոր իմաստիցն խորհրդովք, և անուշաբուրիչ վարուք և աղօթիւք:

՚յւ զինի այսորիկ ընթեռնուլն եպիսկոպոսին զաղօթմն՝ զրոլոր ուխտին առեալ զաղօթս նուիրէ առաջի այ. և ապա հրամայէ առնուլ զգործի բրելոյն, և զափ որքանուն շինուածոյն, և ծրագրէ զտեղին, ըստ տեսլեանն ՚յղեկիէլի վասն տաճարին, և սրբոյն Վրիգորի արուեստականութեան վկայարանայն սրբոց, առ՝ ՚ի զեկուցումն՝ անչափն այ առնելիւր յարկ և սրբարան զափաւորեալս բնութիւն՝ մշտածաւան և անվայրափակն բնութիւն:

՚յսկ օծանեն զքարինմն ածայնովն մեռնաւ՝ վերակումամբ խորհրդական ՚յրրորդութեն, քամզի օծան նոքա՝ ՚ի Ախովն Հոգւովն այ, ըստ ո՞ն՝ թէ ՚՚յուք մկրտիցիք՝ ՚ի Հոգին ՚որ,, : ՚յւ երիցս ամէն ասեցն՝ զամենայն զմերս ամենակալին այ խոստանալն է, այսմիկ որ ամենայն է յամենայնի: ՚յսկ սաղմոսելն կցրդիւ՝ ՚՚Օ գործս ձեռաց մերոց ուղիղ արա», ըստ շինուածոյն գործոյ և զամենայն գործս ուղղութեան ըստ կամայն այ յաջողել աղօթէ:

՚յսկ ընթերցուածքն շարամանեալ խորհրդովք համաձայնին նախակարգութեցս : ՚՚յսպէս և Տէր լոյմն սազմոս, և աւետարանն սովորմէք խորհրդածին: ՚յւ քարոզն ՚ի ամն՝ ՚ի վերուստ, և աղօթքն, զիսա զաղութին այ քարոզէ, և աղօթել ուսուցանէ: ՚յւ դարձեալ քարոզէ սարկաւագն, ՚յնդրեսցուք հաւատուլ. և եպիսկոպոսն օրհնուի և փառս համառօտէ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ յաւիտեանս յաւիտենից: ՚ի ամն զի օժանդակութքն այ և օրհներդութեն զգուշուք մատչելի է՝ ՚ի սկիզբն ածաւանդն գործոյ :

՚՚ ՚յւ նոյն հետայն առնու զբրին եպիսկոպոսն, և նախ ինքն հարկանէ վնուիրեալս երկիր. և ապա տայ յարուեստաւորսն,, : ՚ի ամն զի տեղ ինքնին ձեռն՝ ՚ի

գործ արկ ըրել և խլել՝ ի բնութենէ աստի զփուշ  
խոցոտիչ, մալեալ և կակղեալ չարչարանօք խային,  
և սերմանել՝ ի մեղ զբանն հաւատոյ և նմանօրեն  
կրօնիցն խաչակցութե՛: Իսկ երիցս հարկանելն՝ նշա-  
նակէ յերիս հատածս ժամանակաց տպաւորել զիոր  
հուրդն եկեղեցւոյ, խորանաւն վկայութե՛, և տա-  
ճարաւն Աաղոմովնի, և միւսանգամ' նորոգմամբն  
Օօրաբարեղի: Իսկ զի չորս երիս անգամ' ի կողմանսն  
չորեսին, որ յերկոտասանս բովանդակին թիւս, ըստ  
քարանցն թուոյ՝ ի խորհուրդ երկոտասանիցն Առա-  
քելոց՝ և գլխաւոր անգամոց մարդոյ. և զի գերա-  
կատար արուեստիւ սա քան զայլն ցուցանի թիւս,  
կէս ունելով զվեցեակն, և չորս զերիսն, և երեք  
զըորմն, և մի զերկոտասանն, յորում թուի՝ լիանայ  
լուսինն, և կատարին օրէնքն' ի Վա՛ ի շինին եկեղե-  
ցւոյ:

“Եւ մտանեն՝ ի ժամ’ ի տեղւոջ սեղանոյն,, . վասն  
զի անդր աւարտի բոլորումն խորհրդոյ. Եւ ասեն  
աղեղու արուեստի՝ “Հիմունք նորա ’ի լեառն ոք նո-  
րա,,: Հիմունք եկեղեցւոյ են օրինակքն առաջինք,  
դրախտն այ և տապանն նոյեան, խորանն Արրաամու-  
և զոր ետեմն Յակոբ, ցուցեալն Ասլեսի’ ի Աինա, և  
զոր կանգնեացն յանապատին. այսոքիկ հիմունք ’ի  
սուրբ լեառն Աիովն, և յերկնաւորն Արուսաղէմ ա-  
ւարտին. վամն որոյ և կատարումն հիմնարկուե եկե-  
ղեցւոյ աստանօք դադարէ, Ա ամն ’ի վերուստ քա-  
րոզաւն, ընթերցուածովք, և աւետարանաւն, ’ի  
փառս Վա՛ ի այ օրհնելոյն յաւիտեանս :

“ Ա ՏՏԱՆԵՆ ԵՐԵԿՈՍՅԻՆ ’Ի ՀԱԿՈՎԱԲՆ յԵԿԵՂԵՑԻՅԻՆ,, , Օ ի  
արթունս և զուարթունս պարտին լինել՝ որք յար-  
դարեն զինքեանս տաճարամնալ այ, հակել սաղմո-  
սիւք, և հոգեոր երգովք ’ի համագումարմանն տե-  
ղւո՞ջ :

“ Իսկ ’ի վաղուեանն յԵրրորդումժամնու՝ ժողովին  
դարձեալ եպիսկոպոսն և քահանայքն և սարկաւա-  
գունքն յԵկեղեցին, և զսեղանն դնեն ’ի մէջ եկեղե-  
ցւոյն,, , Շռաջին խորհուրդ սորանկարագրի ’ի մարդն  
առաջին, զի ըստ պատկերի այ արարաւ, և եղաւ ’ի  
մէջ դրախտին : Իսկ եպիսկոպոսն և դասք պաշտօ-  
նեիցն շուրջ զսեղանովն՝ խորհուրդ տնօրինութեանն  
ՎՌՇԻ . զի առ նմին իսկ նկատեալ ցուցանիւր, սպա-  
սաւորեալ յԵրկնաւորացն էութեանց՝ որ շուրջ կամ  
զնովաւ. այլ և բանակք հրեշտակաց տեառն շուրջ էին  
զառաջին ստեղծուածովն : Իսկ ժողովուրդն արտա-  
քոյ կացեալ՝ զանամնոց և զգաղանաց ունի նշանակ .  
զի էին նոքա արտաքոյ ածառունիկն դրախտի :

“ Եշ սկսանիլ եպիսկոպոսին զսաղմոսն կցրդիւն՝  
Տէր սիրեցի զվայելուի տան քոյ, . վասն զի սիրե-  
լի էր Շամին այ պատկերին իւրոյ մնալ ’ի փափիկու-  
թեն վայրի, որպէս և այժմ սիրեաց նա տաճարացու-  
ցանել ինքեան զմերս կազմած, ըստ նախագուշակ  
մարգարեութե, երգոց, և ընթերցմանց, և հրեշ-  
տակական երգոց աղեղուրին : Օ կնի աւետարանն,  
քարոզն, և աղօթք քահանայական՝ զեկուցիչք են  
հնոյ կտակին ընդ նորոյս շարամանութեան, վասն  
միոյ և նորին խորհրդոյ հրեշտակական միջնորդութք  
առաքելոց և մարգարեից, որոց առաջի կայ սեղանն  
հոգեոր :

“ Եշ ապա առեալ զսեղանն սպասաւորքն հանեն  
արտաքոյ դրանն,, : Շռա նախագոյն իմացմանցն՝  
մարդն է առաջին, զինի պատուիրանազանցութեն  
արտասահմանեալ ’ի դրախտէ անտի ածային վՃռաւ.  
և փակել դրանն այն է՝ զի հրամայեաց ած բոցեղէն

սերովմէիցն պահել զմուտս նորին : Իսկ ըստ անօրէն նութեն խորհրդոյ՝ այն իսկ է, զի՞ ի տանն հայրենի նկարագրեալ էր այսր խորհրդոյ զօրուի . և ել իւանն բարի ՚ի ծոցոյն հայրենի , և բնակեաց նա ՚ի կուսին յորովայնի . և ել առ մեզ հրաշականն ծննդեամբ՝ երկրորդ եղեալ վամփոխանակ առաջնոյն յանցաւորի . և արտաքոյ դրանն չարչարեցաւ մնպարտականն այնոցիկ կրից և մահու, զի զդատապարտութին բոլորից բարձեց յանցաւորաց :

Իւ մեք զնախատինս նորա յանձին բարձեալսպարծանօք չարչարակցութեն շուրջ զսեղանովն սրբով եղեցուք . յաղերս մաղթանաց սկսանիմք նուագօք մարդարեութեն , “ Ուր մեզ տէր , լուր ” . և ՚ի գլխոյ սաղմոսին աշտիճանաց սկսանելով տուն առ տուն զլուր մեզ տէրն , ըստ նախկնագոյն մարդարեիցն հայցե քաշանայութին յայ , լսել ձայնի պաղատանաց նուաղաձայն հիւանդացելոյ բնութենս :

Իւ ՚ի փառս տան վերացուցանելն զսեղանն , և յառաջ տանելն ՚ի դուռն կոյս՝ բարձրանալն է . մտօք սրբոց նահապետացն յերկրայնոցս , և փափաքանօք ՚ի տան այ գտանիլ : Իւ երիցս կրկնելն զնոյն՝ զմբշտամուռն աղօթմն նշանակէ , զոր ՚ի սկզբան՝ ՚ի միջոցի՝ և ՚ի կատարածի կենացն նուիրեցին այ :

Իսկ երկրորդն կցուրդ՝ “ ( ) զնեա մեզ տէր , օդ նեա ” . այս զմարդարեիցն ակնարիկ զաղացանս վասն ՚ի վայր անկելոյ քնութենս : Օ ի ինքն իսկ՝ որ եհարն վասն յանցանաց , եկեսցէ և յարուսցէ և բժշկեսցէ զհարուածս վիրացն . որոց ՚ի բարձունս համբարձեալ զտեսլարանս մտացն՝ յօդնութի զբարձրեալն աղերսէին : Իւ գարձեալ վերացուցանելն զսեղանն , և զսպասս նորին , և մերձ տանել ՚ի գուռն , զես վերամբարձ և զմերձաւոր խորհուրդն նշանակէ , որ առ գուրս եկեալ հասեալ էր մեր փրկութին ՚ի լրումն ժամանակաց խորհրդոյն կատարման :

Իսկ երրորդ կցուրդն աղեղուիա զսպասաւորութի երկնաւոր զուարթնոյն տէրունական մարդեղութեն նշանակէ . յորում և մարդիկ համալծորդ նոցունց եղեալ և զնոյն նուագ օրհնութեն ՚ի բերան առեալ միեղինաբար Փառք ՚ի բարձունս վերաձայնեն արարու-

դին զիսաղաղութի տիեզերաց : Եշւ երիցս երեք՝ որ է ինն՝ երգելն զսաղմուն , ըստ ինն դասուց հրամնիւթիցն յեկեղեցի դասակարգիլ զպաշտօնեայսն նշանակէ : Դարձեալ և վերացման սեղանոյն խորհուրդ յայսմ նուագի զբարձրագոյն և գերահրաշ սքանչեւացն ունի տարացոյց 'ի խոնարհութեն մարմի :

Եշւ մօտ առ զրանն եղեալ սեղանն , սկսանին 'ի թիւ զհարիւրուտան և եօթն սաղմուն՝ " Այսուտովան եղերուք տն , զի բարի է , և դարձեալ կրկնել կցըրդիւ , " Բաց մեզ տէր , բաց , մինչեւ ցայն վայր՝ " Բացիք ինձ զդրունս արդարուե՞ : Եշւ կցուրդն կրկնակի՝ " Բաց մեզ տէր , բաց , . Հառաջանք է սրտառուէ մարդարեիցն՝ աղամածնաց քաղաքակիցս լինել երկ նախումբ բանակայն՝ ողորմութե՞ բացողին զդրունս քաւութե՞ առաջի մեր : Եշւ որպէս առաջին սաղմուն պաղատանք է սրբոց նահապետացն առ Հայր , և երկրորդն առ Որդի՝ մարդարեիցն , խակ երրորդն առ Հոգին սուրբ՝ սպասաւորաց բանին . նոյնպէս և այսր սաղմոսի երեքինելն՝ է առաջինն մեղմ ձայնիւ սըր տիւ սըրով մաղթանք նահապետացն . և կրկնելն բարձրագուշ ձայնիւ՝ աւետառացն Ոիովնի է բարձրացուցանել զբարբառ , զի մոցուք 'ի յարկս սըրուե՞ նորա արդարութե՞ , և ասասցուք՝ " Վայ դուռն տն է , և արդարը մտանեն ընդ սա , :

Խակ 'ի ներքս մտեալ սեղանովն քահանայիցն և պաշտօնեից՝ նշանակի առեցելոյն 'ի մէնջ մարդոյ՝ իւրովք սպասաւորօք յերկնայինն մտանել յառագաստ՝ փոխանակ արտաահմանութեն մերոյ 'ի դրախտէն կենաց : Խակ տնագրելն խալիւն զդուռնն , և ապա բանալ , վասն զի խալիւն երաց՝ Բա՛ զդրախտին մուտն և զերկնային առագաստն :

Եշւ զի յեկեղեցին փոխեն զկարդ սաղմոսին՝ առաջին դասելով զվերջինն , " Ուրախ եղէ ես՝ ոյք ասէին , , աղեղուիս կցըրդիւն , քանզի յերկնաձեմ առագաստին հաւասարիմք հրեշտակական օր հնութեցն . սակայն զի եմք տակաւին 'ի վերայ երկրի՝ կարօտիմք օգնականութեան աղօթից , և սակս այնը ասեմք 'ի կցըրդին միւտում , " ( ) զնեամ մեզ , տէր . և Համբարձի զաւս իմ 'ի լերինս ո 'ի տէրն հրեշտակաց ,

'ի հրեշտակս և յարդարմն առաջինս , "Ուստի եկեղէ ինձ օգնութիւն , " : Եւ զի նեղութք է մնալ մեզ 'ի տան այց , և լսելի առնել զձայն պաղատամնաց , ժտեմք աղերսական ձայնիւ , լուր մեզ , տէր , քանզի յորժամ հրշտակաց սպասաւորութեամբ ծանօթացաք անձայնոյ խորհրդեանն , և նոքին ևս ծանեան եկեղեցեաւ զբաղմապատիկ խմաստութին այց , որպէս ասէն Առաքեալ :

Եւ որպէս արտաքոյ դրանն ըստ փոփոխման սաղմոսացն փառս տալովն յառաջ մատուցանեն զսեղանն ըստ խորհրդոյն վերազրութեան , նմանապէս և 'ի ներքս ըստ փոփոխման սաղմոսացն յառաջ կոյս առքեմբն տանին զսեղանն : Աստ որում և տէրն ըրջեցաւ 'ի տան բնութենս մերոյ մարմնովն , զոր առն 'ի մէնջ . և ապաքինեալ զմեզ 'ի վնասողացն ախտից սքանչելի զօրութք և կենարար բժշկութք , մերձեցաւ աշակերտօքն յլրուսաղեմ . և հրամայէր երթալ և պատրաստել զնորհրդականն ընթրիս : Խոկ նոցա զուարթացեալ առ պատրաստութի հաղորդելոյ ընդ նմա 'ի տօնին 'ի դէպ էր ասել "Ոիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ անձ կենդանի " : Աստ այսմ խորհրդական սեղանոյ սպասաւորք՝ քահանայք և պաշտօնեայք նուազեն և ասեն , " Ոիրտ իմ և մարմին իմ ցնծասցեն առ անձ կենդանի " . սիրտ զհողին նշանակելով , քանզի առաջնապէս զգայ զուրախութի , և ազգէ յանդամն մարմնոյն :

Եւ նախ 'ի թիւ ասել զծածուկս սրտին երախայրիս մատուցանել է այց , և ապա ձայնիւ ըրթամքք ցնծութք արտաքերումն զուարթութեն հոգեորի 'ի սրտէ անտի խորութեան :

Եւ դարձեալ 'ի թիւ , ըստ որում և վերացուցեալ զսեղանն 'ի բարձրութի բեմին . որպէս և տէր մեր սրբովք աշակերտօքն 'ի վերնատունն խորհրդոյ շուրջ զսեղանովն բազմեցոյց զնախածանուցեալսն իւր , և զուարթացոյց զսիրտս նոցա անզրաւական ուրախութք : Աստ այսմ և այս սպասաւոր ակնկալուք կատարման ուրախարարն խորհրդոյ . որոց իրաւացի է ասել " Հոգի իմ և մարմին իմ ցնծասցեն առ անձ կենդանի " :

Խակ'ի ըեմին քահանայքն բարձր ձախիւ սկսամին զաղեղուն զհրշտակականն երդ, քանզի երկնից նմանի բեմն, և համբարձմանն էնթի'ի վեր՝ սեղանն, զորով շուրջ կան քահանայքն՝ որ են հրեշտակք տն ամենակալի՝ և նուագեն զհրեշտակականն երդ. զի որպէս վերացաւ սեղանն յերկնանման տեղի, փոխեցաւ և կցուրդն յերդս հրեշտակաց :

Եշ դարձեալ միւսանգամ զնոյն սաղմոս երկրորդել'ի թիւ և յելս աստիճանացն՝ ըստ այնմիսորհըրդեան է. որպէս հարիւր տասն և եւթն սաղմոսն առդրամնն :

Եշ ապա երիցս ձախիւ ասելն՝ “ Աեղան քո տեր զօրութեց ”, և 'ի նոյնն հաստատելն զսեղանն իտեղոջիւրում, զերից սրբասացութեանց սերովըէիցն՝ սրբոյ և զուգական Երրորդութեն զեկուցանէ զերդատրութին. զոր 'ի մարմնաւորութեամնն խորհուրդ տն մերոյ էնթի' ետես Խսայի, և լուաւ զնուագ սրբասացուեն. որում և ածաբանն վկայէ Հոհաննէս : “ Օ այս ասաց Խսայի՝ մինչ ետես զիառս նորա ”:

Խսկ լուանսալն և օծանելն զսեղանն զմարմինն տն նշանակէ՝ օծեալ ածութեն անձառ միաւորութիք, նա և խորհրդով մլրտութեամնն 'ի Հորդանան, և արեամբն 'ի խաչին. վասն որոյ և ջրով նախ, և ապա գինւով. ըստ որումմի են ջուրն և հոգին և արիւնն : Եշ խաչիւն տնագրելն՝ նոյն խսկ է խորհուրդ չարչարանացն, որ սրբեացն զմեզ : Եշ խաչն 'ի մէջ ոեղամոյն՝ չարչարեալն է վասն մեր : Եշ ասելն ձախիւ, “ ( ) ծեր իւղով զգլուխ իմ ”. իւղ զածութիւն Շանին ասէ, և զլուխ՝ մեր մարդկութին զոր առն 'ի մէնջ, և միացոյց անձառապէս : “ Օ որ իմացեալ մանկանց եկեղեցւոյ զխորհրդոյն յեղանակ՝ նուագեն առ հայր ած . “ ( ) ծեր իւղով զգլուխ իմ ”. ըստ այնմ, “ Ա ասն այսորիկ օծ զքեղ ած՝ ած քո ”:

“ Եշ ապա դրոշմեալ սրբով մեռնաււն երկոտասան տեղիս 'ի վերայ գլխոյ սեղանոյն ”. զի անմեկնելի յինքեան խորհրդոյց արար 'ի վերնատանն զերկոտասան աշակերտոն ըստ սեղանակցուեն . յորում տեղոջ և յետ վերացմանն իւրոյ օծ զնոսա հոգւով սրբով : Եշ երկոտասան 'ի չորեսին դէմս սեղանոյն :

քանզի և մարգարեքն երկոտասամնք խորհրդական բանիւքն իւրեանց անմեկնելի են յայսմ սեղանոյ : Եւ միոյ միոյ ասելն , ( )օրհնեսցի օծցի և սրբեսցի սեղանս , շուրջանսակի նշանադրոշմամբքն , քանզի է օրհնութիւն զի յայտնաբանութիւն թարգմանի ըստ սրբոյն Դիովլիսեայ մեկնութեն , որ է յայտնութեն Յոթի խորհուրդ : Այս զի և օրհնեաց զմեզ հոգեւոր օրհնութիւն յերկնաւորս 'ի Վ՛ Հայրն բարեխնամօդ՝ լինել մեզ նըս և անարատս նովաւ , որ էօծ զմեզ Հոգւով սրբով առհաւատցէիւ , որով հոգեղինք հաստատեցան : Խսկ օծումն խորանին զզուարթութիւն երկնախոց զօրութեանցն նշանակէ , որք սպասաւոր են օծելոյն այ , և խորհրդազգածք առ մեզ միաւորութեն այ :

( )ծանի նմանապէս և տաճարն , որ եմք մեք լեալք , և անսուանեալք . վասն զի յորժամեղել ընդ մեզ Ամմանուէլ , և հաւասարեաց արեան և մարմնոյ , և օծ Հոգւովն սրբով 'ի բնակութիւնքեան զնելքին մարդն : Խսկ արտաքոյ ելեալ օծմամբն քառակողմանի , զի և զմեր քառանիւթեայ մարմինս էօծ ինքեամբ , որ և արտաքին անսուանի մարդ , զգալի մկրտութեն մաքրութիւն և օծմամբ : Դարձեալներքին կողմն տաճարին հրեայքն , և արտաքին հեթանոսք՝ անխտրաբար տաճարացան այ : Եւ շինեցան " Ի վերայ հիման առաքելոց և մարգարեից . զի որք 'ի Վ՛ մկրտեցան , զՎ՛ զգեցան " : Եւ 'ի հաւատմն Վարաամու յարմարեալք՝ հաղորդք եղեն արմատոյն և պարարտութեան ձիթենւոյն , և օրհնեցան աւետեացն զաւակաւ՝ որ է Վ՛ :

Խսկ դքացն և սեմոցն օծումն սրբոյ կուսին համաքատակի , յորում մուտ և ելառ մեզ տէր Յոթ , ըստ հոգետեսն Եզեկիէղի . քանզի նա խսկ նշանակի դուռն արեւելեան , ընդ որ մուտ և ելմիայն ածն Խարայէղի . և զդուռն զինի փակելն՝ անխախտելի մնան է կուսուեն կնքոյ 'ի մայրն լինեն Ամմանուէղի :

Եւ դարձեալ յետ օծանելոյ զարտաքոյն կողմանս 'ի ներքս մտանելն , և օծանել զհարաւակողմն , նշանուկիչ 'ի վերջէ հաւատալոյ ազգատոհմին Խարայէղի՝ ըստ Պաւղոսի , " Վինչել լրումն հեթանոսաց մոցե , և

ապա ամենային | Կարայէղ կեցցէ, նովին իսկ հաւատով և օծմամբ, յորժամբացցի նոցա վերստին դուռն ողորմութեն այ :

| Եւ զգեցուցանելն զսեղանն վայելսական և զարդարուն զգեստուք, զի զոր էառն 'ի մէնջ մարմին՝ ծածկեաց զնա զարդարեալ առաքինութե. որպէս վայել էր նմա լնուլ ինքեամբ զամենայն զարդարութիւնս :

| Կակ վառումն զապտերացն՝ զի լոյս գիտութեն այ ծաւալեցաւ 'ի ստորին աշխարհս . և ընթերցմունք մարդարէականք և նորոյ կտակիս՝ համաձայնութիւ են խորհրդածութե այսմիկ նորոգ աւուր պարզեաց փրկութե մերոյ :

| Եւ 'ի գլուխ ամենայնի՝ կենարար խորհրդեանն քահանայագործութիւ և հաղորդութիւ, աւանդ էտերունական, զոր 'ի կատարման տնօրինուեն հրամայեաց առնել 'ի յիշատակ 'ի մշտնջենաւորսն սրբութեան . որում մինչ 'ի կատարած այսրյաւիտենի հաղորդին խորհրդագցածք, և հաղորդեցուցանեն զսրբեալսն սրբարար աւազանաւն՝ կենացուցիչ մարմնոյ և արեան : | Որ և սպաշար առ ած ուղեգնացուեն յիւրաքանչիւր ելս կատարածի կենաց պատրաստեալ պահի 'ի Վ. հանգուցելոցն, մինչև 'ի դէպժամու 'ի սեղան արքայութե նորա բազմիցիմք ըստ անսուտն խոստման, և վայելիցեմք զպատրաստեալն 'ի սկզբանէ խորտիկմն հոգեորականս ընդ Վ. անստերիւր յուսոյն մերոյ, և գոհացող ձայնիւ փառս վերերգեսցուք ամենասուրբ Եղբարդութեն :

# ՃԵՌ ԵՐԿԵՐՈՒԴԻ

ՅԵԿԵՂԵՑԻ

“**Բ**ԱՐԵԲԱՆԵՑԻՔ զածյեկեղեցիս” մարդարեականն հրամայէ բան + ուստի և մեր առեալ աստանօր զնոյն ձայն հոգեշնորհ՝ հնչեցուցանեմք օրհնութիւն նոր երգելով ՚ի յարկի սրբութեան նորա: Օ ի թէ առ հնովն և ստուերականաւն այսպիսի ցնծութք և ուրախութեամք յօրդորէ բանն օրհնել զտէր ՚ի դրունա Ոիովիսի, որչափ ևս առաւել’ի նորոգմանս մերում ճշմարիտ լուսաւորելոցս՝ իրաւացի է օրհնել զուարժալից բերանօք զհրաշագործն ած, և տօնել զնաւակատիս փրկութե մերոյ: Օ ի արդարեւ նաւակատեաց է տօնս ող կաթողիկէ եկեղեցւոյ + զոր տէր հաստատեաց՝ և ոչ մարդ, որ եղ զհեմունս սորա ոչ ըստ մարդարէութեն ՚ի քարանց պատուականաց շափիղայ և կարկեհան, այդ ինքն եղել վէմանկեան, և հիմունս արկ սմա զառաքեալս և զմարդարէս: Խւ կանգնեալ ոչ յասպիս զաշտարակս սորա և ածեալ պարիսպ յընտիր ընտիր քարանց պատուականաց + այդ զհրեշտակաց բիւրաւոր զօրուհին կացոյց սմա պարիսպ շուրջանակի, և զսրեցն լուսազգեցիկ գումարութիս: Ո ամս որոյ հրաւիրելով զմեզ մարդարէութի Հոգւոյն՝ մտանել ընդ զրունս սորա խոստովանութք և պանծալի սրբութք, և պատուիրէ մեզ նոր որդւոց Ոիովիսի հանդերձ երկրպագութք օրհնել զտէր ած, որ երևեցաւ մեզ, և ցընծութք և ուրախութք տօնել զիսրհուրդ աւուրս փրկութե մերոյ, որով պարակցեալ ընդ հրեշտակս սալմոսիւք և օրհնութեամք պատուասիրեսցուք տօնախոմբութքն: Քանզի այսօր արդարուե արեգակն սպայծառ լուսով շուրջ փայլեաց զմեօք զփառս ածութե իւրոյ + որով հրաշագործեալք ՚ի նմանէ՝ ծամիցուք զպատիւ և զանուն նորա սրբարանիս :

Ա ասն զի նախ ասի՞ “Ճուն այ . և տաճար տեառն . դուստր Ոիովնի . դշխոյ ոք . հարմարան և առագաստ . ոք և կաթողիկէ առաքելական եկեղեցին : Եշտ արդ տուն այ ասի , զի ’ի սմա հանգեաւ Շանն ած ըստ մարդարէութեն , թէ “Շնակեցայց , և հանգեայց ’ի նոսա ” : Եշտ տաճար ո՞ն իմանի՝ ոչ ըստ հրեականին ’ի միում ևեթ շինեալ տեղւոջ , այդ գերագոյն հրաւ շազանութեր ’ի ծագս տիեզերաց՝ երկնային կամար յօրինեալ . յորումոչ նշոյլք միայն փառաց երեեալ , այդ նոյն ինքն տէրն փառաց բնակի , և իմանալի գեղապարութեր զեռաշիւսակ սրբասացութիս յօրինէ : Ու ակադրի և դուստր Ոիովնի , և դշխոյ ոք . զի ’ի Ոիունէ սկզբնաւորեալ եղեւ խորհուրդ շինուածոյ սորա . այս որ ոչ ըստ հնոյ կտակին օրինադրի , այդ աւետարանաւն ընդ այ որդեգրապէս միաւորի . զի եթէ շինեալն ’ի Շաւթայ Ոիովնն կոչեցեալ ամրոց և ժողովարան իմանի , որը ափ ևս ’ի Վանէ շինեալս ’ի մարմին իւր եկեղեցի՝ ամուր ապաստանի է դիմելոց ’ի սա ազգաց և ժողովրդոց . յորումինքն և մանկունք իւր համալծորդք յորջորջին ’ի մարդարէութենէն՝ և դուստր , այս ինքն ծնունդ Ոիոնի անուանին . յոր հայեցեալ Օ պքարիաս և Վնդէաս՝ ուրախանալ դստեր Ոիովնի վերագուեն , այս ինքն տիեզերական եկեղեցոյ : Խոկ դշխոյ ոք , վամն զի Շանն ած ’ի սմա թագաւորեալ արեամքն անապականաւ՝ իբր շքեղաշուք զարդու ծիրանափառ զարդարեաց զսա : Եշտ պսակ թագավարդութե եդ ’ի գլուխ սորա զիսանն պարձանաց , ըստ Խասյեայ՝ “Հնածասցէ անձն իմ ’ի տէր , զի զգեցոյց ինձ հանգերձ փրկութեան , և պատմուձան ուրախութեան ” . և ընդ աջմէ իւրմէ կացոյց ըստ հոգենուագ մարդարէութեանն “ ’Վ հանդերձս ոսկէ հուռս զարդարեալ ” . և ըստ Վաքելոյ՝ թէ “ Վնդ նմին յարոյց , և ընդ նմին նստոյց յերկնաւորս ’ի Վանէ ” :

Վայլ հարմարան զսա իմանամք , և առագաստ երկնաւոր թագաւորին . քանզի տիեզերակոչ աւետարանաւն լուսազարդեալ , և ’ի խօսման կան ’ի սմա հաւատով և հոգեոր լուացմամք աւազանին փեսային երկնաւորի հոգիք արդարոց կատարելոց՝ ըստ

կամելըն Պաւղոսի “Իրը զկոյս մի ոռյանդիման կացուցանել ՎՀՆի” նոր և մնախտ միաւորութեա, յորում և ինքն փրկիչ մարմնոյ իւրոյ պատարագի իրը զգառն անմեղ առ ’ի բառնալ զամենայն արատ և զրիծ կար կամութեա ’ի սմանէ :

Կոչի և կաթողիկէ՝ համաժողով ազանց բոլորից ’ի մի ժողովետղ հնազանդութեա, լուսաւոր մլրտութեամբ աւազանին երկնեալք և ծնեալք ’ի ժառանգութիւն այ հոգւովն սրբարարաւ : Խւ առաքելական զսա անուանեմք ըստ կանոնեալն հաւատոյ . քանզի ոչ պարզաբար անուն ժողովոյ կաթողիկէ եկեղեցի անուանի, այդ որք Առաքելովքն հրավիրանաւ հոգւոյն կենաց ’ի սպաս պաշտաման հոգեորի եղեն գումարեալք, և յանդրանկութի երկնայնոյ քաղաքականութեն զրեցան :

Խւ արդ զի յայտնի ցուցաւ մեզ անուն եկեղեցւոյ, մոցուք այսուհետեւ ’ի խորս խորհրդական բանից ’ի գիրս որս վերագրելոց, և ’ի ծովացեալ իմաստից նոցա ’ի վեր բերցուք զմարդարիմն հաւատոյ, և զգանձս ածեղէն իմաստիցն զննեացուք : Խւ նախ զայս արտադրեսուք, թէ զիարդ շինեցաւ եկեղեցի, և վասն որոյ պատճառի : Վանզի ոչ եթէ արդէն իսկ նորոգ ծանուցաւ խորհուրդ եկեղեցւոյ . և կարդք որ ’ի սմա՝ ոչ առժամադիւտք են, այդ յաւիտենսականք, և տեսանելիքս այս իմանալիք՝ ոչ մարդկային իմացուածք, այդ ածային հոգւոյն յայտնութիք, այն որ շինեցաւ Առանիւն հօր ’ի կատարածի աստ տեղի փառաց ածութեարոյ, և տուն ապաւինի բանաւոր հօտի իւրոյ . որք նախ ցրուեալք յօտարէն ’ի յօցտումն կորստական ամպարշտութեանց՝ հաւաքեցաք վերստին ’ի սմա՝ Ճանաչել զմիադաւան միասնական խոստովանութիւն խորհրդական Խրորդութեն, և երկրպագել մեծի և ահաւոր տերութեն :

Վանզի իմաստութին այ շինեաց զհայրենի տունն՝ ոչ նորոգ, այդ զանկեալն զի սկզբանէն որ ԱՇամայ, և զԴաւաւթին, որ ըստ մերակերպութեա ժառանգ և կանգնիչ հայրենի թագաւորութեն եղեւ ըստ աւետեացն Վարքիեղի : Վանզի Առան որ ’ի հօրէ ծագեցաւ լոյս, և նոյն իմաստութի, և զօրութի է այ

Հօր, որ յուշից 'ի դոլ զարարածս էած, զերկին, և զիմանալի զօրս երկնայինս զաննիւթս և զանտեսանելս. և զերկլորդ աշխարհս նիւթական և տեսանելի. յորոյ վերայ և զմարդն կացոյց թագաւորը ընդիւրովն թագաւորութեք. և այսոքիկ 'ի խորհուրդ եկեղեցւոյ :

Եւ որպէս զերկնայինսն հրեղինաւ պարածածկեաց խորանաւ զմերձակայսյն փառաւորիչ անմատոյց լուսոյ ածութեն, նոյնպէս և յայսմ խորանի պարածածկին վարագուրաւ դասք քահանայից, որք կան 'ի սպասաւորութիւն սոսկալի և ահաւոր խորհրդոյ մարմնոյ և արեան տն, որ կատարի 'ի փրկութիւն աշխարհի : Վանդի անդ 'ի քերովը էականն յաթոռ Շանն մարմնացեալ ընդ աջմէ Հօր նստի, և 'ի բիւրուց երկրպագի զօրաց . և աստ 'ի վերայ քառաթե սեղանոյն Շանն պատարագեալ 'ի հաւատացելոցն հանգի հոգիս, և ինքեամբ զմերս վերանուիրէ պաշտօն հոգեորական . և ինքն անցեալնստի գեր 'ի վերոյ իշխանութեց և պետութեց :

Ենդ 'ի ջուրս վերինս՝ հրեշտակացն շրջապատին պարբ, ըստ այնմ՝ թէ « ՞ուլք՝ որ 'ի վերոյ քան զերկինս՝ օրհնեցիք զանուն տն», : Եստ հոգին սուրբ ծաւալեալ 'ի վերայ աւազանին՝ զբնութիւն մեր կեն դանակերպելով ծնանի նոր ծնունդ նորափետուր զարդարեալ . անդ երկնայնոց էուեցն ջոկքն եւթն պարեան խմբիւք զերեքսրբեան օրհնուիս քաղցրանուագ երգեն 'ի փառս համարուն տէրութեն : Եւ աստ նոցին նմանութեք երամացեալ բիւրուց բիւրք նորածնունդ լուսակերպից զնոյնգունակ օրհնութիս միշտ 'ի բարձունս առաքեն իշխանն լուսոյ . անդանօրիննեակ դասուցն կարդք յերիս որոշեալ զատմունս համազուգեալ փառատրութեք 'ի գերագոյակն Երբորդութիւնին զհայեցուածս անլոյծ պնդութեք . քամզի յետ նորա և շուրջ զնովաւ են կարգեալք և հուալ նմին՝ ընդ երկոտասանիւք պարունակեալ թըւովք՝ ըստ նորհաց նահապետացն և փրկչին մերոյ աշակերտացն : Եերիս չորս և 'ի չորս երիս գերակատարուիս՝ զերկնայինսն իմանալք իսոհրդապետ քահանայապետութիւն յորս իջանե ածականն լոյս գե-

բալրապէս : Ի՞շտիկո և ամենայն քահանայապետուի եկեղեցւոյ սկիզբն և արմատ և կատարումն զէ՞ն ու նելով զերկնայինն քահանայապէտ հանդերձելոցն բարեաց : Ի դդ կարևորապէս առաջնորդն մերոյքահանայումն 'ի զերագոյն անպետութէն լցեալ պարզեց, և նոյն դարձեալ աննախանձարար և զանազանապէս մատակարարէ խոնարհագունիցն դասուց, իբրու զամենեսեան անձանալ համբարձմամբ մտաց և առաքինի վարուց՝ ածէ 'ի ճշմարտութէն կերպարան :

Եւ զի համառօտագոյն ասսացուք, ամենայն ինչ՝ որ յեկեղեցի, զերկնայնոցն բերէ ցոյց օրինակի : Ա ապտերն հանապազորդեան 'ի սմա՝ յերկինս սրբոցն իմանի մշտնթենալոյս պայծառութիւն . իսկ բուրումն անուշահոտ իննկոցն՝ Հոգեոյն սրբոյ յերկնայինս և 'ի հոգիս մեր բուրումն անուշահոտութէն յայտնէ : Վահանայապետն՝ որ 'ի սմա բաշխէ զնորհս ճշմարիտս, օրինակ է մեծի քահանայապէտին . յորմէ վտակն անմահութէն Հոգին որ կեանս և անմահուի բաշխէ մարդկան : Եւ դասք պաշտօնէից որոշեալք 'ի սմա՝ երկնայնոցն դասուց զանազան ունողաց զդաս և զպաշտօն նշանակարար ունին զօրութիւն : Իսկ տօնք ցնծութեան որ 'ի սմա՝ առհաւատչեայ յուսացեալ ուրախութեան զան տեսողացն, և յերկնայինս զեղապարութէն և իննդութէն տայ զտարացոյց՝ ըստ գրեցելումն, թէ « Ուրախութի յաւիտենից 'ի վերայ զլիոց նոցա » : Ուստի ունիմք իմանալ, թէ արդարե երկնից երկինք և սրբութիւնք սրբոց 'ի ցոյցս իմանի աստի :

Այս է դրախտ անձատունկ անմտանելի չարաց + զի 'ի նմաննէ օձիւն արտաքս անկաք, և Վահիւ 'ի սմա մտանեմք . և վամն զի դրախտն կենդանեաց զմեղօք մեռեալսն ոչ ընդունի, նոյնպէս և յայս եկեղեցւոյ արտաքս որոշին ամնպարիշտք և մեղաւոքք : Հայնմ դրախտի ծառ կենաց, յորմէ արդելաւ նախաստեղծն, իսկ աստ խան լուսոյ փոխանակ նորա 'ի նոյն տնկադործէ կամնդնեալ արմատացաւ, և ծաղկեցաւ կենսարեր արեամբ նորուն . յորմէ միշտ կթեն՝ որ 'ի տիեզերս հաւատացեալք՝ զպտուզն կենաց : Ի՞դ աղբեւրն եղեմարուղիս ոռողանսէ զվայելսավայր բուրսաւ

տանն , և անտի՝ ՚ի ըօրս բաժանի առաջս . իսկ աստ Շանն Շմարտութեղիսէւալն ՚ի Հօրէ աղքեւրարար՝ զաւետարանին հոսէ զնացս ընդ տորեքծագեան տիեզերս , և մկրտութեն մաքրէ և նորոգէ զմարդիկ ՚ի կեանս արդարութեն :

Հայնմ դրախտի Ագամ ստեղծաւ պատկեր այ . և աստ մարդն յեկեղեցւոջ ծննդեամբ աւազանին լինի որդի այ : Խոդ փայտ դիտութեն բարւոյ և չարի . և աստ խաչիւն ծանեաք զշմարիտ բարին զած , և խոյս տուաք ՚ի պատրողաբար ծառայեցուցչացն . որպէս և ինքն փրկին հրամայեաց . “ Հորժամբ բարձրացուցանիցէք զորդի մարդոյ , յայնժամ դիտասնիք՝ թէ ես եմու ” Խոդ ծառք տերեւախիտք , ծաղկազարդք . և աստ գասք առաքելոց և մարդարէից լուսարեր իմաստութեամբ և ծաղկազարդ առաքինութեամբ՝ զիրրորդութեն հաւատ ուսուցանեն վայելածաղիկ վարդապետութե : Օնա սերոբէիցն պարփակէ հրեղէն սուրբն . և զսա Հոգին սուրբ պարունակէ նշանաւ տերունականն խաչի : Հայնմ դրախտի պատուիրանն տուաւ գործոյ և պահպանութեն . զնոյն և աստ պատուէր առաք՝ ստանալ զօրէնս Հոգւոյն , և անսխալ պահէլ :

Հառաջնն Ագամայ շինեցաւ ՚ի կողիցն կին , և տուաւ նմա յօդնականութեն . իսկ յերկրորդն Ագամայ կողիցն , յորմէ ել արիւն և ջուր , շինեցաւ եկեղեցի : Օոր և Ագապեւալ համեմատէ՝ ասելով . “ Սոր հուրդս այս մեծ է , բայց ես ասեմ ՚ի Վայ և յեկեղեցի ” :

Սորհրդածի եկեղեցի և նոյեան տապանին . զի որպէս յերիս որոշումն հրամայեցաւ կազմած տապանին՝ ներքնատուն և միջնատուն և վերնաձեղուն . նոյնական և եկեղեցի երիս ունի յարկաց պատրաստուիս . զարտաքինն զաւիթ , և զտահարն , և զսըրը րութեն խորան : Խոդ բազմահոյլ կենդանիքն մտեալ ապրեցան ՚ի ջրհեղեղին պատուհասից . և աստ բազմութենք հաւատացելոց , ՚ի չնչահեղձոյց մեղացն ծովէ վերաբերող առաքինութե առ երկինս թուուցեալ ապրեցան ՚ի սահմանասոյզ հեղձմանէ : Հայնմ տապանէ արձակեալքն կենդանիք , նովինմբ վարեցան ըստ բը

նուն ախորժից, որպէս և մտին. իսկ աստի գազանաւ բարոյքն արձակեալք զգօնացան յիմաստոս հոգեռոր որդիուն այս : Վասի արձակեալ զագուաւն՝ այլ ոչ ևս յաւել դառնալ. և աստ արձակեաց Քառ զսեացեալն սատանայ յեկեղեցւոյ իւրմէ, և 'ի լոյս էած զսեացեալն մեղօք : Ի՞ն ագուաւ ընկղմեցաւ 'ի ջուր անդր . և աստանայ ընկղմեալ 'ի հոգիս մեղաւորաց բունէ, որ 'ի տղմի հոսանոււտ կենացս թաւալին : Ի՞ւ դուռն 'ի կողմանէ սորա առաքեալք և մարդարելք, ընդ որ փոխանակ աղաւնւոյ շղաքեր հրեշտակի՝ հոգին որ մտանելով ոչ սակաւս 'ի տապանէն հանէ, այլ զբուրը տիեզերս յերկրէ յերկինս հանէ : Ի ցամաքել ջրոյն՝ մատոյց կոյ պատարագ Իստուծոյ . և 'ի ցամաքել մեղացն 'ի մէնջ լինիմք սեղան Իստուծոյ, և 'ի սուրբ մտաց պատարագ ընդունելի մատուցանեմք այս :

Իսա և աշտարակ իմանալի : Վանդի այն ամբար տակ 'ի հպարտից և յաստարասանից շինեցաւ, վասն որոյ և վաղվաղակի կործանեցաւ . որոց և 'ի բաժանել լեզուացն՝ չար համաձայնութին խափանեցաւ : Իսկ աստ զցրուեալն յաշտարակէն զազգս 'ի հոգեւոր համաձայնութիւն էած տեր մեր, և շինեց ՚ի մարմին իւր աշտարակ հզօք հաստահեղոյս վիմօք զկաթողիկէ որ 'ի վերայ առաքելադաւան հաւատոյ անսասանելի հաստատութեք . զոր ոչ հողմք սատանայ ականք, և ոչ ամնձրեք յորդախաղաց ուղինից բըռնութեան կարացին փուցանել . այլ և բարձրացեալ խորհուրդ սորա գերագոյն երկնայնոյն ամբարձաւ կամարի : Ի՞ն աշտարակ՝ 'ի տիտանեանն Իւեղայ շինեցաւ և սա բարձրացեալ խորհուրդով յածն Ռանէ : Ի՞ն աշտարակ զմի լեզուն 'ի բազումն բաժանեաց, և զւար միաբանութին յաւխտենից քակեաց 'ի միմեանց . և այս աշտարակ զքակեալն և զանջատեալն ած 'ի մի, համաշունչ և միախորհուրդով զամենեսեան առնելով 'ի մի յոյս կոչմանն Կաթի : Հայնմ աշտարակի յեւթանսասուն և երկու լեզուս զազգս նահապետացն բաժանեաց . իսկ յայս աշտարակ եւթանսասուն և երկու առաքեալքն հաւաքեցին զհանրական տիեզերս, և ծննդեամբ սրբոյ աւազանին արարին որդիս լուսոյ և տուլնջեան :

Համաքատակի այս սրբարանի խորհուրդ և ընդ խորանին Վրբաամու, յորում տաղաւարեաց ած երկու հրեշտակաքն, վասն զի՞ի սմա ընակէ խորհրդական Խրորդութիւն, որպէս ասաց մարդարէիւմ. “Ի սմա ընակեցայց, զի՞ հաճեցայ ընդ սա,,; Վնդ յառաջքան զհամաշխարհական ուրախութիւն եկեղեցւոյ ՚ի մաշկեայ խորանին ընդունել զտէրն և զարարին ամենեցուն. և աստ կատարելապէս միացաւ ընդ մանկունս եկեղեցւոյ . ըստ այնմ, թէ “Վնացից՝ինոսա, և ընակեցայց ՚ինոսա,, . և այլն : { }այնմ խորանի զպարգեական զաւակն խոստացաւ ած Վրբաամու . և աստ նոյն ինքն ՚ՎՇ զաւակն օրհնութէ պարզես մեծամեծս բաշխէ հաւատոց որդւոյն Վրբաամու : Վնդ նահապետն միածնաւն իւրով պատարագաւ յառաջեաց զրաւեաց զած ՚ի պարտս սիրով իւրով. ընդ որում եւտհայրն երկնաւոր զմիածինն իւր պատարագ կենդանի զգառնն անարատ, որ երարձ զմեզս աշխարհի, սիրով միացուցեալ զամենեսեան ընդ ինքեան :

Խորհրդածի սա և լեռան սինէական . յորում փոխանակ փառացն միդապատ և հրատեսիլ երեմանցն, և պակուցանող ձայնիցն փողոց և որոտմանց ՚ի լսելիս ժողովրդոյն, նոյն ինքն անպարագրելի Ռամնն ՚օր զփայլատակող ձառագայթս ածութիւն ամպով մարմնոյն թաքուցեալ՝ կենսաբեր աւետարանին փողով զտիեղերս հրաւիրեաց յորդեգրուի ՚օր : Վնդ երեսքն Ոովսեսի լուսաւորեցաւ, յոր ոչ կարէին հայել որդիքն իսրայէլի . իսկ աստ բացաւ երեսօք զփառս տն իրբե ընդ հայելի տեսեալք՝ ածատես ամենէքեան վերագրիմք, Վնդ պատգամք ածագիծք ՚ի տախտակս քարեղէնս տուեալ եղեւ նոցա ՚ի ձեռն Ոովսեսի . և աստ աւետարանն փրկութէ ինքնախօսութիւն Որդւոյն այ՝ լուսաւորէ զամենայն մարդ զեկեան յաշխարհ :

՚Ի նալատակ օրինակի այսր քաւարանի կազմեցաւ հրամանաւ այ խորանն վկայութէ ՚ի Ռեսելիելէ, և կանգնեցաւ ՚ի Ոովսեսէ . և յետոյ տաճարն հրաշագան ՚ի Աողոմննէ . մին զփոփոխելի կարգ օրինաւորացն նշանակէր, և միւսն զհամատատուն խորհուրդ

այսը սրբարանի զեկուցաներ : Աակայն՝ ի նոսա մարմայ մաքրութիք կատարելին առօրեայ լուացմամբք և պատարագօք : Խակ աստ հոգեղոր սրբութիք և մաքրութիք մկրտութեամբ աւազանին, և խորհրդական ճաշակմամբ տէրունական մարմնոյն : Ենդ արիւն անամոց սրսկեալ՝ ի վերայ ժողովրդեանն . և աստ արիւնն տէրունական հեղու ՚ի փրկութիք աշխարհի : Յառաջինսն գառն զգալի զենեալ, և ՚ի սմա գառն հոգեղորական վասն կենաց աշխարհի պատարագեալ :

Ենդ մանանայ յերկնից տուեալ նոցա ՚ի կերակուր, և աստ հայն կենաց ՚Վ՞ո իջեալ յերկնե՝ կեանս տայ աշխարհի : Ենդ ջուր ՚ի վիմէն ըղիսեալ յարբումն ծարաւեաց . և աստ ջուրն կենդանարար ՚ի կողիցն ՚Վ՞ո ՚ի զմայլումն հաւաստացելոց : ՚Ի նոսա թլիատութիք մարմնոյ . և աստ թլիատութիք սրտի՝ ՚Ի մերկանալ զանդամն մարմնոյ թլիատութիք ՚Վ՞ո : Ենդ պատարագք և զոհք յանսամոց . և աստ անձինք մաքրեալք սուրբք և հաճոյք առ ՚ի մարմնոյ լուացումն . և աստ աւազան հոգեղոր ջրոյ ՚ի մաքրութիք հոգւոյ և մարմնոյ : Ենդ ցուալ քահանայապետին պտղաբերեալ կաղլին արբայա կան, և աստ խան լուսոյ պտղաբերեաց զ՚Վ՞ո : Ենդ տախտակ դաստաստանի ճշմարտութե՛ և յայտնուե՛ . և աստ աւետարանն քարոզեալ արքայութե՛ :

Ենդ պէջնաւոր զգենվով ուներ քահանայապետն առ ստորոտովն զանգակս, և խոյր ՚ի վերայ գլխոյն, և վակաս չորեքկարգեան ակամբքն՝ խառնեալ ոսկւով շղթայաձեխւք ընդ միմեանս : Խակ յեկեղեցի նշանակելով ՚Վ՞ո զգեցեալ մեզ հաւատովք սիրով և սրբութիք : Խակ զանգակքն՝ զպայծառ քարոզութենոր ՚ի մեզ ծաւալումն բացայայտէ . և խոյրն՝ զնորհիս հոգւոյն զեկուցանե : ՚Վ՞անզի զպաջնաւորն զգենվով ՚Հարովնի՝ զմարմնանալ ՚Վանին նշանակէր, զըռբեքնիւթեայ ընութիս զարդարեալ շքեղաշուք արդարութիք : Խապուտակաւն՝ զերկնաւորն եցոյց առաքինութիք . և կարմրովն մանուածոյ՝ զանսպական արեանն կցորդութիք, որով հաւասարեաց մեզ արեան և մարմնոյ : Խւ բեհեղովն սպիտակաւ՝ զանութեանն ընդ ընուիս մեր խառնումն . և ծիրանեաւն՝ զծած-

կեալ խորհուրդ անձառելի տնօրէնութե՛ : Եւ չորեք կարգեան ակունքն երկոտասան ՚ի լանջս քահանայա պետին՝ երկոտասան առաքելոցն համաքատակին . զի սիրտ և կամք եղեն ՚Վահ , և ՚ի չորս առաջս բաժանեցին զաւետարանն ՚ի չորեքծագեան տիեզերս :

Ա ասն որոյ՝ այսոցիկ բիւրապատիկ բարեաց աղբեւը խորհրդածի սուրբ եկեղեցի . և մեզ ոչ միայն յայժմուս , այլ և ՚ի հանդերձեալսն յաւիտենի լինելոց է տեղի ապահնութե՛ , սկզբնաւորեալ ՚ի կանխութենէ լինելութե՛ արարածոց յանսկիզբն արարողէն , որ նա ինքն է սկիզբն և կատարած հաստատութեան եկեղեցւոյ , և առ միմեանս միաւորութե՛ օրինակացն և ձշմարտութեան ըստ պատեհաբար համեմատութեան :

Եւ այժմ իրաւացի է առնուլ փոխանցարար , և համաքատակել զայ հանդերձելումն իմանալի խորհրդով . քանզի որպէս օրինակքն առաջինք աւարտեցան յայս ձշմարտութե՛ս հասումն , նոյնպէս և սա զհանդերձելոցն ունի նկատումն : Եւ նախ այս՝ զի գիր շինուածոյ սորա հանդէպ է արևելից . վասն զի յարևելից ակնկալու եմք գալստեան երկնաւորն արքայի և փեսայի . և գարձեալ գէմ յանդիման է սա դրախտին որ յարևելս՝ որպէս բնակիչս նմա զորդին իւր մնուցանելով , որք խաշակցութն ՚Վահ ըստ աւազակին բարեբարոյի խզելոց են զբոցեղէն սրոյն անցու , և ընդ հովանեաւ տաւաղին անմահական տնկոցն . իսկ լուսանցոյցն յարևելս՝ զմնւտ իմանալի լուսոյն յաշխարհս և ծագումն ըստ արեգակամնն զարդարսն նշանակէ : Խսկ ՚ի կողմանէ՝ զմտացն խորհրդածին ՚ի խոնարհ ձևացուցանէ , և զի կողմնակիքն մեր՝ որ են աջեայք և աչեկեայք , լուսաւորք են առաքինութե՛ : Եւ որ յարևմուտմն է , նկատէ զլոյն՝ որ յարևելից մտանէ մինչև յարևմուտս : Եւ ձեւն զի քառակողմանին է՝ հրաւիրակ է չորից անկեանց տիեզերաց ՚ի մի յոյս կոչման միով հոգւով ՚ի ՚Վահ միացեալ միոյ այ ընծայել զերկրպագութե՛ :

Խսկ ազգարարն ժամահար՝ նախ ՚ի փառատրութե՛ այ է բոլորից հրաւիրակ . և գարձեալ զհրեշտակական փողոյն հնութն նշանակէ , զայն՝ որ զարթու-

ցանե՛ 'ի մահահանգիստ քնոյն զտիեզերս, և ընդ առաջ գալստեան երկնաւորն հրաւիրէ թագաւորի :

Իսկ վարագուղին անջրապետութիւն զառաջին երկնից ցուցանե՛ որոշումն, ուր միայնակ Խըրորդութիւն ասի բնակիլ յերկինս երկնից . և այն ևս անջրապետ՝ որ ընդ մէջ մեր և անմարմին էութեցն կայ :

Եւ տաճարն ժողովետղ հաւատացելոց՝ զհաւասարութիւն մեր ընդ հրեշտակս զեկուցանե՛, յորժամ կամք ամենեքեան առաջի բեմին ՎՇտի : Եւ արտաքոյքն եկեղեցւոյն ժողովետղ է յանցաւորաց, որք կան արտաքոյ, տեսանեն և լսեն զպատիւ արժամնաւորացն :

Իսկ ղապտերացն լուցմունք՝ զլուսաւոր վարս և զողորմածութիւն իմաստնոց կուսանացն բացայայտէ . նաև զերկնից լուսաւորացն բերէ նմանութիւն՝ զարեգական և զլուսնի և զաստեղաց : Եւ հանապազորդ վառումն լուսոյն՝ զմշտալոյս պայծառութիւն արդարոցն ցուցանե՛ առ 'ի յայ :

Իսկ սեղանն սրբութեն զմիամնականութիւնը Երրորդութեն խորհրդածէ . և ծածկեալ զբեստիւք պատեհագունիւք՝ զծածկեալ խորհուրդ ածութեն տայ իմանալ : Եւ պասկն պարապնդեալ զզուգական պատիւ Խըրորդութեն 'ի մի բերեալ փառաւորութիւն ըստ օրհնութեն սրբովելիցն . վասն զի մարմանանալն Որդւոյ յայտնեցաւ խորհուրդ Խըրորդութեն Եւ նուիրանոցքն արծաթիք՝ յստակ և մաքուր բանն է հաւատոյ, զոր նուիրեմք 'ի սպաս պաշտաման ուղիղ դաւանմամք այ . ըստ այսմ, թէ « Վանք մոն ընտիր և փորձք են » : Իսկ խորհրդանոցքն յաջմէ և յաշեկէ ցուցանեն զպատրաստութիւն սպասուց եկեղեցւոյ՝ անպակաս ունել զտուրս ողորմութեն առաղքատս : Եւ պատարագին մամն անպակաս մնալ 'ի խորանին, այս է՝ ոչ լինել դատարկ 'ի հաշտարար մարմնոյն ՎՇտի եկեղեցւոյն . զի մի ասիցի այն, « Պակասեսցի կերակուր 'ի տանե՛ այ ձերոյ » :

Իսկ աշտանակն՝ խան լուսոյ, և 'ի վերայ նորագունդ վառեալ ածութիւնն եւթնարփի խորհօք : Եւ խնկանոցն զլուստուածածնին բերէ խորհուրդ . զի որպէս նա լի է հոտով անուշութեն, նոյնպէս և կոյմն

սուրբ լի եր Հոգւով սրբով և զօրութե՛ք բարձրելոյն : Խակ բուրուառն զհրեշտակապետին ցուցանէ աւետարանութի առ կոյնն որ և երեք ամբառնալիքն , զի վերաբերեալ եղեւ նա աւետեօք խորհրդութեն՝ և 'ի մի կատարումն համարուն տէրութեն : Խակ բուրումն խնկոցն հաշտարարութե՛ , ըստ այնմ զոր 'ի հնումն Վհարովն նուերս մատուցանէր այ , զոր այժմ հաշտութի իւրով արեամբն արար Վհ . զոր մատոյց այ Հօր 'ի հոտ անուշից . և դարձեալ զանուշաբուրիչ չնորհս Հոգւոյն սրբոյ առ մեզ նշանակէ , որպէս յառաքեալսն 'ի սուրբ Պիենտակոստէին , և նորօք ընդ ամենայն տիեզերս . վասն այնորիկ նախ 'ի բեմն ծխեն , զի նախ 'ի Հօրէ ելանէ Հոգին սուրբ , և ապա դայ յառաջնորդն , և ապա յայլսն . ըստ այնմ , թէ «Պրապէս եւղնոր իթանէ 'ի գլուխն և 'ի մորումն Վհարովնի » :

Խակ աւազանն հաստատեալ մայր է որդեգրութե՛ հոգեոր ծննդոց , որ 'ի ջրոյ և 'ի Հոգւոյ վերստին ծնեալ լինին որդիք այ . և արեանն Վհի հաղորդեալք՝ ժառանգակից նմին եղիցին , և բնակարան Հոգւոյ նորա սրբոյ :

Եւ զի նախ 'ի խորհրդանոցն հանգուցանեն զխորհուրդն , վասն զի նախ 'ի ծածուկ եկն առ մեզ Վհ . և յորովայնի կուսին հանգեաւ . և ապա յայտնապէս 'ի սեղան խացին եղեւ բերեալ : Պաե 'ի հանդելումն երևմանն յայտնապէս ցուցանի երկնակաց և երկրաւորաց :

Եւ քշոցացն հարումն զօրինակ ունի սրբոց սերով բէիցն , զոր «Պանիկէլ եցոյց . «Հազարք հազարաց պաշտէին զնա » : Խակ նստել քահանայապետին յաթոռ բեմին՝ զնստելն յաթոռ փառաց ահաւոր բեմին երկնաւորն քահանայապետի նշանակէ 'ի միւսանգամ դալստեանն : Եւ սեղանոյն բացումն՝ զյայտնապէս երեւումն անձութենն ամենայն արարածոց բացաքարողէ , յորժամ ցուցանէ զինքն արժանաւորաց իւրոց . ըստ այնմ , թէ «Տեսանելոց եմք զնա՝ որպէս և էնու . Եւ համբուրելն զսեղանն՝ զանձարելոցն տայ զտարացոյց , որք վստահութե՛ հաւատոց և սրբութեամբ հաղորդին նմա :

Իսկ ժամակարգութին որ 'ի սմա , ոչ վայրապար ,  
այլ մեծ իմաստութիք և ծածկեալ խորհրդով . որպէս  
յառուր միաշաբաթւոցն նախ մաքրելն զեկեղեցին .  
վասն զի յառաջ սրբեցաւ աշխարհս , և ապա 'ի սըր  
բեալմն բաշխեցաւ ՚Վ՛՛ . ըստ իւրում բանին՝ լուցա-  
նել ձրագ , և տանն աւելածել :

Իսկ մտանելով մեր 'ի սմա խաչմնիշ կնքելով զգեմն  
երկրպագութ յարեւելս՝ զՄ իածինն սկսանելով , զվե-  
րանալն տպաւորէ խաչագետստիցն 'ի հանդիպումն  
ո՞ն յօդս ցնծութիք երկրպագել զմիածինն անձ ընդ-  
ամսու երկնից նշանաւ խաչիւն եկեալ տեսանելով :

Եւ ապա երգս առեալ երկդասիւքն համախմբեալ  
ընդ վերինմն , զՏէր թագաւորեաց , վայելութիւն  
զգեցաւ . զըոլորից նշանակելով զմերնոց և զնելք-  
նոց թագաւորն անձ եկեալ տեսանելով , վայելա-  
պէս զգեցեալ զփառս հայրենիս . թագաւորեալ և  
սուրբք ընդ նմա :

| Հետ որոյ համբարձմամբ աւետարանին գեղապա-  
րեալ օրհնութիք երից սրբասացութիք խաչեցարին ,  
յորոյ վերայ զածորդին տեսանեմք հոգւոյ ակամք՝  
յաթոռ նստեալ բարձու , և 'ի բիւրուց երկրպա-  
գեալ դասուց , պսակեալ զխաչեալմն վասն ինքեան :

Եւ զինի քարոզն համաշխարհական կոչմամբ զգու-  
մարեալմն տպաւորէ յաշխարհաժողով ատեանն բո-  
լոր տիեզերաց : Այլ և սաղմոսք և ընթերցուածք  
մարգարէականք զգատաստանն , որ ըստ զբոց , բա-  
ցայայտէ . ըստ այնմ , թէ “ Շնոնելնոցա գատաստան  
ըստ զբոց ” . և դարձեալ զի 'ի հանդերձելումն նախ  
մարգարէքն և առաքեալքն վկայեն քարոզուեն , և  
ապա թագաւորն վՃիռ հատանէ : Իսկ ալելուն քա-  
ջահնչող ձայնիւ զհրեշտակացն քաղցրաբանուեն օր  
հնարանուին նշանէ : Իսկ մերձ առ նմին աւետարանն  
կենսաբեր ձայնիւ անծխութիք , զորդեգրութեանն  
առբերելով պարգևս հրաւիրէ : Հետ որոյ խոստո-  
վամութի հաւատոյ յամենայն լեզուաց յանուն ան  
մերոյ Հօփ ՚Վ՛՛ և այ Հօր և Հոգւոյն սրբոյ : Եւ  
ապա քարոզք և քահանայական աղօթք՝ կուէ ըզ-  
հրաւիրեալմն և զկոչեցեալմն . և 'ի սմին՝ սրբասացու-  
թիւն :

Եւ յետ աղօթիցն 'ի վերայ ամենայնի՝ վայելումն և արբումն անմահական բաժակին, և կենաց հացին, զանդ ուրախութին նշանակէ թագաւորելոցն 'ի լոյս, յորժամ նոր արքցէ զնա ընդ մեզ յարքայութեան հօրն, յայտնելով և վարդապետելով իւրոց աշակեր տացն զանձառելի խորհուրդն, յանկ ելեալ բանին՝ թէ « Ի՞նդ իս կերիջիք և արքջիք 'ի սեղան իմ յարքայութեն իմում », : Այսոքիկ հանդերձելոց բարեազն ցոյցք յեկեղեցւոջ :

Իսյց պարտ է գիտել, թէ ընդէր զեկեղեցի՝ որ յանշունչ քարանց և 'ի փայտից շինեալ է, և զժողովս հաւատացելոց՝ միապէս կոչէ եկեղեցի : Այդ որոպէս զդրախտն կրկին իմանամք, նոյնապէս և զեկեղեցի կրկին իմասցուք . զի եկեղեցի յերայեցւոյն առ մեզ ժողով թագմանի, ըստ նմին անուան կոչի և ժողովարանն, զի է շինեալ նա ստուգապէս տուն այ՝ յաղագս պատարագելոյ 'ի նմա լիրդւոյն այ . նոյն պէս և մարդս տաճար է այ ըստ Պաւղոսի, յաղագս սրբութե աւազանին և մաքրութե վարուց : Օ ի որ պէս յայս անշունչ տաճարիս՝ որ 'ի քարանց և 'ի փայտից, զամենակարօղ անունն այ կարդամք 'ի վերայ, և օծանեմք յանունն այ, և տուն այ անուանեմք, զի ստուգապէս ած 'ի նմա ընակէ . նոյնապէս և հաւատացեալք որ յանուն հօր մկրտին, և օծանին իւղով, և յանուն Վոհի այ կոչին քրիստոնեայք, որ պէս ասէ Առաքեեալ: « Եւ զորս եղ ած յեկեղեցւոջ », և այն : Եւ զոր զգալի եկեղեցի անուանի՝ առնէ ինքեամք զհացն և զգինին 'ի ձեռնքահանային մարմին և արիւն Վոհի, զնոյն և մարդս եղեալ եկեղեցի՝ ընդունի ձաշակմամք :

Օ ի եթէ խորանն և տաճարն ըստ օրինակին փառաւորեցաւ, քանի առաւել որ Ճշմարտութիս է օրինակին՝ փառացն այ ընակարան հաւատով իմացեալ լինի: Ա ամս որոյ ըրից սեանցն կառուցումն՝ զորից առաք քինուեց որ 'իմեզ ցուցանէ . և կամարացն միաւորուի զիրոյն շաղկապակցէ զառաքինութեն զատուցումն : Խսկ երկոտասամն քարանցն հիմնացելոց՝ զերկոտասամն անդամոց նշանակէ բանականաց . և շարայարուի մեծամեծ քարանցն և փոքրունց՝ զարանց հաւատացե-

լոց՝ միանգամայն և զկանանց՝ բարեպաշտութել միացելոց . զի՞ ՚ի ՚Վ՛՛ Հ՛՛ չլիք խտի՞՝ ոչ արանց և ոչ կանանց : Իսկ կապակցութելի խճիցն և այլոց նիւթոց՝ զհաւատացելոց ունի զնամնակ, որ միաւորէ զամենեսեան ՚ի մի յոյս կոչմանն ՚Վ՛՛ ՚ի :

Իսկ գմբեթաձև խորանարդ բարձրացեալ՝ ՚ի ծայր գագաթանն ունելով զծաղկեալ նշան խալին ծիրաներինեալ ածային արեամբն ցուցանէ . որով զման կունս իւր լուսազարդեալ խաւազգեստ յուղարկէ ՚ի վերինն Խրուսաղէմ, ցնծալ և պարել՝ ՚ի խորանն լուսոյ, միշտ զուարձամնալ, և վայելել յանմահական ձաշակացն :

Այս է խորհուրդ եկեղեցւոյ, և այսքան ՚ի սման ածային նշանացն խաղացումն: Վրդարե ՚Վ՛՛ խօսեսցի զգօրութիս տն, և այն, որ այսքան ծիրս պարզեցաց որդւոց մարդկան: Խւ արդ զի՞նչ հատուցանեմք տրիւ տուր տն այ մերոյ, այլ միայն երկիր պագանել նմանութել և ձշմարտութել, ասելով լրնդ Վրդարելոյ՝ թէ ՚Վնորհք այ ՚ի վերայ անպատումպարդեաց նորա,, Խւ այսպէս տեղեկացեալ՝ ՚ի հոգւոյն սրբոյ զորպիսութիւ խորհրդոյ շինուածոյ սորա, և զարբազան ՚ի սման յօրինեալ կարգս, ընդ հրեշտակացն տօնելով զնաւակատիս սորա՝ երկնաւոր առաքինութել՝ ՚ի սման կրօնաւորեսցուք, փառաւորելով զհայր և զլրդի և զսր հոգին յաւիտեանս . ամէն :

՚ի տօնապատաճառն, զի՞նի ձայն նիցու՝ ՚Վրօնաւորեսցուք ՚ի սման,, յարին և պարանք: ՚Վւ որպէս ՚ի դրախտին այ մերկ և մաքուր ՚ի մեղացն ծածկութից՝ եղեցուք աւազանին նըլ մաքրութել զբան զեալ, ՚ի փայտն կենաց մերձենոցուք՝ զանմահականն ձաշակելով զպառուզ. զանմահ փեսային զգալուստ և զխոսակցութիւ ՚ի սման ըն-

կալցուք, և փառաւորեսցուք ըշհայր և զորդի և զնոր հոգին յաւիւտեանս . ամէն,, Զայսոսիկ չեղաք ՚ի կարգին՝ խիթալով, զի մի ըստ սովորութել հաւաքածոյ գրեանց տօնապատաճառաց՝ գրիչք յիւրեանց պատուաստեալ իցեն զայլ և այլքանս, որպէս և ուրեք ուրեք կարձեալ:

Թ Ե Ա Դ Ա Ր Ա Ս Ի

Ք Ա Թ Ե Ն Ա Տ Ո Ր Ի

Ճ Ա Ռ Ե Յ Ե Ր Ե Յ

卷之三

卷之三

# ԵՐԵՎԵԼԻՑՈՅՆ

## ԹԵՂԱԳՈՐԾՈՒԹ

ԸՆԴՀԱՌ

## ՄԵՋՔԵԳՈՒՄՈՅՑՈՅՆ

**Ա**չս այժմ նորահրատ տուղորեցաւ բոց, և ըլք  
բեղմնաբեր տունկս բանսական դրախտին,  
հշմարտուոգ աւետարանին համբակս համբացու-  
ցանել ճարակի, և զքաջուղէշ և զիհապատար հա-  
ւատոյն խայրիս թառամեցուցանել նկրտի : Ձեզ  
ասեմ, որդիք լուսոյ, մի տարփայք խաւարի, և մի  
զարտուղիք յարքայական պողոտայէն . և մի ստուն-  
գանեք ըորեքտառեան աւետարանսականսաւանդ փո-  
ղոցն՝ որք յերկնակառոյցն վերակուէն քաղաք զձեզ,  
և վատամիտ<sup>1</sup> յուլութե՛ք վերջանայք 'ի քաջամարտիկ  
նախահարցն արդարահրահանդ հետեւանաց :

Վանզի ահա վերայայտեցան այժմ 'ի տանս իմոր-  
դոմաց նորածին դառնութե զարմք, օցտողք ճըշ-  
մարտութեանն . որք կաթարոսք արտաքուստ երեխն  
դուարենին զգեստօք, և խաչակիր մարմնակրութե՛,  
և ներկերպին գաղանադէմք, խրթնազգեստք,  
խուճապողք, տգիտախողխողք, քծնաբանք, գաղ-  
տապատիրք, գողտրաբարբառք, ապաժուժախորհք,  
դժապանք : Որք անսարսափելի մնոք և անձնահան-  
ձար իմաստիւք ահա յաւակնեալք յարածգին առ-

բոլորիցն արարող և համագոյիցս փրկող Շանն ած. և 'ի թագէ տնօրինական կրիցն զմինն ՚ի բաց կապտեն զակն հաւատոյն, որպէս զի քըլորն՝ ուրացին զիըր կանակն զկիրառութիւնն. կիսափրկումն մարդոյն առաջելով մասնառութ դաւանիլ զփրկանակն Շանի զտնօրինակրութիւն :

Վարդ չարահաւեալ զխորհուրդս իւրեանց՝ սկզբնականին մատենազրել այսպէս . Ոչ, ասեն, տկարութ այլ կարողութք յաղթեաց մարտի թշնամոյն, իւրական վկայեն բանքն . « Ոչ աւարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կապի »: Եւ եթէ այս շշմարիտ է, յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաջթարգմանութիւն աւետարանին, որ յաղօթակայութիւնն զահաքրտնութիւնն պատմեն ամենակարողի Շանին այ, և զի հըրշտակէն քաջալերելն :

Օ ի՞նչ արդեօք այսպիսիքս կարծիցեն զիւրեանց ծայրակոտոր իմաստոն, աղէ ասասցեն մեզ մուրագիտ աղանդարելքն : Վարմնական կիրառութքն փրկանակն Շան վարակեալ հերքեաց զթշնամին մարդկան, թէ մերկ ածարուն զօրութքն . և թէ իւրական յատուկ բնութքն՝ զի՞նչ պէտք մարդոյն՝ զգեցման . որոյ կամակարօղ հրամանին ոչ ոք դիմակացիլ զօրէր : Առ զի ոչ զէական իւր բնութիւն ՚ի փորձ հանդիսի տուեալ, այլ զիւրական մարմինն յաղթող ախտի և ապականութեն և մահու ցուցեալ . և մարմնական կիրառութքն պատրեալ զթշնամին՝ ՚ի գործ պատերազմի կոչէր . զի իրրե առ Վդամն մատուցեալ՝ ՚ի փորձ որպէս յայ կործանեսցի պարտեալ : Վանդի ածական անուամբն պատրեալ զնախոկին մարդն բարիատեացն թշնամին, սակա այսորիկ մարմնոյն զգեցմամբ և յանձնառող զմարմնական կիրսն փրկանակն Շան իրագործելով, խարեալ զթշնամին պարտեալ ամաչեցոյց, և փրկեաց մարմնականոքն զմարմնականս :

Վարդ ՚ի վեր կառու զաւս մուաց սրտիդ առ նախաստեղծ մարդն . և որ ինչ յաղագս պատուիրազամնցութիւնն պատուհասակրեցաւ՝ իմաց զիւրաքանչիւրմն : Եւ նախիմաց լեր զտերունական օրինադրութիւնն . զամենայնմն վայելեսցես՝ ՚ի յոքնաբուսական տնգոյն .

բայց առ այդ մի հպեսցիս փայտ իմացական բարոյ ՚ի չարոյ : Աստանօր ծանիթ զերկիւղն սկիզբն ամենայն բարոյ և չարոյ , և որ ինչ ՚ի մարդումն առքնացեալն էին կիրք՝ և զնոյնս և բարեստեղծողն ած պատուի բանագրեաց :

Վրդ երկիւղ ՚ի բնութին , և աներկիւղութին ՚ի յանձնիշխան կամնն իմաց : Հաղագս այսորիկ անդէն առձեռնեալ օրինապահումն , զիւրական հաճոյիցն բարեխնամողն այ առ նա մեղադիր զմարդոյն առնելոյ զկամն : Խոկ նորա ինքնիշխանութիւն թիկնադրեալ զերկիւղ օրինացն , ուստի մեծափառութեան ցանկացեալ՝ յանհպելին մերձենայր փայտ ապարասնաբար , և գեղաղէշադիտակ զիսայրին կապտէր յաւակնագեղց : Խոկոյն ՚ի ճաշակելն ՚ի նախազգեցիկն արտամերկանայր ՚ի փառացն . և ապա ներգործէր նմա յիշումն օրինադրին . Հորում աւուր ուտիցէր յիմացական խայրոյդ , ՚ի նմին մեռանիջիք յաւուր :

Ակս այսորիկ յամենագիտէն այ երեսաց հարթուցեալ սաղարթապատ եղանիւր . խոսափեալ ընդյաւետուղէշ մնդովլին հրաժարել ըղձանային ՚ի մահաճրամնն պատուհասողէն : Դարձեալ ՚ի հեղահարցումն դատողին յուսակնեալ՝ անդիտակ զմի արդեօն կարծեցին ՚ի չհրամայեալ խայրին հպեցար : Տիրապատճառեալ աղեղնարմնէր , և զկողամարդն ցուցանէր առ ՚ի խայրիցն ճաշակման : Խոկ նա զարբանեակ չարին : Խոկ արդարագիտօղն ած զիւրականն վերածեաց զՃշմարտութիւն : Աշտամբէր զկամաւոր սիսալամնան նոյցա և զապերախտութիւն . պատուհաս նախակին զցաւաօքն ծնանիլն առաջատարփին . երկրորդ՝ զանիծադրութիւնն տայր ամայավայել բուսաբերին . երրորդ՝ երկիլին քրտմաքրելքն . ըրրորդ՝ մահադարձ հողամնալն : Հորմէ սարսուացեալ վրդովլիին ամենայն բանականացն սեռք . և հրաժուանայր տիրակարծ իշխանն մահուն :

Խոկ անսկզբնագոյ ողորմութեցն ած բարեգործվեալ՝ ՚ի վշատեալնն նկատէր նպաստատու օրինա-

1 Յօրինակին դաշտմակայէլու բառապահներին :

ԴՐՈՒՅՔ ՓԱՐԱԽԵԼ ՊՃՆՂԵԱԼՄՆ : || ԵՐԱՅԱՅՄԵԱԾ ԱՐՍ  
ԱՐԴԱՐՍ . ԱՌԱՔԵԱԾ ՄԱՐԴԱՐԷՍ ԱՋԱՔԱՐՈՂՍ . ՄԱԿԱ-  
ՆԵԱԾ ՊԱՊԱՐԱՍԱՆՄՆ ՊՃՆԱՂՋՆ ՀԱՐՈւԱՃՈՎՔ : ՅԵՏ  
ԱՅՍՈՐԻԿ ԱՄԵՆԱՅՆ ՎԱՐԺԻԳ՝ ՊՃՆՄԱՀ 'Ի ՄԵՍԱԿԱՆՈւ-  
ԹԵՆ ՄԱՐԺԻԱՅՐ ՄԱՀԿԱՆԱԳՈՒԽՍ ՎՐԿԵԼ Ազգ , ՎԱՅՐ-  
ԻՉԵԱԾ յանպարագրական ծոցոյ Հօր էական ԲՆԱՆՆ  
ԱՆՄԱՀԱԿԱՆ ԲՆՈՒԹԵՆ , և անսկզբնական էութքներ-  
Մաղաւարեցաւ 'Ի ՃՆՂԱԿԱՆ 'Ի ՄՔ ԿՈՒՍԵՆ . և ան-  
պարատեղի բնութեն պարունակատեղէր իննամսեայ  
Ժամանակաւ 'Ի ՀԱՄԲԱՐԱԿԱՆԻ ԿՆՈՂ . և զերկնայինն  
ոչ թողոյր թափուր տեղի . սաղմնառեալ միացաւ  
ընդ մերաստեղծակ բնութեն մարմնոյ , որպէս ինքն  
կամեցեալ գիտաց անձառաբար : || Ե զիւրն ստեղծ  
բնութի , այլ զմերն առստեղծեալ միացոյց իւր մար-  
մին : || Երն փոխեաց , և ոչ զեղեն շփոթեաց , այլ  
բնութք միացոյց ընդ մերումն , անբաժանաբար մնա-  
լով 'Ի նմին ածն ԲՆԱՆ բովանդակեալ զյարդանդին  
բնակիլն : || Մորկից մարդկան ճնաւ 'Ի կուսեն անա-  
պականաբար . և զցաւոցն ելուծ զդատակնիք , իմա  
զՃՆՂՈԳ ՎՐԿՈՂ . և կիրքն անախտք պատուհասառող  
կրիցն :

ԲՆԿԱԼ զքաղցն կարօտացելոյ դրախտին վայելից  
յագումն . զվաստակն՝ տարժանեցելոյ երկսն , և տար-  
փողի առաջին անաշխատելի կենացն հանգիստ . զծա-  
րաւն՝ պասքելոյ ըղձման աղենաբուղիս աղբերն ար-  
բումն . զքիրտն՝ անիծիցն քրտանն բարձումն . զեր-  
կիւղն՝ մահուանն երկիւղին ազատումն . զչարչարանսն՝  
չարչարանացն փրկումն . զմահն բարձողի կենացն  
փայտի՝ անմահութի . զյարութին՝ սկզբանն կարօ-  
տեալ՝ լինելութեն դարձումն . զհամբարձումն՝ զկնի  
պահպանութեն պատուիրանին խոստման ծանօթու-  
թեան :

ԴԱՐՁԵԱԼ իմաց 'Ի մեզ երախտագործեալ վրկա-  
նակն ԲՆԱՆԻ զմարդն եղանիլ : || Եւ զի մի ոմանք պի-  
տակապէս վարկանիցին զմարդեղուին ոն , և ոմանք՝  
սոսկ մարդ ՃՆԱՆԻԼ 'Ի կնողէ , յայտ առնէ՝ զՃՄԱՐԻՄՆ  
լինել մարդ 'Ի կուսեն ած՝ բացայայտելով գիտաս-

ցուք, ընկալեալ զարգացումն հասակի՝ մարդ վերայայտիւր մեղ զինքն։ Ետեցող զշար՝ տղայն, և ընտրող զբարին ըստ Խսայեայ, վկայէ ած Ճշմարիտ գոլ։ Քարոզիւր դիասնունդ լինել զլարկիոնի սանձեաց զաներասանակ բերանն, որ առաջօքն դաւանէր զլինելն մարդ։ Խսկ ՚ի կուսական ՚ի ստեացն ցնդել զկաթն՝ զլամոստացւոյն ցամաքեցոյց զդժընդակաբարբառ զլեզուն։ որ չնորհագործ որդի անուանէր, և ոչ զլանն ած՝ մարդ լեալ դաւանէր։

Վաղցեաւ ՚ի փորձարկութիւն անապատին, ստուգապէս զինքն վերայայտելով մարդ։ Փորձպիտին հարցագիտութիւն կոչաւորութեալ բացայայտելով զոչիմացականն գիտակ առնել զնա, և զնախապատիրն ամաչեցուցանել յոյս։ որ զառ ՚ի հանէն կենագործութիւն ոչ գիտէր մահացելումն լինել։ այլ Ճաշակմանն մահածութեալ միայն հրծուանայր սխալանացն սադրիչ։

Վաստակեցաւ իսկապէս։ ինքն գիտէ՝ փորձագործութեալ վկայեալ զեղանիլ վասն մեր մարդ։ Եւ զի զնա զնոյն՝ ած ծանիցուք, տիրաբանեալ ասէր, առ իս հետեւեցարուք, տաժանեալքդ, և ես հանգուցից զձեզ։

Երարաւեցաւ արդարապէս։ և ինքն գիտէ մերով պիտաւորութեան ծանուցանիլ զինքն գոլ մարդ Ճշմարիտ։ Եւ զի զնա անմահութեալ իմասցուք աղբիւր, ծարաւականացն պարզեել ասաց կենդանի ջուր, և վտականալ աղբերց անմահականաց՝ ինայն հաւատացելոց իբրև ՚ի Ճշմարիտն ած։

Տրտմեցաւ Ճշմարտապէս, որպէս ինքն գիտէ, կատարեալ վկայելով զինքն տնօրինացեալ, բանական ունելով զոգի և զմիտս։ Եւ զկիսամարդն դաւանողաց կարկեաց զբերանն։ և զնախաստեղծին մահաժառանգութեան երարձ զսուգ։ Երկեաւ ՚ի մահուանէ, որպէս ինքն գիտէ, Ճշմարիտ յայտնելով մեղ զինքն եղանիլ մարդ, և զլանինեցոցն ընդբերանեաց զլեզուս։ որք ստուերակերպութեան զմարդեղութիւնորին փրկանակն Շանի։

Յայսմ տեղւոջ ընդդժեալ դիմամարդք Ճշմարտութեան՝ Ճառ արկեալ յեղանակեն։ Երկիւղ, ասեն, ոչ է ՚ի սկզբնեղուի բնաւորեալ, և ոչ է այ գործած,

այլ վերջապարուկներգործեալ յարանայ ախտ : Արդ  
ով որոշողք ստութեցն , զմէ մոլորիք 'ի բոլորիցն  
արարողէ , և զսահմանեալ ձառագրութիմն վրդո-  
վալից գործականութեք փութայք կատարել . քանզի  
որպէս ձերունդ վկայեն ձառք , ախտիւ առնուք :

Այլ ով յամառողք , 'ի նախարարութեն իմացա-  
րուք բարեգոյակ ստեղծեալ կամն և անձնիշանա-  
կանս , ընդ նմին բնաւորեալ և երկիւղ տիրափառա-  
կան :

Արդ որպէս յարդարընկալ կամացն ինքնատի-  
րութեք արտազանցեաց , նմանունակ և մահընկալ  
պատուհասիւ բնաւորականաւն զարհութեցաւ եր-  
կիւղիւ : Քանզի ուր եկամուտ ներգործի երկիւղ ,  
անդ արութի ոչ անուանի : Ա ասն զի քաջութի է՝  
զբնաւորականան փոխազործութեք պարտել , զայն՝ որ  
իւր կամաւորութեք ընդ բարւոյն բնացաւ :

Ուստի եթէ ոչ ընդ բնութեն առգոյացեալ եր եր-  
կիւղն , զիանք անբնականաւն զարհութեր . կամ որ-  
պէս բարեստեղծողն ած՝ զոյն ընդունակ՝ պատուհա-  
սակոծ առներ , թէ “ Երկերուք 'ի տնել այ ձերմէ ” :  
Այդ զարհութեցն դու զտունկ , վրդովեցն զգետս ,  
հայցեաց բարեգործուի առ 'ի նոցանէ . յայտ է թէ  
ոչ հնազանդին . վասն զի ոչ է 'ի նոսա բնաւորեալ  
յասացելոցդ : Արդ իմա զերկիւղն բարւոյ առիթ-  
լեալ : Երկիւղ 'ի տեառնէ պատիւ տն . երկիւղ 'ի  
մահուանէ՝ արդարութե գործարան : Բայց մի ինձ  
աստ զանյուսութեն ներածցես զերկիւղ , ով դու , այլ  
զբնաւորականին :

Քանզի յերկաւուր նախասացութեք պատմեաց վե-  
րակենցադիլ 'ի փրկանակն իան : Արդ եթէ ոչ եր-  
կեաւ առեցելովն , յայտ է թէ և ոչ մարդացաւ . որ-  
պէս Ա անիքեցիքն վկայեն : Եւ եթէ 'ի նախասացե-  
լոցդ ոչ յանձնառեաց , ապա ոչ ուներ բանական ոզի .  
որպէս կիսագաւանն ասաց Ապաւղինար զաւոդիկեցի :  
Դարձեալ 'թէ ախտ ներածես վարկանել յերկիւղն ,  
սակա էր ոչ 'ի քաղցն և 'ի ծարաւն և յընդունելուի  
կերակրոցն նոյնպէս վարկանիցիս . քանզի մեզ նմանի  
քաղցեալքն և ծարաւիքն ընդ հաշանօք անկեալ  
աժգունին , և պակասին առ 'ի նոցանէն ուժեղու-

թիւնքն . . .՝ իսկ առլցեալքն մարմնական պիտոյիւքն՝ առողացեալք յօրանան , և տուորի 'ի նոսս բոց ախտիցն : Իսկ փրկանակն Շամի ոչ այսպէս կիրք . քանզի յաղագս մարմնաւորութեն բացայայտելով զինքն գոլ Շշմարիտ մարդ , զբնականն մեր առաջի արկեալ՝ քաղցեաւ և ծարաւեցաւ , անընկալ 'ի հաշանաց և մաքուր 'ի մեղաց՝ ածն Շամ մերառեցելովն . քանզի ոչ գործեալ դատապարտական , սակս էր մեռաւ , եթէ ոչ մահուամբն իւրով մահուն գործեաց մահ : Դարձեալ 'ի մերում մահուանն ապականուի և եղծումն գործառնի . իսկ ածն Շամ մերառեցելովն մահացեալ , անապական և անմահ մնաց նովին մարմնովն : Վանզի զմեռանին ստուգապէս՝ հիւսանիլն կտաւովն և 'ի տապանի ներծածկիլն վկայեն Շշմարտութեն .<sup>3</sup> և 'ի զինահարիլն բխումն արեանն՝ պիտառոցէ ըզկենդանին մնալ : Վանզի ոչ զէականն իւր բնութի , այլ զմնօրինեալն արտափլեաց ողի . անքակ և անբաժին մնացեալ 'ի բանական ոգւոջն ածն Շամ 'ի նմին մարմնի բնութեն :

Վզէ ասասցեն մեզանձնահամնարքն , և Շշմարտութեն անիմայք . երկիւղ 'ի հրանիւթ բնութեն անմարմին հոգեղինացն բնաբար՝ առողոյացեալ է , եթէ վերջաբուսակ ախտակրին . և եթէ ոչ ընաբար , զիարդ անդըլակի փառատրեն զէականն ած անընդալքն՝ երկիւղի : Վպա եթէ 'ի գոյեղուեն առլցեալ ումին վերկիւղն , ամենից բացայայտ է՝ թէ անախտքեն : Ուստի ամենայն անկարութեն սկիզբն արտայալ տեցաւ աներկիւղութիւն , որում նախկին բանսարկուին պիտառոցէ անկումն , և երկրորդ՝ նախծին մարդոյն : Իսկ եթէ զառ 'ի բարւոյ միայն վարկանիմք ունել զերկիւղն , նովիմք իմասցուք և զառ 'ի չարա-

1 Յօրին . բառ մի անընթեռնել :

2 Յօրին . յան :

3 Յօրին . Հայութական :

4 Յօրինակին անընդան :

բանացն : Ա ասն այսորիկ արութեղի անուանի քաղցիւ քաղցի համբերել, և երկիւղիւ երկիւղի :

Այս զարհուրի, ասեն, գրկընկալ մանուկ. յայտ է ասեն, թէ եկամուտ բաղկանայ երկիւղ : Ի՞ւ քեզ ասեմ, որ զծաղրականսդ բարբառիս . նա բանաւորութին ոչ ապաքէն ընդ սկզբնեղութեն առքնացեալ է՝ ի մարդումն . սակայն թերահասակ մարմնոյ գոյացութք ոչ զօրեղանայ քնարգել բան, այլ զխժական բառ երգէ ձայն . նմանապէս բաղկացեալ իմասցիս զերկիւղ . և մի յաւէտաղիւղաջեալ զանգիրսն բարբառելով յախմարացն յագաւմունս : Այս ոք տաժանեալ յերկս՝ արիւն վիժաքրտնի . և եթէ մարդում, ասեն, ոչ բաղկանայ, զիարդ արդեօք զէ՞նէ իրդւոյն այ իշխեսցէ ոք զայս բերանաբացել : Ի՞րդ, խօլացեալդ 'ի չարափառութեղ, յումէ լուար զանբնակ գործոյդ լուր . գրումն աւետարանին որպէս արեան ասաց տարացուցաբանութք քիրտն, այլ ոչ թորումն անզինահար արեան :

Ի՞րդ կահառք բանիցն յուզեալ՝ դարձեալ վիճաբանին : Եռակի ճառաւագրեալ աւետարանական տառիցն պատմութիք անմիաբան 'ի միմեանց գտան . յուոց զմին ընտրեալ գովեսցուք, և զմիւնն հերքեալ արտաքսեսցուք 'ի սրբումն կոչարանէ : « Վանզի բազմերգելին Կրիգոր առաքելաքարոզ նահատակն Վանի զամենայն աւետարանական պիտառութիմն ճառագրեաց՝ զոր ինչ յաղագս այ Բանի : Մնօրինական կիրառութ պիտառեր . իսկ զահաքրտնին և ոչ յատուկ ձայնիւ յիշատակեաց . ուստի յայտ է, ասեն, եթէ հնապատմութիւ աւետարանին ոչ է ընդունակ : Եւեթէ ոք՝ քան զնախաքարոզն Կրիգոր խորհեսցի լինելիմաստուն, և այլինչ նորաձեսցէ ճառել, այն պիսին դատապարտեալ է ասեն :

Ի՞րդ ո՞ւ խարողորսակ թշնամիք, ներբողելով ձեր զշշմարտաքարոզ վկայն Վանի զյոգներջանիկն Կրիգոր՝ սրտաղաղակ բանիւ սփածանել մերկութեն ծածկոյթ, դովին այդու բանիւ ցուցից յայլումն տեղւոյն բամբասանս յարդարեալ ձեր նախադրուատին Կրի-

<sup>1</sup> Յորինակին ա, թ. ա. :

գորի, այլ ոչ գովեստ։ քանզի որթողոքսական վեր-նադիտօղ քնազգեստ նախահայրքն գումարեալք՝ ի ՚ի, ի կիապողիս՝ կանոնադրեցին երկակի հնգեակ և եղակի քառեակ թուով միայն՝ ի սրբումն կոչարանին ընթեռնուլ թուղթս զածաքարոզ առաքելոյն Պաւ-ղոսի։ և ՚ի նորապատում գրութեն զնոյն շարագրու-թիւն վերառեալ է։ Իսկ բարեդրուատելին Պրիգոր զառ ՚ի հարցն լրեալն և ոչ մակադրեալ ՚ի նոր թարգմանութիս, վկարանութեք ճառագրեաց, թէ Կնօրէն իշխանն իբրև ածանալն կամեցաւ, ասկ մա-քուր Կռաքեալն, զամենեսին ընդ մեղօք գրաւեաց։ և այս ՚ի հնապատումն տառմն վերատառեալ է, այլ ոչ ՚ի նորապատում շարագրութեն։

Վրդ եթէ սակս ոչ գծագրուե՞ ՚ի նորաբեր թարգ-մանութեն հնազում աւետարանին իբր զոչ Ճմա-րիտ ՚ի բաց ընկեցեալ մերժեսցի յեկեղեցւոյ, ընդ նմին խոտեալ բամբասի և մեծ մակադիտօղն Պրի-գոր ստուերաբանութեք գրուատեալն ՚ի ձենջ։ Վպա-եթէ Ճմարտապատումն Պրիգոր ոչ ըստ համօրէն աւետարանական կարգաբանութե գլխոցն բաղդա-տեալ շարագրեաց, այլ յատուկ պարզմուութեք ըստ ախմարացն լսելութեք բաւել զառժամայն պիտոյիցն սակաւամանութեք վկայութիս առաջի եղեալ մար-գարեական տառիւք հաստատեր, արդ զմէ անփապ լինիք զնմանէ պատճառադրութեք։ Վղէ ՚ի յիշումն եկեսցէ ձեզ իսկապատում տարմարանիցն գործա-դրութիւնք՝ զոր ինչ յաղագս նորին բանի հետե-եալ են։

Ուստի նախկին յոլովից գոլով հայր Ճմարտասեր անձանց՝ տէր Ռարսիլիսոս կապադովկացի՝ ոչ ՚ի վտանգ-ինչ ակամայից ճառեալ, այլ գեր ՚ի վերոյ դաւոդի-կեցոյն երթալ Վպողինարի կշտամբէր, որ կիսամաս-նութեն դաւանէր զանօրէնութի փրկական Ռանի։ Ես զւարչարանսն, ասկ, և զտրտմութին և զզոփալն, և որ ինչ միանգամանոցին կցուրդ յաւետարանականմն կայ, այ Ռանին ասեմ. և ոչ բնուե ածութեալն, այլ միաւորութեն։

Արքին զուգաստղակից և որ՝ մականուռն՝ Կրիդոր ածա  
բանն արժանաւորեցաւ կոչիլ, առ եւնումիացին Ճա-  
ռեալ ասաց. Օխօսեն և զգարհուրեն յաղագս քո  
թափեցելոյն իմաց մնօրինարարու՝ Կարձեալ յերկակե-  
ռակի յեզում Ճառի զամենայն մնօրինականն լու-  
ծականութը յեղանակեալ յեզակին հնդետասամ  
թուականութեանցն ազատաբանեալ ասաց համառա-  
տարար, թէ Եւ քրտնեն արեան ցուցականությա-  
զագս մեր չարչարեցելոյն ծաներուք: Կարձեալ՝ ի  
յաստուածայայանութե Ճառին մակագրեալ ասաց.  
Ըստ որում քաղցեաւն և վաստակեցաւն և արտա-  
սուեաց և երկեաւն օրինօք մարմնոյ:

Ամին համասօղ և երջանիկն Հոհան ներբողա-  
նունն ոսկերերան՝ կարգաբանութք զաւետարանա-  
կան թուեալ բան. Որպէս զի մի կարծեօք անուա-  
նեսցի մարդեղութիւն յածն Շամնի, սակս այսորիկ  
ստուգապէս աղօթէր առ Հայր՝ ի կոհակին ձիթե-  
նեաց. և քրտնեալ թուրեց յորդահոսակ առուս որ-  
պէս ապացուցի արեան իջման:

Համաձայնակից գոլ սմա և արդարածերն Եպի-  
փան կիալրացի. Վարժնաւորապէս իմացարուք, ասէ,  
զահաքրանութին, և մի սոսկ հոգեպէս. իսկ զառ  
՚ի հրըշտակեն զօրանալն զմովսէսականն իմացարուք  
աւարտել զօրհներգական մարդարէութին, երկըր-  
պագել նմա Որդոյն այ, և ուժեղացուցանել զնա  
հրեշտակացն ո՞ն: Օ անուանական զօրութինն վսա-  
մարանութք փառաւորել՝ մաքուր սպասաւորաց զօ-  
րութի անուանեաց, զնորայմն գովարանել՝ ի վերայ  
մահու զտիրականն <sup>2</sup>, և զգժոխոցն լուծանել զպե-  
տութիւն:

Երդ դու, ո՞վ յօդաբան և զբայահուք <sup>3</sup>, իրը գե-  
րաթուեար մտացաթե հանճարով քան զերկնագու-  
շակ <sup>4</sup> նախահարսն, որք հիմունք եկեղեցւոյ և խա-  
րիսխք հշմարտուե անուանեցան. որոց պահապանք՝  
հրեշտակք, և զօրավար՝ ինքն ո՞ղին. որք վկայեալք

<sup>1</sup> Յօրին. Կապառաշացին և Խոհանուն:

<sup>2</sup> Յօրինակին ՚ի Շուայ և հահ պահանձնաւուն:

<sup>3</sup> Յօրինակին Կը ուղահաւուք:

<sup>4</sup> Յօրինակին Կերինագուլսի:

յաղագս Վրիտոսի նահատակեալք , դլխափա-  
ռեցան յառաքելական աստիճաննին : Առմ զրել թէ  
եօթն՝ հարիւր ամլիեալ յետ չարչարանաց Որդւոյն  
աստուծոյ . և այսքան ժամանակք յանդիտութեան  
գնացին բոլոր մանկունք եկեղեցւոյ . և միայնարդ  
ևս 'ի վախջան ժամանակաց նորուաք դուք և նորա-  
ծանք գտայք Ճշմարտութեանն , երկրորդ ապաւղի-  
նարիտք . որ նորաձայն աւանդութեամբք նորածին  
բուսուցեք արմատոց դառնութեան փուշ հրաժա-  
րակ անշիջատուոր բոցոյն :

Վարդ Տիմ վարիք զարտուղի խորհրդովդ . եկայք  
ընդ մեզ խոստովանեսցուք զառ 'ի կուսէն ծնեախն  
ածն Շան՝ Ճշմարիտ առեալ մարմին անփոփոխ աս-  
տուածութք , անյեղլեզուկ միութք , անորիշ ածու-  
թեամք , և եղակի դէմ . անբաժ 'ի կրից , անապական  
մարմնով , մաքուր 'ի մեղաց , անեղծ 'ի չարչարանս ,  
և չարչարեալ խսկապէս : Խւ անմահ բնութք , և մե-  
ռաւ Ճշմարիտ մերունական մարմնովն . աներկիւղա-  
կան ածութք , և տրտմութք զանդիտեալ 'ի կամա-  
ւոր չարչարանսն մերառեցելով հոգւովն : Վարիւր  
կենաց գոյով բնութք , և ծարաւեալ ստուգապէս  
մերառեալ մարմնովն : Շալորիցս արարող , և ոչ վաս-  
տակեալ ըստ մարդարեինն . և 'ի միօրեայ պողոտայնոյ  
սամարացոց վաստակեալ հանդի մերատոհմակ տե-  
սակաւն :

Համագոյիցս եղելութեան անկարօտ դարմա-  
նիչ , և քաղցեաւ ստուգապէս մերակերպ առեցե-  
լովն : Վստարօղ և անբովանդակելի բնութքն , և 'ի  
գիրկս բովանդակեալ մերահասակ տղայութքն : Վէ-  
երեւոյթ անսկզբնութք , երևեցաւ մերագոյակ մար-  
մնովն . անեղ անըմբոնելի մշտնջենաւորութք , սկիզբն  
առեալ մարդեղութք , և ըմբռնեցաւ մերանիւթ բը-  
նութք : Այս ոչ պակաս 'ի մերոց կրիցս , և անսախտ .  
սա ոչ նուազ ածութքն , և անմեկին տնօրինեալ բը-  
նութք . սա ամենից կամաւորութք համբերեալ տա-  
րաւ , զի բոլորումն գործեսցէ փրկութի մարդոյն :  
Օսորա զանձականսն դաւանեսցուք բնութեամք , և

<sup>1</sup> Յորինակին եղեաւ էր ջ. Քոիսանակ գնելոյ 2 :

զմնորինականս կամաւոր յանձնառութեամբ . Օսա  
բարերանեսցուք գոհացողական երգասողութեամբ .  
Փառք հօր էականի , որ զմիածինն իւր առաքեաց 'ի  
փրկութի աշխարհի . փառք համագոյակցին , որ վո  
մեր մարմնացաւ . փառք անսկզբնակից հոգւոյն , որ  
ետ զանգիտութիւն որդոց մարդկան : Փառք միաս-  
նական նր Աշբորդութեն յաւիտեանս . ամէն :

# ՆԱՐԵԿ ԵՐԵՎԵԼԻՈՅՆ

## Թ Ե Ա Գ Ա Բ Ա Ս Ւ

ՃԳՆԱԼՈՐ ՄԻԱՅՆԱԿԵՑԻ  
ԵՒ ՎԱՐԴԱՊԵՏԻ

ՆԵՐԲՈՂԵԱՆ Ի ՍՈՒՐԲ ԽԱԶՆ ԱՍՏՈՒԱԾԵՆԿԱԼ,

ԵՒ Ի ՏՆՈՐԷՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌԻ

ՄԵՐՈՅ ԵՒ ՓՐԿՉԻՆ ՅԻՄՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ

**Օ** ԱՀԱՏՈՐ և զանքննելի խորհուրդ անհասու-  
թե արփիահրատ ածային ոք նշանիս, ով  
ածասէրք, դուն ինչ սղական բանիւք արտայայտեալ  
ներբողական և պանծալի ձահողասաց խորհրդով,  
հոգեպարզե ածիմաստ չնորհօք կենդանագրելով,  
համառօտարար հրատարակեցից յոքնօրինական յու-  
սով ենթադրութք՝ 'ի Վ՞ն : Եկայք ամենեքեան ուղղ  
դափառ հաւատով և ուռթիւ ստորասացութք եր-  
կիր պագցուք գերահրաշ ածային սուրբ խաջիս, 'ի  
սմա բեկուեցելոյն բազկատարած շարամերձութք և  
անսակի տնտեսութե էական ընութե Շամին այ :

Որ զնախադասական ապացուցութեանցն զմակ-  
երեւուի բաղադրեալ հոգիաներկ և մարմնաքնար եր-  
գողին, 'ի վաղնջուց հետէ հաւեալ ձայնէր՝ զսերկա-  
ծին էակն զ'ի վերայ փայտին բաղադրական գերա-  
ծութքն՝ արտաշնչացեալ անտղելի ինքնակայուքն,  
ձիրելով 'ի վերայ հեթանոսաց նշան և լոյս երե-  
սաց, անստուերական իրակեալ ներգործիչ ած ելով  
Շամն : Ոչ իբր որումն պատուական գոյից նիւթից  
երկնայնոցն առեալ առ մեզ ժամանեաց զհաւաս-

տութեն զենթադրութե զենսամիլ 'ի վերայ մահաբեր փայտին՝ առթելով զնոյն փրկութե օձան<sup>1</sup>, զնիշ գերապանծ փայտին գիտութե, որցեալ յանապակ և յանուշակ մշտնջենաւոր և յանվախճան ուրախուինս երկնաթռուիշ հաւատով 'ի ՞՛, այլ 'ի վեր քան զսեռական էիցն գերազանցեալ վսամական վեհագունիցն իմանալի մակացութեց իմաստիցն՝ յանպարագրելի և յանպարիմանալի ածային խորոցն ելովդաշնաւութեան ընդ փայտին սևեռումք, զթնամիսս իւր զմեղ համայն իսկ և զամենայն աշխարհ յինքան բաղարկեալ, արգահատութեն տեսողական տառիւքն առտուեալ զնոյն, անանջատելի միաւորութեն առկացոյց առաջի ՞օր :

Եւ զարտամերկացեալն 'ի լուսաւոր այ ձեռայն ստեղծեցելումն աներկիւզական ընութեք և անձնիշ խանական կամօքն՝ ածական անուամքն պատրեալ բարիատեաց և ումակալթնամւոյն, 'ի ձեռն մերակերպ առեցելոյ մարմնոյ զգեցմամբն՝ ներգործելով փրկական Շանին, կապտեալ ամաչեցոյց զհակառակամարտն, և փրկեաց ածախառն խայրին 'ի վերայ փայտին ախտական առբերութեն՝ պատսպարեալ միշտ յարատեակ ընդ հրաբուն հոյլն՝ կահառաձեմէիցն բազմադասելոցն :

Եւ ետ ընդ ետ վերտարեալ սևեռագոյն և մակասիր ենթակացութեն, տիպատեսակ անշիռթելի ընութեք ածութեն մակադրեալ 'ի քառեակ փայտն, զտնօրինեալն արտաշնչեաց հոգի . զինահարեալն 'ի տիգարուխ և վտակահոս կենդանութեն, 'ի մեզ զորով աղբեւըն ջրոյ խաղացելոյ յաւիտենին կենդանութե :

՞ անզի անշնչացեալ մարմննն՝ ստուգապէս պիտառութեն կենդանատեսակ ածացեալ մարմնովն, և երկախումք ներմարդութեն, դիտապետական իշխանութեն 'ի բացորոշութեն ազատ գորով 'ի մեռեալս սակ կարծեալ երկիրւզին մահու ունակութե, ընդ մեզեղեալ ած Շանն, ինքն անջատի որոշմամբ յերկուս տեղիս, արագերեալ յորջորջմամբ, և առտուեալ զանձն 'ի ձեռս ՞օր. վասն զի իւր եր անտեսա

կանա՝ ընդ որում անշփոթ բնարար ներմիացեալ և խառնեալ շարայարելութն ըստ որումն բանի : «Քանզի անյեղօրէն և անքատակ է ածահրաշ ներանձնաւոր մարմինն, և տղարար կանոնաւ բովանդակի և չափի :

Օ նոյն պատկանեալ տես յաւետարանին ասեր, «Իշխանուի ունիմառութնել զանձն իմ, և իշխանուի ունիմմիւս անգամ առնուլուն լրով և անդ ախտակրթեալ շնչովն առ ՚ի դժոխաբնակ մարդկան շունչն հիւսանի ըստ մեղ առամսակաց, և ՚ի տապանի ներծածկիլ մարմնով, ՚ի մարմնածածուկ ներքնադոյն դժոխս, վերակենցաղեալ կենդանացոյց միահաղոյն զամենեսեան իջմամբ առ դարապետական արդելեալ հօգիսն . և ռահ գործեալ ՚ի նմա ՚ի ձեռն լուսածին գերապանծ նիշփայտին : Հյորում լուսաթռուիչ սերորեին ՚ի գիշերին այն պատահեալ կամսանցն, վերաբերէր առ նոսա քարոզութե՛ք զիսաւեցելոյն ասելով, «Օ ի ինդրէք զիենդանին ընդ մեռեալս », որ բնարար առասութքն ձիրեաց զիենդանութի ամէակացս :

Արոց և խայտացեալք ընդ ընծայական շնորհադրուատ բացատրութիւն զուարթնոյն, առ ընդհատեկաւորութեն խաւեցելոյն զյարուի . ուստի և զնոյն իսկ զդաւանութեն ունակութին անվթար և սուրբ հաւատով ուրցեալ<sup>3</sup> յած ձշմարիտ, աստանօր ոգեալ արտասանեցից արփիահրաշ և քրիստոսազարդ ողբ նշանիս :

Վկանին այ : Ար փոխանսակ նախկի տնկոյն, որում սաղարթախտակ զաղացած ածաղիկ և կենդանատեսակ զօրութիւն, իմանալի պտուղ, անբան կենդանի, քառաթե նշան, անբարբառ բարեխօս զքէն կախեցելոյ ։ Իւնին այ : Ար փոխանսակ նախկի տնկոյն, որում սաղարթախտակ պտղովն վայելացեալ, չքնաղազարդ տեսակաւն զունեալ, զարմանագեղ և առոյդ գեղեց կութե տենչալի փափաքմամբն, կամակ և ախորժելի առ ՚ի տարփումն տեսողացն հայեցուածովն<sup>4</sup> յօրինեալ, յաւետարեր շեշտակի արդահատութին զինդութի

1 Յօրինակին աւունուն :

2 Յօրինակին աւունուն :

3 Յօրինակին աւունուն :

4 Յօրինակին հայուսունուն :

առքեցեր, դառնութիւնաբեր ելով բուժկութեն, առգիտաբար դաւողութե՛ պատիր պտղովն կաղակարծելի բաժամտութեն, ամայացեալ տարասողմամբն արտակացելոցն յածաստեղծ և յանձնառելի փառաց ածուեն :

Ո՞վ ճշմարիտ ածային տունկ, նախաբոյս և ինքնազոյակ կառուցմամբ պատկանեալ, սորեկ պտուղ, և յետածին ժամանակաւ ձեւացեալ քառատեսակ՝ որ նշան, և անբարբառ բարեխօս զքէն հեղուսելոյ անմահ Շամին այ: Ո՞ր իբր ՚ի ձեռն միոյ մահու՝ միահազոյն բազմաձարար անմահ ստացեալ խաւարամութե նսեմացեալ շամանդաղութե՛ աղջամղջով ստուերամածեալ, փանաքի անքատութեն տարալածեալ, տարապատկանութե՛ յածատեսակ արարչատուր փառաւորութեն ունակ եղեալ յանցանաց նախահօրն, խսկապէս և զնոյն կերպատեսակ նմանութիւն ստացեալ զմահացելոյ ծառային անանջատելի սիրովն, բոլոր ՚ի Ճըրորդուեն և անորիշ ՚ի ներմարդութեն՝ յարահիւսեալ ՚ի վերայ քո մեռանի անտղաբար արտաշնութեն կենդանին՝ կենդանուի շնորհելովլինավին եղակի<sup>1</sup> բնութե՛ ածութեն:

